Ընդ բոլոանէն չորացաւ. Բոլանելուն պէս չորցաւ:

ԸՍՏ

212. Հ. Ըստ, տրական հոդիով ի՞նչ կը նշանակէ:

Պ. Ըստ, տրական հոդիով, համեմատ (կէսօրէ) կը նշանակէ, զոր օրինակ.

Արասցուք մարդ ըստ պատկերի մերում. Մեր պատկերին համեմատ մարդ ստեղծենք: Եղիցի ինձ ըստ բանի քում. Թող քո խօսքիդ համեմատ ըլլայ:

213. Հ. Ըստ, անհրեւոյթի հետ ի՞նչ կը նշանակէ:

Պ. Ըստ, անհրեւոյթին տրականովը կամ հայցականովը, ապիճանաքար, չափվը կը նշանակէ, զոր օրինակ.

Ըստ պահանջոյ ամացն. Տարիներուն պակսելուն չափվը: Ըստ յաճախելոյ արմտեացն. Արմտեաց չատնալուն չափվը: Տեղիք ինչ են ծովու, որոց ջուրն ըստ աճել լուսնոյ ածէ, և ըստ պակասին՝ պակասէ:

214. Հ. Ըստ, անորոշ հայցականով ի՞նչ կը նշանակէ:

Պ. Ըստ, անորոշ հայցականով, կը նշանակէ

1° Տեղւոյ կամ իրի մը սահմանէն անդին, զոր օրինակ.

Անցանել ըստ բլուրս և ըստ ոչխարս ըստ այս. Այս բլուրէն և այս սահմանէն անդին: Ելին ըստ փոքուն. Գաղաքէն անդին ելան: Ըստ երէք անդր ոչինչ է. Երկրէն անդին ոչինչ է: Ելեալ արտաքս ըստ սահմանս երկիւղին Աստուծոյ. Աստուծոյ երկիւղին սահմանէն անդին ելնելով:

Այսպէս կըսուի,

Ելանել ըստ պատան, ըստ հրաման, ըստ չերեն ուրուք, ըստ չափ. Ըստ ակն անկանել. աչքի տեսութենէ անդին իյնալ, այսինքն՝ ալ չերեւնալ:

2° Ամեն մէկ, մէջէ ելլուխ, զոր օրինակ.

Տալ ցորեան ըստ քերան. Բերան, այսինքն՝ մէջէ ելլուխ ցորեն տալ: Ըստ պատառս աղգայն՝ ոչխար ըստ երէք. Ամեն մէկ ցեղէ՝ պատառ մէջէ ելլուխ ոչխար մը:

215. Հ. Ըստ, առանց է ի բացառականով կը նշանակէ ի՞նչ:

Պ. Ըստ, առանց է ի բացառականով, յաջորդութեան նշանակութիւն ունի, զոր օրինակ.

Ջթագաւորան որ ըստ նմանէ էին. Անկէ ետքը եղող, կամ անոր յաջորդող թագաւորները: Եհաս վճիռն Աստուծոյ 'ի վերայ Ադամայ և որոց ըստ նմանէ էին. Ադամի և անկէ ետքը եղողներուն վրայ Աստուծոյ վճիռն հասաւ:

Այսպէս կ'ըսուի.

Ամ ըտ ամ. Մի ըտ ինչ. Այր ըտ առնէ։

216. Հ. Ց նախադիրն ի՞նչ խնդիր կ'ուզէ եւ ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ց նախդիրը միշտ հայցական խնդիր կ'ուզէ, եւ կը նշանակէ. 1° Մեկնում, ել, ասեմ, հարցանեմ, պատ, եւ ուրիշ քանի մը բայի հետ կը դործածուի։

Ասէ ցնոսա. Ասէ ցորդի իւր. Ասէ ցձառայս իւր։ Հարցին ցնա. Հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս։ Խփեալ զդիրան ետ ցպաշտօնեայն և նստաւ։

2° կը նշանակէ դնելը.

Երթիցուք ցԲեթղեհէմ. Մինչեւ Բեթղեհէմ երթանք։

217. Հ. Ուրիշ նախադրութիւններ ի՞նչ խնդիր կ'ուզեն։

Պ. Ուրիշ նախադրութիւններէն ամենք սեռական հոլով խնդիր կ'ուզեն. ինչպէս պետրոս պատգամներ ցուցնող նախադրութիւնները, որ օրինակ, առաջէ, ընդ, ի վերայ, յանդիման, ի ներքոյ, պատուոյ, ի դէմ, յայնկոյս, յայսկոյս. նոյնպէս յետ, փոխանակ եւ վասն նախադրութիւնները։

Ոմանք տրական կ'ուզեն, ինչպէս. ընդդէմ, հանդիման, հանդերձ։

Ոմանք բացառական կ'ուզեն, ինչպէս, հետէ, քաղաք, քան։

Ոմանք գործիական, ինչպէս, հանդերձ, շուրջ։

Դ. ԲԱՑԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐը

218. Հ. Բայերն ի՞նչ հոլով խնդիր կ'ուզեն։

Պ. Բայերն, ըստ պահանջելոյ խօսքին ի-

մաստին, կ'ուզեն երբեմն խնդիր պրակտ, հայցական, բացառական եւ գործիական հոլով մը։

219. Հ. Բայերուն խնդիրները քանի՞ կը բաժանուին եւ ի՞նչ կը կոչուին։

Պ. Հայերէն քերականութեանց մէջ սովորութիւն եղած է բայերուն խնդիրները երկուքի բաժնել, 1. ներէ խնդիր, եւ 2. բնութեան խնդիր։

1. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

220. Հ. Սեռի խնդիրն ի՞նչ է։

Պ. Սեռէ խնդիրը կ'ըսուի այն հայցական հոլովը որ ներգործական բայերուն գործողութեան առարկան, կամ թէ ըսենք, ուր բային ըրածն է, եւ կը ճանչցուի ը՞նչ, ը՞նչ բան. ուր՞, նկո՞ հարցմամբ։ Ցոր օրինակ,

Սիրեացես զընկեր քո. Քու ընկերդ սիրես. Եհաս զձառայ քահանայապետին և եհատ զունկն նորա. Քահանայապետին ծառան զարկաւ և անոր ականջը կտրեց. Ձգեաց զնա յագարակ իւր. Ձանձ իր ագարակը ղրկեց։

Առաջին խօսքին մէջ ընկեր հայցականը սիրեացես ներգործական բային սեռի խնդիրն է, քանզի սիրելուն առարկան, կամ սիրուած բանը կը ցուցնէ, ևս ը՞նչ, ուր՞ հարցմամբ կը ճանչցուի, որ օրինակ. Սիրեացես, սիրես. — ը՞նչ. — ընկեր քո. ընկերդ։

Երկրորդ խօսքին մէջ ալ ձառայ եւ ունկն հայցականները սեռի խնդիր են եհաս եւ եհատ ներգործական բայերուն, քանզի զարնելուն եւ կտրելուն

առարկաները, կամ զանազան և կարուած բաները կը ցուցնեն։ Եհոբ, զարկաւ. — ո՞վ. — ջնջաց քահանայապետին. քահանայապետին ծառան։ Եհոբ, կտրեց. — ի՞նչ բանը. — ականջն նորա, անոր ականջը։

2. ԲՆՈՒԹԱՆ ԽՆԴԻՐ

221. Հ. Բնութեան խնդիրն ի՞նչ է։

Պ. Բնութեան խնդիրը կ'ըսուին բայերուն տրբական, բացառական, գործիական հոլով խնդիրները, և այն հայցականները որ ոչ թէ ներգործական բային գործողութեան առարկան կամ տեր բային ըրածը, այլ ուրիշ պարագայ մը կը ցուցնեն։

222. Հ. Տրական հոլով բնութեան խնդիրն ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի։

Պ. Տրական հոլով բնութեան խնդիրը կը ճանչցուի, ո՞ւր, ի՞նչ բանին. ի՞նձ, նէ՞ հարցմամբ. զոր օրինակ.

Հօր և մօր նմա՛ ոչ պատմեցի. Հօրս և մօրս չպատմեցի։ Եղբարքն Յովսէփու վաճառեցին զնա Իսմայէլացւոց. Յովսէփայ եղբայրները զանի վաճառեցին Իսմայէլացւոց։ Թող ձգ զպարահս մեր. Մեր պարտքերը ձգէ՛ նորէ։

Այս խօսքերուն մէջ հօր և մօր նմա՛, Իսմայէլացւոց, ձգ, բառերը տրական հոլով բնութեան խնդիրը են պատմեցի, վաճառեցին, ննջ բայերուն։ Ոչ պատմեցի, չպատմեցի. — ո՞ւր, ի՞նձ. — հօր և մօր նմա՛, հօրս և մօրս։ վաճառեցին զնա, զանի վաճառեցին, — ո՞ւր, ի՞նձ. — Իսմայէլացւոց։

223. Հ. Բացառական հոլով բնութեան խընդիրն ի՞նչ հարցմամբ կը գտնուի։

Պ. Բացառական հոլով բնութեան խընդիրը ո՞ւր, ի՞նչ բանէ. ի՞նձանէ, նէ՞նէ հարցմամբ կը գտնուի։

Սիրեացի է հօրէ նմա. Պիտի սիրուի հօրմէս։ Փըրկեա զմեզ է չարէ. Մեզ չարէն փրկէ։

Այս խօսքերուն մէջ է հօրէ նմա, է չարէ, բացառական հոլով բնութեան խնդիրները են սիրեացի և փրկեա բայերուն։ Սիրեացի, պիտի սիրուի. — ո՞ւր. — է հօրէ նմա, հօրմէս։ Փրկեա, փրկէ. — ո՞ւր. — է չարէ, չարէն։

224. Հ. Գործիական հոլով բնութեան խնդիրն ի՞նչ հարցմամբ կը գտնուի։

Պ. Գործիական հոլով բնութեան խնդիրը կը գտնուի ո՞վ, ի՞նչբանով. ինձ՞ նէ, նէ՞ նէ, հարցմամբ։ Ամենայն ինչ նովաս եղեւ. Ամէն բան անով եղաւ։ Բերէին գՀիւանդս ահձօտ. Հիւանդները մահիճներով կը բերէին։

Այս խօսքերուն մէջ նովաս և ահձօտ գործիական բնութեան խնդիր են եղաս և բերէին բայերուն։ եղաս, եղաւ. — ո՞վ, ինձ՞ նէ. — նովաս, անով։ Բերէին, կը բերէին. — ի՞նչ բանով, նէ՞ նէ. — ահձօտ, մահիճներով։

225. Հ. Հայցական հոլովը ե՞րբ բնութեան խնդիր է։

Պ. Հայցական հոլովը բնութեան խնդիր է,

1° Երբ ժամանակի պարագային կը ցուցնէ, զոր օրինակ.

Զփառաւոր և զվեց ամ չինեցաւ տաճարս, և դու զերծ՞ ասաս կանգնես զդա: Զաղջայն ծնեալս աշխատ եղեալ և կալաք ոչինչ. Պահեալ զփառաւոր պէս և զփառաւոր ծնեալ ապա քակեցաւ. Ծառայեաց ամ եօթն. Զվեց օր գործեացես, զի զվեց օր արար Աստուած զերկինս և զերկիր. Զվեց ամ սերմանեացես զերկիր զո. Եբէս ժամանակս ի տարւոջ արասցիք ինձ ոտնս. Շինեաց զնա զեօթն ամ, և զիւր տունն չինեաց Սողոմոն զբեհփռասուն ամ, Տէր Աստուած մերժեաց զքոյն յարքայէ ծնեալն զայն. Զվաղուէ օրն պատրաստեսջիր զվիրզան. Առ նմա ազան այն օր. Այսուհետեւ զաճենայն ասաս երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, ցիս և ծնեալս մի զադարեսցին:

Ժամանակն պետրոսեան ցուցնող Հայցականը, ո՞ր ապեռասան ինչ, ո՞րչափ ապեր հարցման պատասխան է. զոր օրինակ. Շինեցաս պաճար. այս տաճարը չինուեցաւ. ո՞րչափ ապենասան ինչ. — զփառաւոր և զվեց ամ. քառասուն և վեց տարուան մէջ: Այնպէս եղեալ. աշխատեցանք, ո՞րչափ ապեր. — զանձնայն ծնեալս. բոլոր այս գիշերը: Ծառայեաց. ծառայեց. — ո՞րչափ ապեր. — ամ եօթն, եօթը տարի:

2° Երբ յե՞, ևերպ, կամ եղանակ կը ցուցնէ, զոր օրինակ.

Զհարսն գյե՞ և զօրինակ Բաբիլոնի չիներ. Ասեացաւ գայս օրինակ. Զբացական տեսիլն գնոյն օրինակ քանդակեցին. Աստուածաշնչեցս օրինակ բարձրանալ. Մերուժան զիւր զգենն և զզարդ և զնշան սաղաւարտին բազմաց եղեալ էր ընդ օրինակի: Ցիշէ գայս յե՞ օրինակի:

Քե՞, ևերպ կամ եղանակ ցուցնող հայցականը, ի՞նչ յե՞ւ, ի՞նչ ևերպով, ի՞նչ եղանակով հարցման պա-

տասխան է, զոր օրինակ. Շինեաց զհարսն. Տարսոն քաղաքը շինեց. ի՞նչ յե՞ւ. — զյե՞ և զօրինակ Բաբիլոնի. Բաբիլոնի ձեւով: Խօսեցաւ. խօսեցաւ. — ի՞նչ ևերպով. — զայս օրինակ. սա կերպով:

3° Երբ ե՞ւ կը ցուցնէ, զոր օրինակ.

Որ տարապարհակ վարիցէ զքեզ դէպ ի, երթ ընդ նմա և երկուս. Բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան ափսէ. Արար զծովն ձուլածոյ տասն կանթուն. Պատրաստեցի ոսկի պղանդս հազար, և արծաթի՝ պղանդս հազար հազար. Տային գարի տասն հազար խոռ. Եւտու ձէթ տասն հազար չափ. Անկաւ լորամարդին զբանակաւն ասուր գնոց ասի, և ասուր գնոց անտի: Մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ տասընհինգ ի. Որ ոք արբուսցէ միւսմ ի վոքրկանցս յայսցանէ բաժակ ի ջուր. Զնչիս մարմնոց նոցա ոսկի առնուին. Հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ:

Զափ ցուցնող հայցական հոլովը, ո՞րչափ կամ ո՞րչափ տեղ հարցման պատասխան է, զոր օրինակ. Տրտպարեհան ջնջէ զքեզ. անկարելոյն տանի քեզ. — ո՞րչափ տեղ. — մղոն ի. մղոն մը: Մեկնեցաս ի նոցանէ. անոնցմէ հեռացաւ. — ո՞րչափ տեղ. — տասընհինգ ի. քարընկէց մը: Բոյնն ընդ ոտս կոտորոցն. կտորուանքը վերցուցին. — ո՞րչափ. — երկոտասան ասկառ. տասներկու սակառի (չափ): Ասկս լրասարքին, լրամատրգին ինկաւ. — ո՞րչափ տեղ. — ասուր գնոց ասի և ասուր գնոց անտի. օրուան մը ճամբայ մէկ դիէն, օրուան մը ճամբայ միւս դիէն:

4° Երբ խօսքը ճարեայ երթալու կամ գալու վրայ է, զոր օրինակ.

Թաքիչիք անդ վերիս աւուրս, և ապա երթիչիք ջճանապարհ յեր. երթեալ էր նորա վերկայն ճանապարհն. գնացեալ է ճանապարհ հետի. մի երթար ճանապարհ ընդ նոսա. գնալ ջճանապարհս ընթրս. պնդեցան արքն վկնի նորա ջճանապարհն Յորդանանու. Տրտմութեամբ երթային վերկայնոյնէն ճանապարհին. Զևաննևնային դընաչիք. Առաքէր գնա վերկայն ճանապարհն. երթիցուք գոգղդրդն. երթայր գայս կողմն լերինն. Եկին երբեւ աւուր միոյ ճանապարհ:

Ճշմարտ գուցնող հայցականը, ի՞նչ կամ ո՞ր ճամբան հարցման պատասխան է, ղոր օրինակ:

Երինչէ. գացէք. — ո՞ր ճամբան. — ջճանապարհ յեր. ձեր ճամբան: Երինգոտ. երթանք. — ո՞ր ճամբան. — գոգղդրդն. չիտակ ճամբան: Գնաչէ. գացէք. ի՞նչ ճամբայ: — ջևաննևնային. լեռնէ լեռ:

226. Հ. Երբ բայանուն մը իր բային հետ կը դործածուի, ի՞նչ հոդով կը դրուի:

Պ. Երբ բայանուն մը իր բային հետ, ղոր օրինակ երինգ բառը երինչել բային հետ, սէր բառը սիրել բային հետ, միկտեղ կը դործածուի, հայցական կը դրուի, ղոր օրինակ.

Երկեան երինգ դեղ. Սէր յաւիտենական սիրեցի զքեզ. Անէծ գիս անէծ ցաւագինս. Կոծեցան գնա գոգ դեղ. Եհար զժողովուրդն հարուածս դեղամեծս յոյժ. Զքաղաքն իշոյ թագեցի. Խրատել փրկելոց է դիրկոնինն յաւիտենից. Ողբասցեն պէս. Զարմացարուք ջրմանս. Կաթաս կաքաւել. Եւ նորա գնայն տուն ննջեցին. Խնդացին յոյժ ուրախունեան մեծ. Երկոս տանս սպանանեն. Զախտս մահու չերանէր. Զմահ աղուխաս սպանիցէ զքեզ. Զայդչափ ձոռձիալոնինն պահոց տոկացեր:

Անյապիսի խոսքերու մէջ բայանունը յարաբերող յարաբերական դերանունը կամ ածականը նոյնպէս կրնայ հայցական դրուիլ վոխանակ դործիականի, ղոր օրինակ.

Մեծ էր սէրն ղոր սիրեաց զնա. Վասն չանցանացն ղոր յանցեաւ. Ի դէպ էր ղոր մեղաւ. Բժշկել ի վէրացն ղոր խոցեցին զնա. Ոչ թողից քեզ ջանբջանս դիցն ղոր անարգեցեր զնոսա: Զկնի չանցանաց քոց ոչ յանցեաւ. Ո՞չ ընդնա պարտ էր չարչարել Քրիստոսի:

227. Հ. Անյապիսի խոսքերու մէջ հայցականները ի՞նչ հոդովի տեղ են:

Պ. Անյապիսի խոսքերու մէջ հայցականները դործիականի տեղ, կամ իմաստին ատտակութիւն տալու համար են. ուստի վերի խոսքերը որպէս թէ կը նշանակին, երկեան երինչէ դեղ կամ երկեան յոյժ. խնդացին ուրախունեամբ դեղ, կամ խնդացին յոյժ. ցաւխոռնական սիրով սիրեցի զքեզ. Սէրն սիրով սիրեաց զնա, և այլն:

228. Հ. Ներդործական բայերը մի՞կ սեռի խընդիր կ'առնեն:

Պ. Կան ներդործական բայեր որ կրնան առնել երկու սեռի խնդիր (հայցական) որոց մին անձի անուն է և կրնայ որական ալ ըլլալ, միւսը իրի, ղոր օրինակ.

Որ զդեցուցանէր զնէզ (ձեզ) կոչիչ. Զգեցուցի զէնչ (քեզ) պէսպէս. Ագուցի զէնչ հիչ և կոչիչ. Հարցից և ես զնէզ (ձեզ) բան ոչ. Հարցից ինչ զնէզ. Զէս ինչ այսպիսի խնդիրս բանից մի հարցանէր. Ուսուցանէր զնոսա (նոցա) առաքօր բաղմ ինչ. Զինչ խրատեցին

ջնա (խրատ եառուն նմա) ծերքն, և զի՞նչ մանկտին. Զի՞նչ (թե իւիք) զրկեցի չէնչ, և այլն։

229. Հ. Զէզոք բայերը չէ՞ն կրնար երբէք սեռի խնդիր առնել։

Պ. Զէզոք բայերը երբեմն տարբեր նշանակութեամբ իրը ներգործական գործածուելով սեռի խնդիր կ'առնեն, զոր օրինակ.

Ամենայն որ բնակեալ իցէ զնեռնակոզմն. Որ զոհէին բնակեալ նստէին. Բնակեալ նստէին զգոն ծովոն. Որ զնեռնակոզմն զգոն գետոյն կարգեալ նստէին. Զվէրն կոզմն նստէին. (Բնակիլ, կամ, բնակեալ նոթելկը նշանակէ քրուիլ, ուիլ, այսինքն՝ բռնել, զոզը եղծե)։ Զամենայն՝ որ ինչ ակն ունիցիս (յուսալ) յինէն՝ արարից քեզ. եսթեր՝ զոր ամուսնացաւ (կին արար) թագաւորն. Ոչ հաճեցան (ընկալան) զհօրն հրամն. Խնդացին (ողջունեցին) զմեր ի նոսա հասանել. Զանամ (զբրկեմ) զանձն իմ ի բարութենէ. Ի բամբասանաց խընայել (պահել) զնեզոս. Երկչոտն միշտ կանխէ (կանխաւ խորհի) զանհնարինն. Սյլքն զայլ ճաաաս չըջկին. Անխայեցեր (պահեցեր) զնոա ի մեզայ. Ի մի վայր ժողովեալ զաորա զօր ոտնին, զչէշտակ քաջութեանն ցնծան (ոտնեն). Խանդացաւ զգինոնըկն էո. Զըղջացաւ զամանանալն. Ըղձանային (մաղթէին) զպատասխանն երկրին. Ոչ խուսեցից (դարձուցից) զձնօաս իմ. Ցեսու յաչըդեալ (առեալ) ի Մովսիսէ զդէզաբաոնընն. Կեղծաւորի (կեղծէ) զաոգնոնըն. Եղբայրն յանցեաւ (չփոթեց) զամանան. Զգուշանալ (պահել) զէ. Սպաշաւել զիւրն ինչ (բան մը ըրած ըլլալուն վրայ ցաւիլ, զղջալ). Համբերել (տանիլ, յանձն առնուլ) զայս ինչ. և այլն։

230. Հ. Բայերը սեռի և բնութեան խնդիրնե՞ր միայն կ'ունենան։

Պ. Բայերը կ'ունենան նաեւ այլեւայլ նախադրութիւններով խնդիրներ. զոր օրինակ. Ածին զՅեսուա աո Պեղատոս, Ընկեցին զԴանիէլ ի գուբն առիւծուց. կացոյց զնա ի վերայ աշխարհն տաճարին։ Այս օրինակներուն մէջ, աո Պեղատոս, ի գուբն, ի վերայ աշխարհն բառերը, աո, ի, ի վերայ, նախադրութիւններով խնդիրներ են ածին, ընկեցին, կացոյց բայերուն։

ԲԱՑԵՐՈՒՆ ՏԵՐ ԲԱՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

231. Հ. Գոյականէ, դերանունէ, գոյականաբար առնուած ածականէ և անեռեւութէ զատ ուրիշ ի՞նչ բառեր բայերուն տէր բայն և խնդիրը կ'ըլլան։

Պ. Երբեմն մակբայ մը, հոլոված բառ մը, դիմաւոր բայ մը և ամբողջ խօսք մը կրնան տէր բայն և խնդիրը ըլլալ։

Եղիցի ձեզ այո այո և ոչն ոչ. Զեզի այն այո ըլլայ, ոչն ալ ոչ։ Զինչ իցէ այն գուբ գաեան. Այն ինչ ս'ալը բինչ է։ Զայս արքեօգն յայտ առնէ. Արքեօգը այս կը նշանակէ. Նաւն ի ձեռն նորա յայտ առնէ. Անալը կը նշանակէ անոր ձեռքով։ Արագընթացն և գնէնէն զմի միտս ունին. Արագընթացը և գնէնէը մի և նոյն նշանակութիւնն ունին։ Սքեանչին վճառաւորեացի է. Սքեանչն վճառաւորուի է։ Զէ նէրոզ և արքահաւոզ է արարիչը՝ ասիկա ամենուն յայտնի է։

Այս օրինակներուն մէջ, այո, ոչ, գուբ գաեան, արքեօգ մակբայները, նաւ գործիականը, գնէնէը և

ուբեռոյթ դիմաւոր բայերը, և, ընդ ներող և ապիհատող է պրոյին ամբողջ խօսքը, իբրեւ առը բայի դրոծածուած են իրենց վերաբերեալ բայերուն։

Պատուոյ առը առաց ղոյն։ Պատուոյ համար բառնը։ Զայսոհետեւն ոչ վայրապար ինչ յաւել. վայրապար չաւելցուց այսոհետեւը։ Ի սկզբանէիւն ղոր եղ՝ յայտ առնէ. ի սկզբանեովը ղոր դրաւ՝ կը յուցնէ։ Ցաճախաբար դնէ ընդ-ը ինչ. Շատ անգամ կը դնէ ինձնէ դո-ընը։ Ամենայն օրէնք իմ բան կատարին, և սխրեսցեն ընդ-ը էրբեւ ընդյն էս. Ամէն օրէնք սա մէկ խօսքին մէջ, այսինքն՝ ընկերք էս անյնք պես սէրեսին մէջ կը կատարուի։

Ա.յս օրինակներուն մէջ ալ ս, այսոհետեւ մակբայները, եօթ ինչ խօսքը, ը նախդրիւ իբրեւ հայկական սեռի խնդիր որուած են ասոց, յաւել, դնէ բայերուն։ Ի սկզբանէ բացառականը դործիականի վերջաւորութեամբ իբր դործիական խնդիր որուած է յայտ առնէ բային։ Սէրեսցես ընկերք էս էրբեւ ընդյն էս ամբողջ խօսքն ալ է նախդրիւ խնդիր եղած է կատարէն բային։

ԳԼՈՒԽ Գ.

ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ՍՏՈՐՈԴԵԱԼ

232. Հ. Ստորոգելին ի՞նչ է։

Պ. Ստորոգելէ, կամ, ըստ ումանց, ուղղական ենթէ կ'ըսուի այն բառը որ սովորաբար էական բային ետքը կուգայ, և անոր առը բային յատկութիւնը, ով կամ ինչը ըլլալը կը ցուցնէ, ղոր օրինակ.

Դու դեռ ես. ես եմ սրբին էս. Այրն այն էր էնան. Դուք էք պղ երկրի. Նոքա եղիցին ձեր պատուոյ։

233. Հ. Ստորոգելին ե՞րբ յոքնակի կը դրուի։

Պ. Երբ էական բային առը բային յոքնակի է, ստորոգելին սովորաբար յոքնակի կը դրուի, ղոր օրինակ.

Ամենեքին մեք սրբէ եմք առն միոյ. Աբէ խաղաղութեան եմք, և չեն ծառայք քո յրթէ. Կամակիցք էք գործոց նորա. Եբէօնէ են ոտք նոցա. Թուղթքս ձանօնէ են և առոգիս. Էին սրբոյ երկոքին. Եղեն նմա հաւկապօէ. Լերուք սբէ. Եղէց նոցա Աստուած և նոքա եղիցին իմ ժողովրդէ։

234. Հ. Ցոքնակի առը բային ստորոգելին եզակի ալ կրնա՞յ դրուիլ։

Պ. Կրնայ դրուիլ, մանաւանդ երբ ածական է և խօսքին սկիզբը կամ առը բային առաջ դրուած է, կամ հաւաքական անուն է, կամ եզակին անդործածելի է, և կամ այնպիսի անուն մը որ բայի հետ կը դործածուի, ղոր օրինակ.

Գործակից եմք ձեր. Եբանելէ են կանայք քո. Եբէօ են ոտք նոցա. Դեռ մարմնաւոր էք. Ուղիղ են ճանապարհք նորա. Եբկոպոսան եղբայր եմք ծառայք քո. Ընդունայն են կեանք իմ. Սակաւ և ցաւագին են կեանք մեր. Հոտնձք բաղում են և մշակք սակաւ. Դուք պղծ էք ընտիր. Ուղղ լերուք, և մեք մեղէն պղ եմք. Զերայն լերուք. Լաւ եղեն. Հնազանդ լերուք. Ուրախ եղաք։

235. Հ. Էական բային առը բայիէն զատ ուրիշ ի՞նչ բառեր ստորոգելի կ'ունենան։

Պ. Էական բային զատ ուրիշ քանի մը ներ-

դործական բայերու ալ տէր բային ու սեռի խընդիրը ստորոգելի կ'ունենայ, ինչպէս են անոանիմ, կալիմ, առնիմ, դնիմ, կոքնիմ, կացոցանիմ, քոքնիմ, շինել բայերը և ուրիշներ: Երբ ստորոգելին այս բայերուն տէր բային կը վերաբերի, ուղղական կը դերուի. երբ սեռի խնդրոյն կը վերաբերի, անորոշ հայցական կը դերուի, դոր օրինակ.

Դու կոչեցիր Կեփա. Յորմէ՞ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս. Որդի՛ Աստուծոյ կոչեցին. կացի ընթացք. Չի անվարժ ելանէ լկտի. Գնային յամենայն պատուիրանս Տեառն անարատ. Ընդէր կայք դատարկի. Դատարկանդոռ ուսանին, շրջոդ տանէ՛ի տուն. Ճանապարհը անմատոյց ուղիղ թուին. Խիտն և յանդուգն և հպարտ ձանձ կոչին. Խոշը խոշը դրծեցես զտապանն:

Այս օրինակներուն մէջ ստորոգելին ուղղական է, քանզի տէր բայերուն կը վերաբերի:

Կոչեցի զձեզ բարեկամ. Արար զիս հայր փարաւոնի. Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ. Այլ ասիցեն զչարն բարի. Գիտեր զնա այր արդար և սուրբ. Եթէ ոք խոստովանիցի զնա Քրիստոս. Զանձն իւր մատոյց պատարագ. Պարկեր կուռեացն՝ զնա հիւսն. Կացոյց զնոսա իշխան. Կենդանիք արար զմեզ. Եղ զձեզ փեսայ. Տեսանէր զնոսա ջերմեռանդ. Աբեղնախանձ ուսուցին զնոսա. Եատես քացել զդրունս բանտին. Գըտին ժողովեալ զմեռատանան. Անծա՛ զբանն համարի. Ո՞ղջ արարէք զչաւիղս նորա. Հնազանդ արար զժողովուրդս. Արար զմեզ սուրբ. Արար զմեզ պաշտօնեայս. Կացոյց զիս պատարագ. Կացուսցես զնոսա իշխան. Եթէ կոչիցէ ոք զնոսա դայն ինչ որ ևիցէ՝ առաչեն. Տարակուսեր թէ զո՞ ոք կոչեսցէ զՀերմոս. Զամուր ամուր տեղիս Հայոց չիներ բերդս:

Այս օրինակներուն մէջ ալ ստորոգելիները հայցական են, քանզի բայերուն սեռի խնդիրն կը վերաբերին:

236. Հ. Եական բային տէր բային ստորոգելին ե՞րբ հայցական կը դերուի:

Պ. Երբեմն դիմաւոր եական բայն անեռւոքի կը փոխուի, և այն ատեն ստորոգելին հայոյական կը դերուի, դոր օրինակ. Մեծատանց պատուէր տալիր առաքել, փոխանակ՝ Մեծատանց պատուէր տալիր էէ էշեն կամ լէշեն առաք:

Պարտ եր ձեզ լինել վարդապետ. Պատուէր տացես ոմանց չլինել օտարօտոն. կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, փնաքար լինել. Մեծատանց պատուէր տալիր՝ առաք, ելբոն, հպարտ լինել. Ծերոց ջնորհ լինել, պարկեշտ, ցածոն, ողջախոհ՝ ի հաւատս: Զգաստացուցանիցեն զմանկամարդան այրաւոր լինել, սրբեաբար, ցածոն, առաքինի, փնաքար, բարեկրթ, հնազանդ իւրեանց արանց. ծառայից՝ իւրեանց տէրանց հնազանդ լինել և հաճոյ յամենայնի. մի հակառակող, մի հափոն. Ցուշ արասջիս նոցա իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ. անկռթ լինել, հեղ. Եւ նոցա իշխանութիւն որդի՛ Աստուծոյ լինել:

237. Հ. Ստորոգելին կրնա՞յ ուրիշ ձեւ առնել:

Պ. Երբ ստորոգելին դոյական է, կրնայ է նախադրութեամբ անորոշ հայցական ալ դերուիլ, դոր օրինակ.

Եղէց ի հայր. Եղէց յԱստուած ազգիդ Իսրայելի. Եղիջիք դուք մեզ ի ձառայս. Եղէց ձեզ ի հայր, և դուք եղիջիք ինձ յաւագերս և ի տարեր. եղիցին երկոքս

եան՝ է ֆրէնչ ֆ. Եղիցին դժուարինքն՝ է բէ-րէ-նա և առապարքն՝ է դ-ա-շտ. Եղիցի ամենայն երկիրդ յա-նապատ ի բնակչաց. Բայր մեր, եղիցիս է հալշտ և է բէ-բ-ո, նե եղեւ նոցա է ևբօ-ւ-ր. Եղեն նոցա է հա-կ-ա-տ-ա-ռ: Մեծութիւնդ ձեր յաչինչ է. Բակտեցան և ե-ղեն յոյնս. Լերուք յորդիս զօրութեան. Լեր դու ինձ յորբէ զօրութեան:

Շինեաց տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ՝ է կին. Արարիչ զքեզ յաջ մեծ. Օծանել զքեզ է ն-ա-ֆ-ա-ր. Տայ քեզ զհեթանոս է ֆ-ա-ռ-ա-ն-ֆ-ո-ւ-թ-ի-ւ-ն. Ցուչինչ համարել:

238. Հ. Բայը ե՞րբ սաորոգելոյն հետ կը հա-մաձայնի, փոխանակ տէր բային հետ համաձայ-նելու:

Պ. Եթէ տէր բային եզակի և սաորոգելին անեզական բառ է, բայը կրնայ սաորոգելոյն հետ համաձայնելով յոգնակի դրուիլ, զոր օրինակ.

կառնոան ֆէ+ են. Հերս երկայնս ունել կնոջ մար-դոյ ֆա+ են. Ցայտ է թէ ֆալշան+ են ազանդն:

239. Հ. Սաորոգելին ի՞նչ հարցմամբ կը դըտ-նուի:

Պ. Սաորոգելին է՞նչ հարցման պատասխան է, զոր օրինակ. Դու ես. — է՞նչ. — Ֆէֆ. Ես եմ. — է՞նչ. — ուրէն ա. Այրն այն էր, — է՞նչ. — էլիան: Դու կոչեցիր. — է՞նչ. — Կեֆա: Անուանեցաւ. — է՞նչ. — Քրիսթոս: Կոչեցի զձեզ. — է՞նչ. — Քա-րեկամս:

240. Հ. Իսկան բային տէր բային միշտ սաո-րոգելի կ'ունենա՞յ:

Պ. Երբեմն եմ բային ուրիշ բայի նշանա-կութիւն ունի, և ան առեն խօսքին մէջ սորոշելի չի դառնար. զոր օրինակ. Ո՞ւր էին եղբարք ա. Հոս՝ էին կը նշանակէ ո՞ւր բնակին կամ ո՞ւր գտնին. Զարիւքս որ լինին՝ ուսա՞ն, այսինքն՝ ուսանի յա-ռաջ ըսա:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ԲԱՅԱՑԱՑՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՑԱՅԱՑՏԵԱԼ

241. Հ. Բայայայտիչ ի՞նչ է:

Պ. Բայայայտիչ կը կոչուին այն բառերը որ խօսքի մէջ կը դրուին ուրիշ բառի մը քով, և ա-նոր հետ մի և նոյն բանը կը նշանակեն, միայն զայն աւելի բայայայտ ընելու կը ծառայեն, զոր օրինակ.

Յովսէփ, այրն Մարիամայ. Յովսէփ, Մարիամին այրը:

Հոս՝ այրն Մարիամայ բառերը Յովսէփ ին հետ մի և նոյն են, բայց ո՛ր Յովսէփին ըլլալն իմացնելու հա-մար են, ուստի և այրն Մարիամայ բայայայտիչ է Յովսէփին:

Փախուստան Անակայ, հօր արբոյն Գրիգորի. Սուրբ Գրիգորին հօրը, Անակայ, փախուստը:

Հոս ալ հայր արբոյն Գրիգորի նոյն է Անակի հետ, և անոր բայայայտիչն է:

Զմայրն ամենայն առաքինութեանց, գնահարհո-ր-ն-ա չունէր յանձին. Ամէն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը չունէր:

Հոս ալ խոնարհութիւն բառը՝ հայր ամենայն աստուածնորութեանց ին բացայայտիչ է. Աստուածնորութեանց հայր և խոնարհութիւն մի և նոյն բան են:

Կռոց և դրօշելոց հանդամանք առ Թարայիւ, հօրը Աբրահամոս, եղեն. Քարէ և փայտէ արձանները (կուռքերը) չինելը՝ Աբրահամին հօրը, Թարային, սո տենը սկսաւ:

Հոս ալ հայր Աբրահամոս բառերը՝ Թարա ին բա ցայայտիչ են. Աբրահամոս հայրը և Թարա մի և նոյն անձ են:

242. Հ. Բացայայտեալ ի՞նչ է:

Պ. Բացայայտեալ կը կոչուի այն բառը զոր բացայայտիչն աւելի յայտնի և ծանօթ կ'ընէ: Վերի օրինակներուն մէջ ծովեէ, Նոյ, հայրն աստուածնորութեանց, Թարա, բացայայտեալ են:

243. Հ. Բացայայտիչը բացայայտելոյն հետ ի՞նչպէս կը համաձայնի:

Պ. Բացայայտիչը բացայայտելոյն հետ թիւով և հոլովով կը համաձայնի, և բացայայտելոյն ը, է, ի, ընդ, զոր նախադրութիւնները, եթէ ունի, սովորաբար բացայայտչին վրայ կը կրկնուին, զոր օրինակ.

Ես զկղէոպատրա զդուստր իւր. Զմեզն ձեր զոր արարէք, զորթն, առի և այրեցի հրով. Եղ զմեզ ի բանտի ի տան դահճապետին, զիս և զմատակարարն. Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս, զորդի Աստուծոյ. Շրջել զեղբարբք իւրովք, զորդովքն Իսրայէլի:

Զիմարդ չինէն ըմպել խնդրես, ի կնոջէ Սամարա-

ցւոյ. Ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ. յերուսաղէմ, յերկինս. Ասէ Յուդա ցԻսրայէլ, չհայր իւր. Ասէ ցպատանին, չկապարճակիրն իւր. Ընդ եղբարս ձեր, ընդ որդիսն Իսրայէլի. Անց նա ըստ գետն մեծ, ըստ Եփրատ. Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ, ընդ Յիսուս Քրիստոս:

Ա՛ Նախադրութիւնը և ուրիշ նախադրութիւններ սովորաբար չեն կրկնուիր, զոր օրինակ.

Առ Թարայիւ, հօրը Աբրահամոս. Առ Աբիւդարաւ, թագաւորապետէն. Իսահակաւ և Յակոբաւ հանգերձ, քաղաքացւոյ նոցին աւետեաց. Վասն որդւոյ իւրոյ, Յիսուսի:

ԳԼՈՒԽ Ե.

ԿՈՉԱԿԱՆ

244. Հ. Կոչականն ի՞նչ է:

Պ. Կոչական կ'ըսուի այն բառը որ կը ցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը, առ որ խօսք մը ուղղուած է, զոր օրինակ.

Աբէ, ընդ մեզ դի էք պչուցեալ. Սիմոն, ունիմ ինչ ասելիք. Որբեհաղ, զինչ գործ գործեցեր դու ընդ մեզ. Լաւ, սրբեհաղ, խրատու հօր քո. Բաբելոմ, ի վեր մատիր. Բժիշկ, բժշկեա զանձն քո. Աբէ Աբենայէ, պաշտօնատէրս տեսանեմ զձեզ:

245. Հ. Կոչականէն առաջ կամ ետքը ի՞նչ բառ կը դրուի:

Պ. Կոչականէն առաջ շատ անգամ ով բառը կը դրուի, երբեմն ալ կոչականէն ետքը, եթէ եզական է, որ դերանունը կ'աւելցուի. ինչպէս.

Ով բանաքաղ Մարկիոն. Ով անմիաք և հեղգասիրաք ի հաւատալ. Ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ յերբ իցեմ ընդ ձեզ:

Այր դո՛ւ, ով կացոյց զիս դատաւոր ի վերայ ձեր. Արի կաց, մանուկ դո՛ւ:

246. Հ. Ե՞րբ ե գիրը կը գործածուի կոչականին հետ:

Պ. Երբ կոչականն իրմէ առաջ ածական ունի, չատ անգամ ե գիրը ածականին վրայ կ'աւելցուի, ղոր օրինակ.

Կամ եղեւ և ինձ գրել ձեզ, քաջդ Թէոփիլէ. Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս:

Եթէ կոչականն իրմէ եաքը յատկացուցիչ մը ունենայ, ե գիրը կոչականին վրայ կը գրուի, ղոր օրինակ.

Աստուածորդիդ Պարսից, ընդէր զանդիտաս. Ի քաց կացէք յինէն, մշակք անիրաւութեան. Գիտեմ զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ. Արքայդ Իսրայելի:

ՈՒԹԸ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՑ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Ա. ԳՈՑԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ցօղի գործառութիւնը

247. Հ. Հայերէն յօդ ո՞րն է:

Պ. Հայերէն յօդ ն գիրն է:

248. Հ. Ցօղի գործածութեան համար քանի՞ կանոն կայ:

Պ. Ցօղի գործածութեան համար չորս կանոն կայ:

1° Ցատուկ անուններ, և այնպիսի երայց անուններ որ իրենց սեռին մէջ մէկ հատիկ են, յօդ չեն առներ, բայց Հայցականի ընդհարը կ'առնեն. ղոր օրինակ.

Եկն Յիսուս. Ասէ Պետրոս. Աստուած արար զերկինս և զերկիր. Արարածք Աստուծոյ. Արեգին խաւարեսցի. Լուսին ոչ տացէ զլոյս իւր. Ծով մեծ է և անդորր. Եկեսցեն յարեւելից և յարեւմտից. Ընկուզիս և շուրջս դու արարեր, և այլն:

2° Հատարակ անուն մը յօդ չառներ երբ նե կը ցուցնէ, այսինքն երբ ամէն բառն անունին քովը կրնայ դրուիլ. բայց, եթէ անունը հայցական է, ընդհարը կ'առնէ, ղոր օրինակ.

Մարդիկ և անասուն չարժին և զգան:

Հոս մարդիկ և անասուն սեռ կը ցուցնեն, այսինքն ամէն մարդ, ամէն անասուն ըսել է, այս պատճառաւ յօդ առած չեն:

Արար Աստուած զմարդիկ և զանասունս:

Հոս ալ մարդիկ և անասուն սեռ կը ցուցնեն, ուստի և յօդ առած չեն. բայց, որովհետեւ հայցական են, ընդհարն առած են:

Այսպէս կ'ըսուի.

Գնա՛ ի ծով գնան, ծով ոչ լնու. Լերինք ապաւէն են եղջերուաց. Վէմք ապաւէն նապաստակաց. Հողմ չնչեն. Ասպետք լուսատուք են, և այլն:

3° Հատարակ անուն մը բնաւ յօդ չառներ, և,

եթէ հայցական է, ընդհակառակն ալ չառնելը, երբ անորոշ կերպով «ոնէ մը կամ մաս մը կը ցուցնէ, ըսելնակ.

են գաղանի անտառի մասն. Այս անտառին մէջ գազաններ կան։

Հոս գաղանի, քանի մը գազան, կամ գազաններէն մաս մը կը նշանակէ, ուստի յօդ առած չէ։

Եղբարք իմ սպանին գաղանս. Եղբայրներս գազանները սպաննեցին։

Հոս ալ գաղան անորոշ կերպով մաս մը կամ քանի մը գազան կը նշանակէ, ուստի և յօդ առած չէ. և, թէպէտ հայցական է, ընդհակառակն ալ առած չէ։*

4°. Հասարակ անուններ յօդ կ'առնեն երբ որոշեալ անհատ կը ցուցնեն, և եթէ հայցական են, ընդհակառակն ալ կ'առնեն, ըսելնակ.

Հացն ըսել եռու քեզ՝ իմ է. Քեզի տուած հացս իմս է։

Հոս հաց, այս ինչ որոշեալ հացը (իմ տուածս) կը ցուցնէ, վասնորոյ յօդ առած է։

Կերթամ ղհացն ըսել եռու քեզ. Քեզի տուած հացը կերթամ։

Հոս ալ հաց, այս ինչ որոշեալ հացը (քեզի տուածս) կը ցուցնէ. ուստի և յօդ առած է. և հայցական ըլլալով ընդհակառակն ալ առած է։

* Առանց դէ հայցականին անորոշ հայցական կ'ըսուի։

ՅՕԴ ԱՌՆՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՑ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

249. Հ. Յօդը ե՞րբ յատկացուցչին և ե՞րբ յատկացեալին վրայ կը դրուի։

Պ. Յօդը միշտ յատկացուցչին վրայ կը դրուի. յատկացեալին վրայ կը դրուի միայն երբ յատկացուցիչը յատուկ անուն է։ Այսպէս կ'ըսենք,

Տուն Թագաւորին, ոչ թէ Տունն Թագաւորին, կամ, Տունն Թագաւորի։

Բայց պէտք է ըսել,

Մայրն Յիսուսի, եւ ոչ, Մայր Յիսուսին։

250. Հ. Երբ յօդ առնող անունն ածական ունի, յօդն ասոնց որո՞ն վրայ կը դրուի։

Պ. Երբ յօդ առնող անունն ածական ունի, յօդը միշտ գոյականին վրայ կը դրուի. ածականին վրայ կը դրուի յօդը, երբ գոյականը յատուկ անուն է, և ածականին յետադաս. ուստի կ'ըսենք,

Այրն քաջ. Երկիրն ընդարձակ. Մանուկն ստահակ. կամ, Քաջ պինուորն. Բարեպաշտօն մայրն.

Մեծն Աղեքսանդր. Երանելին Ղեւոնդ. Քաջն Տրդատ. Սրբոյն Գրիգորի։

Երբ յատուկ անունը նախադաս է ածականին, յօդը երկուքին վրայ ալ չի դրուիր. ուստի պէտք է ըսել,

Աղեքսանդր մեծ. Ղեւոնդ երանելի. Տրդատայ քաջի. Գրիգորի սրբոյ։

251. Հ. Երբ ածականը ստացական է, յօդ կը դործածուի՞։

Պ. Երբ ածականը ի՛, ո՛, ը՛, յը՛, ը՛ր, նո՛ր, նո՛ց, ը՛ր-ե՛ան ստացականներուն մէկին է, սովորաբար յօդ չի դործածուիր. ուստի սովորութիւն է ըսել,

Տուն իմ. Հայր քո. Եղբայր նորա. Բանք իւրեանց. Տուն հօր իմոյ. Դրունք քաղաքի ձերոյ. Որդիք բարեկամաց նոցա. Փոխանակ՝ տունն իմ. Հայրն քո. Եղբայրն նորա. Բանքն իւրեանց. Տունն հօրն իմոյ. Դրունքն քաղաքին ձերոյ, եւ այլն։

252. Հ. Դիւրականաբար առնուած ածականք ե՞րբ յօդ կ'առնեն։

Պ. Դիւրականաբար առնուած յոգնակի ածական մը, եթէ ընդհանուր մտքով առնուած է, յօդ չառներ, բայց դիւրականաբար առնուած եզակի ածականը միշտ յօդ կ'առնէ, ուստի կ'ըսուի առանց յօդի,

Ազգաւ (*ամէն, որ եւ իցէ արդար*) *ժառանգեսցեն զերկիր. Անդիմաւ զխրատ անգօսնեն. Երանի՛ ոմ ղբմածոց. Վայ անօրինաց։*

Ծօդով, Արդարք, Անղդամքն, Հայրն, կը նշանակէ այս ինչ արդարները, այս ինչ անղդամները։

Բայց եղակին կ'ըսուի յօդով,

Արդարն ի հաւատոյ կեցցէ. ոչ է նոյն արդարի համար. եւ, Սպանէք զարդարն. այս ինչ արդար անձի համար։

Նոյնպէս

Անղդամն անգօսնէ զխրատ հօր, եւ, Զերծաւ անղդամն որ զայն առնոյն չարիս դործեալ էր։ Անմեղն հաւատոյ առնոյն բանի. եւ, Դատապարտեցին զանմեղն (զՔրիստոս). Խորագէտն դայ ի զղջումն. եւ, Այսպէս զերծաւ խորագէտն (ազուէսը)։ (*Տես եւ թիւ 267*)։

253. Հ. Ե՞ր չպիտի կարենայ ածական բառերէն ամենուն վրայ ալ յօդ կը դնուի՞։

Պ. Ե՛ր չպիտի կարող ածական երկու կամ աւելի բառերէն սովորաբար առաջինոյն վրայ միայն յօդ կը դնուի, զոր օրինակ.

Աղքատն եւ տնանկ. Դիպերքն եւ փարիսեցիք. Զպտուղ ցորենոյն եւ գինւոյ եւ ձիթոյ. Զխուրձ եւ զհամր. Զազգս մեր եւ զտեղի. Եկայք եւ պանդղեսցուք. Դպրացն եւ փարիսեցւոց։

254. Հ. Ծօդը շատ անգամ ի՞նչ կը ցուցնէ։

Պ. Ծօդը շատ անգամ լուսեղէնային խնայուած դիւրական մը, յատկացեալ մը կամ ուրիշ բառ մը կը ցուցնէ. զոր օրինակ։

Եթէ ընդ վայս դալար գայս առնեն, ընդ չորն գինչ լինիցի. այսինքն՝ ընդ չոր ճայս։ Աշակերտքն Յովհաննու պահեն առէպ եւ քոյք ոչ պահեն. այսինքն՝ քո աշակերտք։ Նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ եթէ մերոց միայն. այսինքն՝ ոչ եթէ մեղաց մերոց միայն։ Ի բարկութիւն որ գալոյն է, որպէս Մովսէսին. այսինքն՝ Մովսէսի քաղաքացւոյն։ Արիւնն Յիսուսի առաւել խօսի քան զՅաբելին. այսինքն՝ քան զարիւնն Յաբելի։ Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեանն այնպէս ճարտար խօսէր. այսինքն՝ և այն որ առանց դպրութեան էր։ Սպանցեն զվանն մեղայն. այսինքն՝ զանասունն որ է վանն մեղայ։ Զսխտն և զկամուն. այսինքն՝ զնուէրն որ է կամուս. Ընկալայ

զառ 'ի ձէնջն. այսինքն՝ ջան ու էք առ 'ի ձէնջ: Պահանջէի զիմն. այսինքն՝ ջան ու իմ է: Ճանաչեմ զիման. այսինքն՝ ջանուէկ ու են իմ:

255. Հ. Ո՞ր ատորոգ եղին յօդ կ'առնէ և ե՞րբ:

Պ. Ա՛նուանէմ, կոչեմ բայերուն ատորոգ եղին յօդ կ'առնէ, երբ բայէն առաջ կը դրուի:

Պետրոս որ կեվիան կոչեցաւ. Յակոբոս զոր արդար կոչէին. Վասն Անտիոքայ երեւեաւն անուանելոյ:

256. Հ. Յատուկ անուանք ե՞րբ յօդ կ'առնեն:

Պ. Յատուկ անուանք յօդ կ'առնեն 1՝. այս, այդ, այն ցուցականներով, կամ այս ածականներուն զօրութիւնը տալու համար, զոր օրինակ.

Մովսէսն այն որ եհան զմեզ. Դուն իցես Սիբայն. այսինքն՝ Սիբայն այն. Զիբոն զոր արար Աթինէն. Այլ Անտիոքոսն ութ հարիւր քանքար բերեալ էր. Ո՞վ է Պաւղոսն կամ Ապողոսն. Ո՞ւր է այն ձեր Աղեքսանդրոսն. Երուսաղէմն վերին. Փախո զԲրիդորդ. այսինքն՝ զԲրիդորդ ջայդ. Մեզ զԲրիդորդ Տեսուչ կացուսջիք. Հարցանէր 'ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն. Քրիստոսն յորժամ գայցէ, մինչ եւս ինչ նշանս առնիցէ:

2՝. Երբ ածականաբար կը գործածուին. ինչպէս,

Լուեալ զՅիսուսն անուն. զկուաչն աւան. 'ի Թիլն աւան. ի Սիմն անապատէ. Դիզադն գետոյ:

Այս կերպով երբ ածական գործածուած գոյականները ալ յօդ կ'առնեն. ինչպէս,

Եպիսկոպոսն անուն ի Հելլենացի լեզուէ է: Հայրդ անուն մի է հոգեւորաց և մարմնաւորաց:

257. Հ. Ածականի վրայ երբէք յօդ չի՞ դրուիր:

Պ. Երբեմն վայելչութեան համար յօդ կը դրուի գոյականէն առաջ դրուած ածականին վրայ, թէ և յօդ դնել ամենևին հարկ չէ: Այսպէս կ'ըսուի,

Պերճն գնացիւք. Բարձրաբերձն լերամբք. Ուղղորդն գնացիւք. Մանուածապատն չքնաւոք. Ցորդն անձրեւօք. Աներկեւանն ցնծութեամբ. Ի վերատակարն բանից:

Բ. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՍՏԻՃԱՆԸ

258. Հ. Ածականները բանի մը յատկութիւնները քանի՞ կերպով կը ցուցնեն:

Պ. Ածականները բանի մը յատկութիւնը երեք կերպով կը ցուցնեն, պոզլպէս, բաղդատելով, և ջերջանց կերպով, զոր օրինակ, Իմաստուն էր Սողոմոն. Սողոմոն իմաստուն էր: Հոս նմաստուն ածականը Սողոմոնին յատկութիւնը պոզլպէս կը ցուցնէ:

Իմաստուն էր Սողոմոն քան զայլ թագաւորս. Սողոմոն ուրիշ թագաւորներէն իմաստուն էր: Հոս նմաստուն ածականը Սողոմոնին յատկութիւնը կը ցուցնէ ոչ պոզլպէս, այլ զանի ուրիշ թագաւորաց հետ բաղդատելով:

Իմաստուն էր յոյժ Սողոմոն. Սողոմոն շատ նմաստուն էր: Հոս ալ նմաստուն ածականը Սողոմոնին յատկութիւնը գերազանց աստիճանաւ կը ցուցնէ:

259. Հ. Այս երեք եղանակներուն նայելով ածական մը ի՞նչ կը կոչուի :

Պ. Այս երեք եղանակներուն նայելով ածականը կը կոչուի պարզ, բաղդատական և գերադրական :

260. Հ. Բաղդատութիւնն ի՞նչ կը ցուցնէ :

Պ. Բաղդատութիւնը կը ցուցնէ թէ երկու բան իրարու հաւասա՞ր են թէ իրարմէ գերազանց կամ ստոր են :

261. Հ. Հաւասարութիւնն ի՞նչպէս կը ցուցուի :

Պ. Հաւասարութիւնը կը ցուցուի, այնպէս . . . որպէս, այնքա՛ . . . որքա՛, կամ լոկ, որպէս, որքա՛, մակբայներով, զոր օրինակ .

Այնքա՛ զօրութիւն է նոցա որքա՛ մեր. Անոնք այնչափ զօրութիւն ունին որչափ մենք : Այնպէս հզօր է որպէս դու . Այնպէս հզօր է ինչպէս դուն : Եղերուք զթածք որպէս հայրն ձեր երկնաւոր զթած է . Այնպէս զթած եղիք ինչպէս է ձեր երկնաւոր հայրը : Տացես նմա փոխ որքա՛ և խնդրեսցէ . Այնչափ փոխ տուր անոր որչափ կ'ուզէ :

262. Հ. Գերազանցութիւնն ի՞նչպէս կը ցուցուի :

Պ. Գերազանցութիւնը կը ցուցուի քան [*] նախադրութեամբ, կամ քան մակբայիւ, զոր օրինակ .

Հոգի առաւել է քան զմարմին . Հոգին գերազանց է քան զմարմինը : Միթէ լաւ ինչ իցեմք քան զհարս մեր . Մեր հայրերէն աղէկ ենք : Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց քան այն քաղքին : Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմի քան այն քաղքին :

* քան նախադրութիւնն իր խնդրովը խնդիր է բաղդատական ածականին :

263. Հ. Ստորնութիւնն ի՞նչպէս կը ցուցուի :

Պ. Ստորնութիւնը կը ցուցուի բաղդատական խօսքին բայը բացասական ընելով, զոր օրինակ .

Ձիք նոցա այնչափ զօրութիւն որչափ մեր . Անոնք նուազ զօրութիւն ունին քան մենք : Չէ նա այնպէս հզօր որպէս դու . Քան զքեզ նուազ զօրաւոր է : Մարմին չէ ինչ առաւել քան զհոգի . Մարմինը նուազ գերազանց է քան զհոգին : Չեմք ինչ լաւ քան զհարս մեր . Նուազ աղէկ ենք քան մեր հայրերը :

264. Հ. Մանաւանդ մակբայը բաղդատական խօսքի մէջ ե՞րբ կը դործածուի :

Պ. Երբ բաղդատուած բաներն անհերւոյթ են, քան նախադրութեան հետ մանաւանդ մակբայն ալ կը դործածուի, զոր օրինակ .

Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն . Երանելի է յաւէտ տալը քան առնելը : Լաւ է ինձ մանաւանդ մեռանիլ քան կեալ վատութեամբ :

265. Հ. Բաղդատական ածականը փոխանակ քան նախադրութեամբ խնդիր ի՞նչ խնդիր կ'առնէ :

Պ. Բաղդատական ածականը փոխանակ քան նախադրութեամբ խնդրոյ, յոքնակի բացառական և կամ է նախադրիւ յոքնակի հայցական խնդիր կ'առնէ, և միեւնոյն տեսակ բաներու մէջ ածելն ածելէն կը ցուցնէ, զոր օրինակ,

Անմեղն է չէնջ արկէք քար . Չննէ ամենէն անմեղը թող նետէ քար : Ծընտիրն է շէրմայ ջրոյ թաղեա զմեռեալ քո . Մեր գերեզմաններուն ամենէն աղեկին մէջ թաղէ մեռելդ : Մեծն է նոփաւորս : Որ փոքրիկն է յոմեռնէսն է չէդ . Ձեր մէջ ամենէն պզտիկը :

266. Հ. Կրկնուած ածականները ի՞նչ բանի զօրութիւն ունին։

Պ. Կրկնուած ածականները յորինակի գոյականով բազդատականի զօրութիւն ունին և ածական է կը նշանակեն. զոր օրինակ,

Ժողովեցին զբաւ բաւին յամանս, և զաւտանն ի բաց ընկեցին. Ամենէն աղէկներն ամաններու մէջ ժողվեցին և դէչերը նետեցին։ Զընդոյէ ընդոյէ մայրիան. Ամենէն աղէկ մայր ծառերը։ Մանր մանր ինչ ճճիք կամ անասուններ կերակուր լինին օձից. Ճճիներուն ամենէն մանրերը, և այլն։ Թողէք գնանք գնանք օրիներացն. Օրէնքներուն ամենէն ծանրերը զանց ըրիք։

Այս զօրութիւնն ունին նաեւ դնդաղ, ղրաղր, քաչչաքէչ, և ասոնց նման ածականներ։

267. Հ. Առաւելութիւն ցուցնող բազդատական ածականին վերջը ի՞նչ մասնիկ կրնայ կցուիլ։

Պ. Առաւելութիւն ցուցնող բազդատական ածականին վերջը կրնայ կցուիլ դէն մասնիկը. զոր օրինակ,

Որ ղկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս. Իմ եւ տեւէս եկողն ինէ զօրաւոր է։ Եւ էր օձն իմաստնագոյն քան զամենայն գազանս. Զուր քան զծանուննան նրբագոյն է, և քան զթեթեւսն՝ բարձրագոյն։

268. Հ. Բազդատական ածականին աստիճութիւն տալու համար ի՞նչ մակբայ կը դործածուի։

Պ. Բազդատական ածականին աստիճութիւն տալու համար անկէ առաջ կամ ետքը կը դրուի նա մակբայը, որ ասել կը նշանակէ։

Քակեցից զշտեմարանս իմ. և նա մեծամեծս չինե-

ցից։ Շտեմարաններս քակեմ, և աւելի մեծեր չինեմ։ Ոչ ոք արկանէ կապերտ նոր ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ առնու նորն լրութեամբն ի հնոյ անտի, և չար նա պատառումն լինի. Մեծ նա քան զայս սէր ոչ ոք ունի, դի զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։

269. Հ. Ածական մը ի՞նչպէս գերազրական կ'ըլլայ։

Պ. Ածական մը գերազրական* կ'ըլլայ, այսինքն բանի մը յատկութեան գերազանց կամ վերջին աստիճան ըլլալը կը ցուցնէ յոյժ, կարի, անհնարին և ուրիշ ասոնց նման բառերով. զոր օրինակ,

Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ. Տէրը մեծ է և վերջին աստիճան օրհնեալ։ Եւ էր տեղին կարի բացարձակ ի նոցանէ. Տեղը վերջին աստիճան հեռու էր անոնցմէ։ Կարի զօրաւորագոյն քան զմեզ եղեր. Մենէ շատ աւելի զօրաւոր եղար։ Մի կարի արդար լինիր. Զափազանց արդար մի ըլլար։ Եթէ կարի յանարգայ

* Սովորաբար կը կարծուի թէ -ագոյն մասնիկն ունեցող ածականք գերազրական են. ինչպէս -ագոյն-կալ, -ագոյնմասն, -ագոյն-գէտ, -ագոյն-զօր, և այլն. բայց պէտք է գիտնալ որ, քան հնագոյն և քնարեւագոյն մատենագրաց, -ագոյն կամ -ագոյն մասնիկը, որ -ագոյն բառին համառօտեալը կամ մեկ մասն է, բայանուններու վրայ կը դրուի, և -ագոյն քան կամ -ագոյն կը նշանակէ ոչ թէ -ագոյն -ուէ կամ էլ-ագոյն. կամ թէ ընդք, յոյնարէն ագոյն բառին կը պատասխանէ, ոչ թէ գոյն գերազրական մասնիկն։ Ուստի, -ագոյնալ, -ագոյնմասն, -ագոյն-գէտ, -ագոյն-զօր, -ագոյն-էրկիւ, և այլն. -ագոյն քան բառնող (իր էլեանուէթեանը տակ ունեցող), -ագոյն քան իմացող, -ագոյն քան գիտցող, -ագոյն քան զօրող, -ագոյն քան կամ -ագոյն տիրող, -ագոյն փրկող կը նշանակեն, ոչ թէ -ագոյն -ուէ իմաստուն, -ագոյն -ուէ գիտուն և այլն։ Այս մասնիկն որեւէիցէ ածականի սկիզբը կցելով գերազրական շինելը յատնագոյն հղինակաց գործ է և ասմկօրէն է։

ոք իցէ · եթէ յեսին աստիճանի անարդներէն մէկն է։ Ընկերին ընա յանհնարէն ի խոր վիրապն · վերջին աստիճան խորունկ վիրապ մը նետեցին ։ Աշտարակ մի բարձր անհնարէն · վերջին աստիճան բարձր աշտարակ մը ։

270. *Հ. Ածականները միշտ գոյականի՞ հետ կը գործածուին ։*

Պ. Շատ անգամ ածականի մը գոյականը զօրութեամբ կամ լռելեայն կ'ենթացուի, և այն ատեն ածականը ըստ անհնարէն առնուած կ'ըսուի, զոր օրինակ ·

Անդէմն (վոխանակ՝ այր անդգամ) անգոսնէ դիրքատ հօր · Աբդատ (աբ+ արդարք) ժառանգեսցեն պերկիր · Տեսցես զԹագաւորն (զԹագաւ մեծամեծս) Աստուծոյ · ի ճանապարհս ամբարշտաց մի երթայցես · եթող զճանապարհս այդու իւրոյ, և գնաց ընդ անդիրքին (անջրդի տեղւոյ) և ընդ անապատ · եղիցին դժոխոյնն 'ի դէպքին · Կալ+ գնան · Բարձ+ սրբին · Մեհեան+յառնեն · Զքաւականքն իրրեւ զօդոյկաց թեւադրեալ կարծեցուցանիցէ · Անկանիցին 'ի յոչնահատն · Ընտրել զքաւին և զշար · Տեսաք զմն (զայր ումն) որ յանուն քո դեւս հանէր · Գնաց ոմն յագարակ իւր և ոմն ի վաճառ իւր · եթէ ոչ զհանգամանս իրաց ինչ գիտիցէ · Ոմանք զայս ինչ ասէին, այլ զայլ ինն ազազակէին ։ (Տես և թիւ 252)։

Գ. ԴԵՐԱՆՈՒՆ

1. *Ցուցական դերանուն*

271. *Հ. Այդ, անդր, ասդ, անդ, ասդէ, անդէ մակբայները երբեմն ի՞նչ բանի տեղ կը գործածուին ։*

Պ. Այդ, անդր, այդր · ասդ, անդ · ասդէ, անդէ, այդէ, մակբայները շատ անգամ այս, այր, այն, ածականներուն տեղ կը գործածուին ։

Այդ, անդր, այդր, կը դրուին, երբ գործողութիւնը ընդհատ կը ցուցնէ · Ասդ, անդ կը գործածուին, երբ գործողութիւնը դադարեալ է · Ասդէ, անդէ, այդէ կը դրուին բացառական հոլովներուն հետ, զոր օրինակ ·

Առաքեցին 'ի քաղաք անդր · վոխանակ 'ի քաղաքըն յայն ։ Բնակեաց յերկրի ասդ իմում · վոխանակ՝ յերկրիս յայսմիկ ։ Ի քաղաքէ անտի · վոխանակ 'ի քաղաքէն յայնմանէ ըսելու ։

Մի սատակեսցուք, որպէս եղբարքն մեր յանապատի անդ · Զնչել 'ի տեղւոջէ անդէ գյիշատակ նոցա, ինքն առ գկէս 'ի զօրաց անդէ · Սկսան հուր հարկանել 'ի բանակի անդ · Ոչինչ էր 'ի ներքս 'ի տաճարի անդ · Իցեն բազումք 'ի մանկտւոյ այդէ որ ընդ ակամբ հայիցին · Գաջութեամբ վոխեցայց յաշխարհէ ասդէ · Մի զարհուրիր դու 'ի չարաչուք դահճէ այդէ · Կարգացին առ տէր այդ առնել հայել 'ի ժողովուրդ անդր որ կոխեալ եղեւ 'ի հեթանոսաց · Սկն ունիմ ապրել 'ի գժուարին հիւանդութենէ ասդէ ։

2. *Սեռական դերանուն*

272. *Հ. Սեռական դերանունդ վրայ ի՞նչ գիտելիք կայ ։*

Պ. Սեռական դերանունները ի՛մ, ի՛ս, ի՛ր, մեր, ձեր, նո՛ր, երբ իրր դերանուն, այսինքն՝ մինակ, առանց գոյականի, կը գործածուին, ինծի, ինձ, ինքնիր, ինքնին, ինքնէն կը նշանակեն, և այն ա-

տեն միշտ յօդ (ն) կ'ուզեն, երբ ձէր ըսչ և ինդէր են, եթէ պոզոբէլէ են, յօդ չեն առներ, զոր օրինակ.

Ճանաչեմ ջիմն և ճանաչիմ չիմոն: Իմինէրս կը ճանչնամ, իմիններէս ալ կը ճանչցուիմ: Ցիմմէ անդի առնուցու. Իմինէս պիտի առնէ: Ա՛ռ զէոյոդ. Քոալիններէդ առ: Զէոյան 'ի էոյոս քեզ մատուցանեմք. Եթէ 'ի էոյոմ ինչ երկմտիցես, 'ի նորայոյն հաւատասջիր. Ցիբոն եկն և իբէն չնա ոչ ընկալան. Ոչ թէ նա կարօտ ձրովէս իցէ, այլ մեք ամենեւին նորայովքն:

Նոր, նոյա, իբէնց յատկացուցիչներն ալ այս կերպով կը գործածուին, ասոնք նաեւ կը հոլովին, նոբա, նոբայս, նորայով. նոյա, նոյայս, նոյայոց և այլն, և կը նշանակեն անոր, անոնց, իբէնց, զոր օրինակ.

Ոչ եթէ նա ինչ կարօտ մերովքս իցէ, այլ մեք ամենեւին նորայովն. Ոչ եթէ ան կարօտ է մերիններբուն, այլ մենք բոլորովին (կարօտ ենք) անոնցմէ: Զինչ հաւատարութիւն իցէ ձերայոյն ընդ նորայոյն. Զերիններուն և անոնցմէ մէջ տեղ ինչ հաւատարութիւն կայ: Զհոգայցեմք ինչ ընդ նոյա. այլ նոյայոյն ջ Անոնց համար հոգ չընենք, այլ անոնցմէ համար: Զինչ նման իցէ սորա մահս նորայոյն. Ասոր մահն անոցին (անոր մահուանը) ինչ կը նմանի: Որ գէ՛բէնցն խնդրեն. Անոնք որ իբէնցը կը փնտռեն:

3. Բարբառական դերանուն

Որ բառին գործածութիւնը

273. Հ. Որ բառն իբրեւ ածական ի՞նչպէս կը գործածուի:

Պ. Որ, ո բառը, իբրեւ անորոշ ածական և

իբրեւ հարցական դերականի հետ կը գործածուի, զոր օրինակ.

Ցոր տուն մտանիցէք՝ անդ ապրիք. Որ տուն որ կը մտնէք, հոն մնացէք: Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ. Որ յոյսին համար կ'ամբաստանուիմ: Վասն որոյ պատճառանաց մեռանիմն՝ յայտ առնէր. Ինչ համար որ պատճառի համար մեռնիլը կ'իմացներ: Որով լեզուաւ օրհնեմք, նովին և անիծանեմք. Որ լեզուաւ որ կ'օրհնենք, անով ալ կ'անիծանենք: Ցորմէ արարչէ երկիր լեալ է՝ 'ի նմանէ և գաղանքն արարեալ են. Որ արարչէ որ երկիրը ստեղծուած է, գաղաններն ալ անկէ ստեղծուած են: Ո՛ր և երթայր առ նոսա՝ ուսուցանէին. Ով որ անոնց կ'երթար՝ կը սորվեցնէին: Ո՛ր յառաջ առիս հասցէ, զնա թագաւոր արարիցէ. Ով որ առաջ ինձի կուգայ, անիկա թագաւոր պիտի ընեմ: Որ որ լուծցէ ինչ 'ի պատուիրանացս յայտցանէ. Ով որ ասոնց պատուիրաններէս մէկը կը լուծէ: Ցամենայնն հինգերորդի, որ օր եօթն էր ամսոյն: Ո՞ր են զօրքն որ չուրջ զնովաւ կային. Ո՞ր զօրքերն են որ անոր բոլորտիքը կեցած էին: Ցորմէ՞ քաղաքէ ես դու: Վասն որո՞յ գործոյ քարկոծ առնէք զիս. Ո՞ր գործի համար զիս քարկոծել կ'ուզէք, և այլն:

274. Հ. Որ կամ՝, իբրեւ յարաբերական դերանուն ի՞նչ պաշտօն ունի:

Պ. Որ կամ՝, իբրեւ յարաբերական դերանուն խօսքին մէջ առաջ յիշուած բառ մը կը յարաբերէ:

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ՛ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Յովսէփ, այրն Մարեմայ, որոմ խօսեցեալ էր զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս. Եւ ժամանակս և տեղիս որով զերծանիցին 'ի մեղաց:

Այս օրինակներէն առաջնոյն մէջ ու կը յարաբերէ հայրը, այսինքն անոր տեղ դրուած է։ Երկրորդին մէջ ուր՝ կը յարաբերէ ծովեզրը, իսկ յորմէ կը յարաբերէ Մոսկուան։ Երրորդ օրինակին մէջ ուրկէ կը յարաբերէ ձմռանակ և թեղէս բառերը։

275. Հ. Յարաբերական դերանունն ի՞նչ տեսակ բառեր կը յարաբերէ։

Պ. Յարաբերական դերանունն ամէն դէմքի անուն կամ դերանուն կրնայ յարաբերել, ըստ օրինակ.

Ես որ խօսիմ. Դուն որ լսես. Նոքա որք լուան. Այդ որ խօսեցաւ։

276. Հ. Ի՞նչ կը կոչուի այն բառը, զոր կը յարաբերէ յարաբերական դերանունը։

Պ. Այն բառը զոր յարաբերական դերանունը կը յարաբերէ՝ յորաքերեալ կ'ըսուի. նախընթաց օրինակներուն մէջ ես, դուն, նոքա, այդ բառերը յորաքերեալ են։

277. Հ. Յարաբերականը ո՞ր բառին քով կը դրուի։

Պ. Յարաբերականը, բոլոր երեն վերաբերեալ բառերուվը, յարաբերելոյն անմիջապէս քովը կը դրուի. ըստ օրինակ.

Հայրն քո երկնաւոր ու պէտք է ձաձուկ։ Ամենեցուն ու է ձողովրդեան էին՝ աչք ի նա հայէին. Ոչինչ աւելի քան զմանկ զոր ընտեսուի ուրիշեն՝ ասեն. Եւ զայնոսիկ ու բնաւ էակ անօրէն էցեն՝ ըմբերանէր. կուրիւն զորոյ ձեռքեաց զաշ

նուէն և եբաց՝ յայտ արար. Շուտս ատ զայնոսիկ ու յանհնարին ամբոխդոնելուս էցեն՝ կոչէ. եկի զանէծս օրինացն ու ճառ յանցանաց եդան՝ լուծանել։

278. Հ. Յարաբերականն, երեն վերաբերեալ բառերով, խօսքին ի՞նչ մասն է։

Պ. Յարաբերականն, երեն վերաբերեալ բառերով, դիջանկնաղադասութիւն է և ելնուր նախադասութեան մէկ մասին, այսինքն տէր բայիին, առարկելոյն կամ լրացուցին, վրայ մասնաւոր իմաստ մը կ'աւելցնէ, ըստ օրինակ.

Հայրն քո երկնաւոր ու պէտք է ձաձուկ՝ հատուցանէ քեզ յայտնապէս. երկնաւոր հայրդ ու ձաձուկ կը տեսնէ՝ քեզի յայտնապէս պիտի հատուցանէ։

Այս խօսքին մէջ, Հայրն քո երկնաւոր հատուցանէ քեզ, ելնուր նախադասութիւն է. ու պէտք է ձաձուկ, նախադասութիւն է դիջանկնալ, և դիմաւոր նախադասութեան տէր բայիին վրայ, որ է՝ Հայրն քո երկնաւոր, մանաւոր իմաստ մը, այսինքն՝ ի ձաձուկ տեսնող ըլլալուն իմաստը կ'աւելցնէ։

Ամենեցուն ու է ձողովրդեան էին՝ աչք ի նա հայէին. ժողովրդանոցին մէջ եղող ամենուն աչքերն անոր կը նայէին։

Այս խօսքին մէջ ալ, Ամենեցուն աչք ի նա հայէին, ելնուր նախադասութիւն է. ու է ձողովրդեան էին, նախադասութիւն է միջանկեալ, և դիմաւոր նախադասութեան « աչք » տէր բայիին յատկացուցչին վրայ, որ է՝ ամենեցուն, մանաւ-

ւոր խմաստ մը, այսինքն՝ ժողովրդականացին մէջ ներկայ ըլլալուն խմաստը կ'առնէ։

279. Հա՞րկ է որ միջանկեալ նախադասութիւնը միշտ գլխաւոր նախադասութեան մէջտեղը դրուի։

Պ. Հարկ չէ. կրնայ գլխաւոր նախադասութիւնը բոլոր իր մասերովը յառաջ դրուիլ, և միջանկեալը՝ ետքը, բայց յարաբերականը յարաբերելոյն քով դալու է, ուստի վերի խօսքերը կրնանք այսպէս դարձունել։

Հարուածէ մեղ այդպիսի հայրն ու երկնաւոր որ տեսանէ ի ծածուկ։ Ինձ հայհոյեցին այն անձինքն որ ի ժողովրդեան էին։

280. Հ. Գլխաւոր և միջանկեալ նախադասութիւններն ուրիշ ի՞նչ կերպով կրնան շարուիլ։

Պ. Միջանկեալ նախադասութիւնը կրնայ առաջ դրուիլ, և գլխաւորը՝ ետքը, դոր օրինակ.

Որո՞ք քարոզ առնէք՝ առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ. փոխանակ ըսելու, ի նմանէ որո՞ք քարոզ առնէք՝ առաւել եւս պահանջեսցեն։

Այսպէս են հետեւեալ օրինակները.

Որ երթ ընդ մեզ այնկոյս Յորդանանու, որո՞ց պոռն վճռեսցէք՝ ահաւասիկ նա մկրտէ. փոխանակ ըսելու, Ահաւասիկ մկրտէ նա՝ որ էր ընդ քեզ, և այլն։ Եւ որ ղրկեալն վճռէին՝ ասէ ցնոսա. փոխանակ՝ Ասէ ցնոսա որ ղրկեալքն վճռէին։ Որոց ոչխէն ի մարմնոյն ելանէին՝ արկանէր զնոսա մի ըստ միոջէ ի դեհենն. փոխանակ՝ Արկանէր ի դեհենն զնոսա՝ որոց ոչխէն ի մարմնոյն ելանէին։

281. Հ. Յարաբերականը կրնա՞յ յարաբերեալէն հեռու մնալ։

Պ. Յարաբերականը կրնայ յարաբերեալէն քիչ շատ հեռու մնալ, եթէ խօսքին մէջ յայտնի կ'իմացուի թէ ո՛րն է յարաբերեալը. ինչպէս.

Ամենեքին կորեան որ ընդ նմայն էին. Զոպպէացւոց ամրացոյց որ ի վերայ ծովուն էր։

Յայտնի է թէ որ, առջի խօսքին մէջ, ամենեքինը կը յարաբերէ ոչ թէ նրբեանը որ բայ է. երկրորդ խօսքին մէջ ալ որ, եղակի բայով, ո՛չ Զոպպէացւոց բառը կը յարաբերէ որ յոգնակի է, ոչ ալ ամբացոյցը որ բայ է, այլ՝ քաղաք բառը։

282. Հ. Յարաբերականն իր հոլովը կրնա՞յ փոխել։

Պ. Երբեմն յարաբերականն իր հոլովը փոխելով յարաբերեալին հոլովը կ'առնէ, դոր օրինակ.

Եւ դիս չնչեա ի պղծութենէն՝ յորմէ պրեցեր. փոխանակ՝ յորմէ պրեցեր։ Ձօրէ յայնմանէ՝ յորմէ գերեաց. Ձօրէ՝ յորմէ եհան. Ձօրէ՝ յորմէ լուաք. Ձօրէն յայնմանէ՝ յորմէ եկիր յանապատս. փոխանակ ըսելու, յորմէ գերեաց, եհան, լուաք, եկիր։ Առ դիս յերկինէն՝ որոյ ծնեալ էի. փոխանակ՝ որ ծնեալ էի։ Ցպղծէ Ցուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ պղծէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց. փոխանակ՝ զորմէ պղծէ և այլն։ Լսել զածինսն՝ զոր հրամայեալ է քեզ ի տեառնէ. փոխանակ՝ որ հրամայեալ է։ Զոր ինչ և ձեզ հաճոյ թուեսցի՝ զայն գործեցէք. փոխանակ՝ որ ինչ և ձեզ հաճոյ թուեսցի՝ զայն գործեցէք։ Որոց նստէին յաշխարհին և ի տուեբս մահու՝ լոյս ծագեաց նոցա. փոխանակ՝ Լոյս ծագեաց նոցա՝ որ նստէին, և այլն։

Ամենքո՜ն ուրդ էք ՚ի Հռոմ սիրելեաց Աստուծոյ. փոխանակ՝ ամենեցուն ուր էք, ևայլն։ Ի վերայ միոյ ՚է լերան յորոյ ասացից քեզ. փոխանակ՝ Զորոյ ասացից քեզ, ևայլն։

283. Հ. Ցարաբերականին եղակին կրնա՞յ նաև յոքնակի բառ յարաբերել։

Պ. Ցարաբերականին եղակի ուղղականն ու Հայցականը կրնան նաև յոքնակի բառ յարաբերել, մանաւանդ եթէ յարաբերեալը դերանուն է, զոր օրինակ.

Երանի այնոցիկ ուր սուրբ են սրտիւք. Մեր ուր կենդանւոյն մնացեալ խցեմք. Զքո՜ձն զոր ես գործեմ. Ամենայն ոմանոց ուր սողին ՚ի վերայ երկրի. Զշրջե՜ն զոր հասոյց ՚ի վերայ ազգին։

Եթէ յարաբերեալն անեղական բառ է, յարաբերականն ուրիշ հոլովներու մէջ ալ եղակի կրնայ դրուիլ, զոր օրինակ.

Հասին առեքե՜ն որո՜ց ցանկային. Ի կոքձեա՜ն կասկածանաց յորո՜ց երկնչիմ։

Ա՜ոքէ, կոքձէ, անեղական անուններ են։

284. Հ. Ուր յարաբերականը դիմաւոր բայով ի՞նչ բանի զօրութիւն ունի։

Պ. Ուր յարաբերականը, դիմաւոր բայով, աշխարհաբարին պէս և՝ վերջաւորած բառերուն զօրութիւնն ունի, զոր օրինակ.

Այրն ուր էին. Եկող մարդը։ Ծառայքն ուր պեսին գայս. Ասիկա փշանող ծառաները։ Զինուորն ուր սպան զնա. Զանի սպաննող զինուորը։

285. Հ. Ա.յսպիսի խօսքերու մէջ կրնա՞յ յարաբերականն իր մասերովը յարաբերեալէն առաջ դրուիլ։

Պ. Ցարաբերականն իր մասերովը կրնայ երբեմն երբե՜ք յարաբերեալէն առաջ դրուիլ, զոր օրինակ.

Որ ա՜ուէրացն զե՜ն հայր. փոխանակ ըսելու, Հայրն ուր ա՜ուէրաց զե՜ն. Զե՜ղէղ հայրը։ Որ բա՜բո՜ւէ վերակա՜ց՜ լինին երիցունք. այսինքն, երիցունք ուր բա՜բո՜ւէ վերակա՜ց՜ լինին. Աղէկ վերակացու՜ներ՜ն ընդ երէցները։ Դեմետրիոս և ուր ընդ նմա ճարտարք. Իրրև լուան ուր յերկա՜ղեմ առաքեալքն էին. այսինքն, առաքեալք ուր յերկա՜ղեմ էին։ Ախղէկին ի նմանէ ուր է ընդդի՜մ՜ընե՜ն անդր հաւատացեալք. այսինքն, Հաւատացեալք ուր է ընդդի՜մ՜ընե՜ն անդր (էին)։ Ողջոյն տան քեզ ուր ընդ են ամենեքին. այսինքն, Ամենեքին ուր ընդ են։

186. Հ. Ա.յսպիսի խօսքերու մէջ, եթէ յարաբերեալը հոլոված է, յարաբերականն ի՞նչ կ՚ըլլայ։

Պ. Ա.յսպիսի խօսքերու մէջ, եթէ յարաբերեալը հոլոված է, այսինքն՝ ուղղականէն զատ ուրիշ հոլով է, յարաբերականը յարաբերելոյն հոլովը կ՚առնէ, իսկ յարաբերեալը ուղղականի կը փոխուի, զոր օրինակ.

Մարգարէանայ զոր առյապա անդ՜ ընդ Սաուղ անցանելոց էին. փոխանակ ըսելու, Մարգարէանայ զոն՜ ուր առյապա անցանելոց էին ընդ Սաուղ։ Որ՜ոց առ դերութեամբ տրքե՜քէ՜ առաջին է սա. այսինքն, Առաջին է սա տրքե՜քէ՜ ուր (էին) առ դերութեամբ։ Ապստամբութիւն ուսուցանես ի Մովսէսէ ուր՜ոց ի հեթանոս ամենայն հրեայ են. այսինքն, Ապստամբութիւն ուսուցանես ամենայն հրեից ուր (են) ի հե-

թանոս ։ Մարգարէքն որք վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհին՝ մարգարէանային . այսինքն , Մարգարէականային վասն շնորհացն որ լինելոց էին ի ձեզ ։ Ոչ ելի յերուսաղէմ ասա որ յառաջագոյն քան զիս առաքեալն էին . այսինքն , Ոչ ելի առ առաքեալսն որ էին յառաջ քան զիս ։ Դարձաւ ասա որս նստէին եղբօրին . այսինքն , Դարձաւ ասա եղբարսն որ նստէին ։

287. Հ. Յարաբերեալը միշտ դրուելո՞ւ է խօսքին մէջ ։

Պ. Դերանունն յարաբերեալը շատ անգամ լռելեայն կ՚ենթացուի , զոր օրինակ .

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ . այսինքն , Նա որ ձեզ լսէ , Զեզ մտիկ կ՚ընէ ։ Որ ընդհանուր ի միտ առցէ . այսինքն , Նա որ ընդհանուր . Կարգացողը թող հասկնայ ։ Որ ոչն ջրթնջնէ՝ և կերիցէ մի . այսինքն , Նա որ ոչ գործէ . Ջրթնջողը թող չուտէ ։ Որ նախոն գիս՝ ետես զհայր իմ . այսինքն , Նա որ ետես զիս . Զիս պեանողը հայրս տեսաւ ։ Զոր լոատն և պեսատ՝ պատմեմք ձեզ . այսինքն , Զոյն զոր լուաք և տեսաք . Ինչ որ լսեցինք և տեսանք (տաճկաբանութեամբ՝ լոծինք և պեսծինք) ձեզի կը պատմենք ։ Զոր ասեն՝ այսպիսի ինչ է . այսինքն , Այն ինչ զոր ասէ . Ըսածը սա է ։ Զոր ժողովեցեալքն ոմն լինիցի . այսինքն , Այն զոր ժողովեցեր . ժողվածը որու պիտի ըլլայ ։

288. Հ. Երբ դերանուն յարաբերեալ մը լռելեայն կ՚ենթացուի , անոր տեղը լեցնելու համար ստվերաբար ի՞նչ կ՚ըլլայ ։

Պ. Երբ դերանուն յարաբերեալ մը լռելեայն կ՚ենթացուի, յարաբերականէն անմիջապէս առաջը եկող բառին վրայ դիտդը կը դրուի, զոր օրինակ.

Որ ննջեցեալքն՝ զիշերի ննջեն . Որ զիտն սիրեն . Որ զնովաւն էին . Որ չուրջն կային զնովաւ . Որ զհետն երթային . Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք ձեզ . Որոց պարտն էր խնդալ՝ լան . փոխանակ , Նոյա որ ննջեն՝ զիշերի ննջեն . Նոյա որ զիս սիրեն , որ էին զնովաւ , որ չուրջ զնովաւ կային , որ զհետ երթային . Զայնոցիկ զոր լուաք եւ տեսաք՝ պատմեմք ձեզ . Նոյա որոց պարտ էր խնդալ՝ լան ։ (Տես եւ թիւ 291. 2°) ։

289. Հ. Եթէ լռելեայն ենթացուած դերանուն յարաբերեալը հոլոված է , յարաբերականն ի՞նչ կ՚ըլլայ ։

Պ. Եթէ լռելեայն ենթացուած դերանուն յարաբերեալը հոլոված է , յարաբերականը սովորաբար անոր հոլովը կ՚առնէ , զոր օրինակ .

Որոյ խնդրէ ի քէն՝ տուր . այսինքն , Այնմ որ խնդրէ ի քէն՝ տուր . Թենէ խնդրողին տուր . Դուք երկիր պագանէք որոյ ոչն գիտէք . մեք երկիր պագանեմք որոյ գիտեմքն . այսինքն , Դուք երկիրպագանէք այնմ զոր ոչ գիտէք . մեք երկիր պագանեմք այնմ զոր գիտեմք ։ (Աշխարհաբար տաճկաբանութեամբ . Դուք չգիտցածնուդ երկրպագութիւն կ՚ընէք . մենք գիտցածնուս երկրպագութիւն կ՚ընենք) ։ Բաղցր է աէր որոյ սպասեն նմա . այսինքն , Անոյնիկ որ սպասեն ։ Դուք ոչ մտանէք , եւ որոյ մտանեն՝ չտայք թոյլ մտանել . այսինքն , Անոյնիկ որ մտանեն ։ Եւ առ յորոյ ածէրն ձեռամբ իւրով պատարագս . այսինքն , Առ ձեռամբ իւրով պատարագս յանցանք զոր ածէր . Բևրածնելէն իր ձեռքովն ընծայ առաւ ։ Երանի որոյ թողութիւն եղեւ մեղաց . այսինքն՝ երանի անոյ որոյ թողութիւն եղեւ մեղաց ։ Վասն որոյ առաքեցան ի Յովհաննէ . այ-

սինքն, վասն այնոյիկ որ առաքեցան։ Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ զոյց տեսերն և լուար. այսինքն, եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ այնոյիկ զոր տեսեր։ Ոմանք յոյց անդն կային. այսինքն, Ոմանք ի նոցանէ զոր անդ կային։ Կարդացին առ զոր յամենայն ժամանակի օգնական լինէր ազգին իւրեանց. այսինքն, կարդացին առ նա զոր, եւ այլն։ Կըրել պատուհաս ընդ զոյց գործիցէ. այսինքն, կրել պատուհաս ընդ այնոյ զոր գործիցէ։

290. Հ. Կրնայ յարաբերականը լռելեայն իմացուած յարաբերելոյն հոլովը չառնել։

Պ. Կրնայ, զոր օրինակ.

Վասն զոր հարկանէ զակն. Զինչ բան տայ պատասխանի զոր առաքեացն զիս. Որում խնդրէ ի քէն՝ տուր, եւ զոր կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. Որ ի ներքս անդ էին՝ ինքնին Յուդա նետ եւ զէն մատուցանէր. Ծագեա զողորմութիւնս քո այժ ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ զուղիղ են սրտիւք. Վայ այժ իմանեն յեղիպտոս. Երանի զոր քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան. Զիարդ դժուարին է զոր զինչդ ունիցին մտանել յարքայութիւն Աստուծոյ։

Ըստ նախընթաց կանոնին պէտք էր ըսել,

Վասն զոյց հարկանէ զակն. Զինչ տայ պատասխանի զոյնմ առաքեացն զիս. Ոյնդ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. Ոյց ի ներքս էին. Ոյց ճանաչեն զքեզ. Ոյց ուղիղ են սրտիւք. Վայ զոյց իմանեն. Երանի զոյց քաղցեալ իցեն. Ոյց զինչս ունիցին։

ա, ը, ն ԳԻՐԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

291. Հ. Ս, ը, ն գիրերուն գործածութեանը վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Ս, ը, ն գիրերը, որ, ըստ ումանց, դիմորոշ յօդ կը կոչուին, դերանուանական նշաններ են, և կը գործածուին։

1° Փոխանակ այս, այդ, այն, ցուցական ածականաց, գոյականին վերջը կցուելով, զոր օրինակ.

Տեսանեմք զաշխարհս ի պէսպէս կերպարանս. այսինքն՝ զաշխարհս զայս։ Զարիքս որ լինին՝ ուստի իցեն. այսինքն՝ չարիքս այսոցիկ։ Ինչդ իմ միայն եթող զիս ի սպասու. այսինքն, Ինչդ իմ այդ։ Սրի, առ զմանուկդ եւ զմայր նորա. այսինքն, զմանուկդ զայդ։ Այս երեք ամբ են յորմէ հետէ գամ խնդրել պատուղ ի թզենւոջդ եւ ոչ գտանեմ, արդ կարեա զդա, ընդքէր եւ զերկիրդ խափանէ. այսինքն, ի թզենւոջդ այդոյդ, զերկիրդ զայդ։ Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս. այսինքն, Մանկտւոյդ այդոյդ։ Դուրքդ փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. այսինքն, Դուրքդ այդոյդ, մանկունքս այսոցիկ։

2° Ս, ը, ն գիրերը զոր յարաբերականէն անմիջապէս եառքը եկող բառին վրայ կը դրուին, երբ դերանուն յարաբերեալ մը ե՛, ը՛, ն՛, և այլն, լռելեայն կ'իմացուի։ (Տես թիւ 288)։

292. Հ. Ս, ը, ն գիրերուն ո՞րը ո՛ր դերանուան տեղ կը դրուի։

Պ. Ընդհանրապէս ս գիրը ե՛, ա՛, ս՛ դերանուանց տեղ կը դրուի, ը գիրը՝ ը՛, ը՛, այ

դերանուանց, ն դիրը՝ նա և այն դերանուանց տեղ. զոր օրինակ.

Որ խօսիմ ընդ քեզ. Որ կարողք եմք. փոխանակ, Ես որ խօսիմ, Մեք որ կարողք եմք:

Որ աստ է. Որ խօսինս. այսինքն, Սա որ աստ է, Սոքա որ խօսին:

Զոր խորհեցայս առնել. Մի ոք աղաւթիցէ զոր ասեմ. Զորոց մեք խօսիմք. փոխանակ, Այս ինչ զոր խորհեցայ, Զայս ինչ զոր ասեմ, Այսոքիկ զորոց մեք խօսիմք:

Որ ձիթենիք վայրենի էիր. Զոր եպ սիրեմ. Որ ի Դէթ էք. Որ չեւք էք սրբեալ, փոխանակ, Դուա որ ձիթենի վայրենի էիր, Դուա զոր ես սիրեմ, Դուք որ էք ի Դէթ, Դուք որ չեւ էք սրբեալ:

Որ ի քէնդ առաքեցաւ. Որ չուրջ զմեօք բնակեալ են. Որ իբրեւ զքեզ իցեն, այսինքն, Դա որ ի քէնդ առաքեցաւ. Դոքա որ չուրջ զմեօք բնակեալ են. Դոքա որ իբրեւ զքեզ իցեն:

Զոր դուք առնես. Հաստատուն կաց յոր ուսարբէք. Ընդ որս դուք զարմանայք. Դիտիցես արդեօք զոր ընթեռնուցուսք. փոխանակ, Այդ ինչ զոր դուա առնես. Հաստատուն կաց յայդ զոր ուսար. Այդոքիկ ընդ որս դուք զարմանայք:

Որ ի նմայն ծնեալ է. Որում դուն վկայեցեր. Որ զնովաւն էին. Ծորս դուքն պանծացեալ էք. փոխանակ, Նա որ ի նմա ծնեալ է. Նա որում դուն վկայեցեր. Նոքա որ զնովաւ էին. Նոքա յորս դուք պանծացեալ էք:

Զոր մեքն քարոզեմք. Զոր Աստուածն կամի. Մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք՝ չխօսել. փոխանակ, Այն զոր մեք քարոզեմք. Այն ինչ զոր Աստուած կամի. Ոչ կարեմք զայնոքիկ զոր տեսաք եւ լուաք՝ չխօսել:

293. Հ. Ս, ր, ն դիրերը միշտ լաբիալային իմացուած յարաբերեալի տեղ կը գործածուին:

Պ. Եբբէնի կը գործածուին նաեւ, երբ յարաբերեալը խօսքին մէջ բացատրուած է, զոր օրինակ.

Ես որ կապեալս եմ: Զայրն զորմէ դուք ասէք. Ոմանք ի սոցանէ որ աստս կան. կանայսն որ չուրջ զնովաւն կային. Դարձայց ի դուն իմ ուսոի ելին. Զինչ է այդ զոր դուքդ գործէք:

Այս խօսքերուն մէջ ս, ր, ն դիրերն աւելորդ են, վասն զի յարաբերեալները բացատրուած են:

294. Հ. Ս, ր, ն դիրերը ուրիշ բառերէ առքն ալ կրնա՞ն դրուիլ:

Պ. Ս, ր, ն դիրերը կը դրուին նաեւ

1° Ու ինչ, ինչ բառերէն անմիջապէս առքը եկող բառին ծայրը, զոր օրինակ.

Զոր ինչ տեսանեմքն՝ ասեմք. Զոր ինչ ես գործեմ. Այր դու, չգիտեմ ինչ ասեսդ. Դիտիք ինչ արարիդ:

2° Մինչ, յորժամ, ուր, ասպէս, որպէս, երբեմն բառերէն անմիջապէս առքը եկող բառին ծայրը, զոր օրինակ.

Մինչ էաքն մարմնով. Մինչդեռ կայրն կախեալ. Մինչ ինքն միայն էր. Մինչդեռ այդպէս կամէր լինել:

Ցորժամ յարեաւն ի մեռելոց. Ցորժամ քաղցեաւն. Ցորժամ զցուրն կամեցաւ փորձել. Ցորժամ եմ հեռի:

Ո՞ր են երթամ՝ դուք ոչ կարէք գալ. Ո՞ր են իցեմ. Ո՞ր երթամն զիտիցէք. Ո՞ր Քրիստոսն նստի:

Ո՞ասպէ եմն զիտէք. Զի մի տրտմութիւն կրիցեմ ասպէս արժանդ է ինձ ուրախ լինել:

Ոգի մարմին եւ ոսկեբս ոչ ունի , «բպէ» գիսա տեսանէք գի ունիմ . Զգործ տեառն գործէ «բպէ» եւ եսա . Որպէս եւ Ցոբն ասէ . Ելից եւ արարից «բպէ» միշտ . Որպէս յառաջագոյնն ասացաւ . Որպէս եւ կանխաւն ասէր . Գուցէ եկեալ ոչ «բպէ» կամիցիմ զբաժանիցեմ զձեզ : *

3° Ն գիրը կը գրուի ընդ չաղկապէն անմիջապէս եառքը եկող բառին վրայ , երբ ընդ չաղկապին յառաջ բերած խօսքը աներեւութի զօրութիւն ունի , զոր օրինակ .

Ոչ այնու միայն զարմանալի է (Աստուած) ընդ ածն ի չգոյէ ի գոյ ղչգոյսն , այլ գի եւ անարատ պահէ ղլեալսն . այսինքն , Ոչ միայն զարմանալի է վասըն ածելոյն ի գոյ , և այլն : Ո՞չ չատ իցէ քեզ այն ղի աւերեցելն դու ղեգիպտոս . այսինքն , Ո՞չ չատ իցէ քեզ աւերելն քո զեգիպտոս : Ոչ ընդ մեռաւն , այլ գի խաչեցաւն՝ այն աւելի են զարմանք . այսինքն , Ոչ ծնողելն , այլ խաչելն աւելի զարմանք են : Ոչ ընդ եկինն միայն , այլ առաւել եւս ընդ համարձակեցանն . այսինքն , Ոչ ծին նոցա միայն , այլ առաւել եւս հաղորդելն : (Տես եւ թիւ 301) :

4. Անորոշ դերանուն

Ինչ բառին վրայ գիտնիք

295. Ինչ անորոշ դերանունը քանի՞ կերպով կը գործածուի :

* Մին , յորժամ , ոմն , ոմանք , «բպէ» բառերէն եառքը ն , գ մանաւանդ ն , գրոց դրուելուն պատճառը սա է որ , այս բառերէն առաջ լռելեայն բառ մը կ'իմացուի : Մինչ , յորժամ՝ է ժամանակ կը նշանակէ , ոմն՝ է «բպէ»-յորմէ կամ՝ ոմանք՝ է «բպէ»-ոմն յորմէ , որպէս՝ ոմն ոմն . ոմանք գրոմ քսել է :

Գ. Ինչ անորոշ դերանունը կը գործածուի

1° Ածականի հետ և կը նշանակէ բան մը . զոր օրինակ,

Եթէ օձ չըլլէր արարած էր , ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա օգտակար . եթէ օձը ըլլար բան մը աստեղծուած էր , անոր մէջ օգտակար բան մը ամենեւին չէր գտնուեր :

2° Ինչ գոյականի հետ անորոշ նշանակութիւն ունի , և աշխարհաբար մը կը նշանակէ , եթէ գոյականը եզակի է . եթէ գոյականը յոգնակի է , ինչ աշխարհաբարի մէջ ամենեւին բան մը չի նշանակեր . զոր օրինակ ,

Կանեփուկն ընդ ինչ է , որոյ սերմն դեղ է , և կաղանչանան ալ ինչ առանձինն սպանող է , և խառնեալ ընդ այլ դեղոց՝ մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ . կանեփուկը ընդ մըն է որուն սերմը դեղ է . կաղանչանին մէկ պեսակն ալ առանձին սպանող է , բայց ուրիշ դեղերու հետ խառնուելով մաղձադեղ կ'ըլլայ և մահուանէ կ'ազատէ :

Յերոպան պեղէր ինչ են ծովուց , որոց ջուրն ըստ աճել լուսնին աճէ , ըստ ընուելն՝ ընու , և ըստ պակասելն՝ պակասէ . Եւրոպայի մէջ պեղեր կան որոց ջուրը լուսնին աճելուն համեմատ կ'աճի , լեցուելուն համեմատ կը լեցուի , և նուազելուն համեմատ կը նուազի : Բան ինչ են իմ ընդ քեզ . Գեղի հետ խօսք ունիմ : Եթէ նշանս ինչ ոչ տեսանիցէք , ձի հաւատայք . Եթէ նշաններ չէք տեսներ չէք հաւատար : Ուտել ոչ համաս ինչ խոտոց . Խոտերու աշխատիր ուտել :

3° Ինչ կը գործածուի առորոգելիներու , մակբայներու և բայերու հետ , երբ խօսքը թէական , բացատական և կամ հարցական է , և աշխարհաբարի մէջ բան մը չի նշանակեր . զոր օրինակ ,

եթէ քահանայ որ ինչ էր (սատանայ), ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան և ապա մխէր ի վորձութիւնան. եթէ (սատանան) զբաղած ըլլար, Աստուծմէ արտօնութիւն չէր խնդրէր (Յոբը) վորձելու համար։ եթէ հնար ինչ էր մարմնաւորեայ զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխել զկերպարանն յինչ և կամէր. եթէ մարմնաւորներուն հնար ըլլար իրենց կերպարանքը վոխել, նախ մարդ իր կերպարանքը կը վոխէր ինչ բանի որ կ'ուզէր։ Դպրութիւն կամ ճարտարութիւն կամ բժշկութիւն ոչ եթէ անչինէ ինչ են, այլ արդասիք անձանց. Իրականութիւնը, բանաստեղծութիւնը, բժշկականութիւնը ոչ եթէ ֆոթոկոպի ունեցող բաներ են, այլ դպրութիւն ունեցող բաներուն արդիւնքն են։ եթէ ըր ինչ էր օձ, ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա օգտակար. եթէ օձն ի բնէ ըր ըլլար, անոր մէջ ամենեւին օգտակար բան մը չէր գտնուէր։ Ոչ ընդ վայր ինչ ասացեալ է բան իմաստնոյն թէ, և այլն. Իմաստնոյն խօսքը վայրապար ըսուած չէ թէ, և այլն։ Մի ի ըր ինչ զբանս ծախեսցուք. ի ըր չծախենք մեր խօսքը։ Ոչ եթէ անբառնելոյ ինչ յաղթել չանամք, այլ իրաւամբ զճշմարիտն ուսանել. Ոչ թէ կը չանանք անբառնաքար յաղթել, այլ իրաւամբ ճշմարիտը տօրվիլ։ Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ. Զոհը որ կ'ընեմ օգուտ ունի։ Մարդիկ յանյո՞նց ինչ ունիցին զայնպիսի չարժմունքս, եթէ յԱստուծոյ լեալ իցեն այնպիսի. Մարդիկ էքենդե՞ունին այս կիրքերը, թէ Աստուծմէ այնպէս եղան։ Ծործամ դուստր զմայր անարգիցէ, և նու՝ զկեսուր իւր, և կինն՝ զայր, մի ինչ պարզին ընդ ձեզ որ անարգեցանն. երբ աղջիկը կ'անարգէ մայրը, և հարսը՝ կեսուրը, և կինն՝ այրը, թող չվշտանան անարգուողները։ Ոչ խօովէին ինչ, և ոչ գոաա ինչ ածէին. Ոչ կը խօովէին, ոչ ալ կը գոածէին։ Ոչինչ այսպիսի զմուտս ածին, և ոչ խօսեցան ինչ. Այսպիսի բան մը չխորհեցան, ոչ ալ խօսեցան։

ԵՄ ԲԱՑԻՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

296. Հ. Եմ բուն ի՞նչ տեսակ բայ է։

Պ. Եմ բուն եակա՞ կամ ֆոյակա՞ բայ է, և ստորոգելին տէր բայիին հետ կը կապէ, զորօրինակ սա խօսքին մէջ, Աոոոած ուղղ է, կամ, Աբդ է Աոոոած, են էական բայ է և ուղղ ստորոգելին կը կապէ Աոոոած տէր բայիին հետ։

Ես Եմ Աստուած. Հայր իմ է դու. Նա է տէր. Դուք բարեկամք իմ էք. Նոքա չէն աստուածք. Մինչ թշնամիք էք մեք Աստուծոյ. Կակուղ էին բանք նոցա. Որ յառաջն թշնամիք էին միմեանց, այնուհետեւ եղեն բարեկամք. Եղէ ես համր. Եղբօր կատարեալք. Ո՞ղջ էջե հայր իմ. Իմ է երկիրս. Քո էջե մատեանդ։

Բոլոր այս խօսքերուն մէջ եմ էական բայ է։

297. Հ. Եմ միշտ էակա՞ն բայ է։

Պ. Եմ շատ անգամ չէզոք բայ է, և կը նշանակէ.

1° Գոնուիլ (Տեղ մը), Նէրկայ ըլլալ, և անատեն խօսքին մէջ ստորոգելի չկայ. զորօրինակ, Աոոոած ամենայն ոաբեէ է. Հոս են՝ Նէրկայ է, կը ֆոնուի, ըսել է։

Հայր մեր որ յերկինս ես. Ուր երկու կամ երեք ժողովեալ իցեն յանուն իմ, անդ եմ (կը գտնուիմ) ես ի մէջ նոցա. Անդ էր (Ներկայ էր) այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր. Որ զվախուկան զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են (կը բնակին, կը գտնուին) Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում մինչգեռ ես ընդ ճանապարհի. Եղէ (Մնացինք, կեցանք) առ նոսա աւուրս եօթն։

եմ կը նշանակէ

2° Գոյ–ՐԻՒՆ ԱՆՆՈՒԼ. *կայ ըլլալ, զտրօրինակ.*

ԵՆ (կան) *ոմանք որ ոչ հաւատան. Հաւատալ արժան է այնմ որ մեր ձեռնայ առ Աստուած թէ է (կայ) Աստուած:*

298. Հ. *Եմ ուրիշ ի՞նչ բայի տեղ կը դործածուի և ի՞նչպէս:*

Պ. *Եմ շատ անդամ ունիմ բային տեղ կը դործածուի, բայց անաւուն ստացեալն իրը տէր բային ուղղական կը դրուի, իսկ ստացիչը՝ սեռական. կամ, ուրիշ բառերով ըսենք, ունիմին տէր բային սեռական դնելու է, իսկ սեռի խնդիրը՝ ուղղական. զոր օրինակ, փոխանակ ըսելու, Ոնէր նա դուռտր ն, կրնայ ըսուիլ, էր նոր դուռտր ն: Հոս, ինչպէս կը տեսնուի, ստացիչը, որ է նա, սեռական դրուած է, իսկ ստացեալը, որ է դուռտր, իրը տէր բայի՝ ուղղական:*

Ես իմ անդ եղբարք հինդ. Հոն հինդ եղբայր ունիմ: Իբրեւ զոչխարս որոց ոչ ինչ հովիւ. Հովիւ չունեցող ոչխարներու պէս: Ո՛վ իցէ կին որոյ իցեն դրամք տասն. Ո՛ր կին է որ տասն դրամ ունի: Առն միոջ էին երկու որդիք. Մարդ մը երկու որդի ունէր: Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես: Հարուստ մարդ մը կար, որ պնդիկ մը ունէր: Այլ եւս ոչխարք են իմ. Ուրիշ ոչխարներ ալ ունիմ: Իր նորա ստացուած բազում. Շատ ապացոյցներ ունէր: Եղեն նոցա ուստերք և դստերք. Տուներ և ագկինները ունէին:

299. Հ. *Փոխանակ ունէ, չէ բային, երբեմն ի՞նչ բառ կը դործածուի:*

Պ. *Փոխանակ ունէ, չէ բային, որ էական բային սահմանական ներկայի եզակի Գ. դէմքին բացասականն է, կը դործածուի երբեմն չէ բառը. զոր օրինակ.*

Ես եմ Աստուած և չէ այլ ոք. Ես եմ Աստուած ևս չէ մը կայ: Չէ ոք բարի բայց մի Աստուած. Չէ հնար. Չէ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի:

ԳՈՅ ԲԱՑԻՒՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

300. Հ. *Գոյ ի՞նչ տեսակ բայ է և ի՞նչ կը նշանակէ:*

Պ. *Գոյ չէզոք բայ է, և կը նշանակէ գոյութիւն ունենալ, ըլլալ, և աշխարհաբար կը թարգմանուի շատ անդամ կայ բային, երբեմն ալ, էական բային պէս (Տես թիւ 206), կը նշանակէ ունենալ:*

Ասաց անդգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ (չկայ) Աստուած. Ոչ գոյր (չկար) նոցա տեղի յիջեւանին: Մի համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ ձեզինչ, Գոյ (կայ) որ չարախօս կայ ձեզինչ, Մովսէս՝ յոր դուքըն յուսացեալ էք. Այլ և ոչ թէ հոգի սուրբ գոյ ունելով է մեր. Ես ոչ նուկ ըստ են ընկ հոգի ունէք կայ: Աղուեսուց որջք գոն և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ (տեղի) ուր զլուխ իւր. Աղաւնիները ոչխար ունին, և երկնից ընտանիները բոյներ, բայց որդին մարդոյ չունի ուր գլուխ դնէ:

Դ. ԲԱՅ

1. ԲԱՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԴԻՏԵԼԻՔ

296. Հ. Բայերուն ներկային, անկատարին, կատարեալին և հրամայականին վրայ մանաւոր դիտելիք կա՞ն։

Պ. Բայերուն ընդկայն, անկատարն, կատարեալն և հրամայականն վրայ մանաւոր դիտելիք չկան. ասոնք աշխարհաբարին միևնոյն ժամանակներուն զօրութիւնն ունին, և անոնց պէս կը դործածուին, զոր օրինակ.

Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, և ես գործեմ. Հայրըս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ։

Ծառաջադոյն հայհոյիչ էի և հալածիչ. այլ գթի ողորմութիւն, վի զայն յանգիտութեան գործէի. Առաջ հայհոյիչ և հալածիչ էի, բայց ողորմութիւն գտայ, քանզի չգիտնալով կը գործէի։ Ջցայգ և ղցերեկ գործեաւ վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ. Զենէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար գիշեր ցերեկ կը գործէինք։

Եթէ արժանի ինչ մահու գործեցի, ոչ պանչիմ ի մեռանելոյ. Եթէ մահու արժանի բան մը գործեցի, մեռնելու չեմ վխնաք։ Որդեակ, ինչ գործ գործեցեր դու ընդ մեզ. Որդեակ, ինչ գործ գործեցիր մեզի։

Որդեակ, երբ այսօր գործեաս յայգւոջ. Որդեակ, այսօր գնա այգին գործէ։ Ջամենայն ինչ գործեցիր առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ. Ամէն բան առանց տրտնջելու և մրմռալու գործեցէք։

297. Հ. Ապառնւոյն վրայ ի՞նչ դիտելիք կայ։

Պ. Ապառնին, այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձեւը զոր ապառնի կոչել սովորութիւն ե-

ղած է, բուն կամ հասարակ պարզական ապառնի չէ, այլ կը դործածուի

1° Բան մը ընելու անորոշ դիտաւորութիւն մը ցուցընելու, և կը պատասխանէ աշխարհաբարին ապառնի նշանակութեամբ դործածուած ներկային, զոր օրինակ.

Լուայ քեզ, յորժամ չարախօսք քո ելնուցեն. Քեզի տալ կ'ելնեմ (քու դատդ կը բռնեմ), երբ ամբաստանողները կուգան։ Դուռ առ այժմ երթ, և յորժամ ժամ լինի, կոչեցից զքեզ. Դուն հիմա գնա, երբ յարմար առնեն կ'ըսեմ, կը կանչեմ քեզ։ Զայս ամենայն պատ քեզ, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ. Այս ամէնը քեզի կուտամ, եթէ երեսի վրայ իյնալով ինծի երկրպագութիւն ընես։ Ոչ գոյնեցից զտէր. Տէրը չեմ գոյնէր։

2° Ապառնին կը դործածուի պարտական կամ նպատակական, այսինքն գուշակելով ըսուած խօսքերու մէջ, զոր օրինակ.

Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ պատի զլոյս իւր. Արեգակը պիտի խաւարի, և լուսինն իր լոյսը պիտի չտայ։ Եղէցիս կոյր և մի տեսցես զարեւ. Կոյր պիտի ըլլաս, և արեւ պիտի չտեսնես։ Ելնուցեն յարեւելից և յարեւմտից, և բազմեսցին ընդ Աբրահամու, և այլն. Արեւելքէն և արեւմուտքէն պիտի գան, և պիտի նստին Աբրահամու հետ, և այլն։

303. Հ. Ապառնին բուն ի՞նչ ժամանակի տեղ կը դործածուի։

Պ. Ապառնին բուն սոսքաքասականի տեղ կը դործածուի, և աշխարհաբարին ստորադասականին կը պատասխանէ, զոր օրինակ.

Որհնուրդ արարին զէ զհայրապետն սրանցին. Որ-

հուրդ ըրին որ կապեալները ապաննեն : Ջինչ կամիս ընէ որբէս տեղ . ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ : կամիս ընէ եր-ընչասէ . կ'ուզես որ երթնամ :

304. Հ. Գրաբարին բուն կամ հասարակ պատմական ապառնին ո՞րն է :

Պ. Գրաբարին բուն կամ հասարակ պարզական ապառնին ըլլ վերջաւորեալ ապառնի ընդունելութենեն է եմ, էք և էջիք եական բայով, ուստի գործելոց եմ, գործելոց էք, գործելոց էջիմ, կը նշանակեն պիտի գործեմ, պիտի գործէք : (Տես և թիւ 155) :

Իբրեւ գիտաց Յիսուս թէ՝ գալոց են յափշտակել զնա զի արասցեն թագաւոր . Յիսուս երբ իմացաւ թէ զինք յափշտակելու պիտի գան որ թագաւոր ընեն : Լռելոց է պատերազմունս և համբաւս պատերազմաց . Պատերազմներ ու պատերազմի լուրեր պիտի լսէ : Մոլորութիւնն զիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ զիւաց , որ ցայժմ կենդանի կայ , և նա ելանելոց է և առնելոց զաշխարհս . Դիւաց մոլորութիւնը Հայոց դիւցապաշտները խաբեց թէ դեւերն Արտաւազդ անուն մէկը բանտարկած են , որ ցարդ կենդանի է , ու պիտի ելլէ և աշխարհիս պիտի տիրէ : Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքինի լինելոց է , և զեսաւայ՝ թէ յանպիտանութիւնս կործանելոց է . Առաջուց գիտցաւ թէ Յակոբ առաքինի պիտի ըլլայ , և Եսաւ անպիտանութեանց մէջ պիտի իյնայ : Յառաջագոյն հայեցեալ ի նախանձաւորութիւնն Յովսեայ՝ ազգ արար կանխագոյն թէ յառնելոց է ի նոցանէ թագաւոր , որ զկռապաշտութիւն որդւոցն խորտակելի եղծանիցէ . Յովսիային նախանձաւորութիւնը յառաջագոյն տեսնելով կանխաւ իմացուց թէ անոնցմէ թագաւոր մը պիտի ելլէ որ խորտակելի որդւոց կռապաշտութիւնը ջնջէ :

Սա է որ զինի իմ գալոցն էր . Աս է որ ինէ եաքը պիտի գար : Մովսէս և եղիա երեւեալ փառօք՝ ասէին զելիցն նորա զոր կատարելոց էր յերուսաղէմ . Մովսէս ու եղիա փառօք երեւնալովը կը խօսէին ան բաներուն վրայ զորոնք երուսաղէմի մէջ պիտի կատարէր : Յառաջագոյն խրատէր զնոսա , թէպէտ գիտէր թէ չէին նմա լսելոց . Զանոնք առաջուց խրատեց , թէպէտ գիտէր թէ իրեն պիտի չլսէին : Վասն կիւրոսի Պարսկի ասէր թէ ուրյակելոց էր զդերիս ժողովրդեանն . Պարսիկ կիւրոսին համար կ'ըսէր թէ ժողովուրդին դերիները պիտի ուրյկէր :

Իսկ կէսքն ասէին , Միթէ ի Գալիլեէ գալոց էջիմ Քրիստոսն . Ոմանք ալ կ'ըսէին , Քրիստոսը Գալիլեայէն պիտի գայ : Մեք ակն ունէաք թէ նա իցէ որ փրկելոցն էջիմ զԻսրայէլ . Մենք կը յուսայինք թէ ան պիտի փրկէ Իսրայէլը : Ընդէր աչխատ առնիցեն որ չէջեն անուանելոց . Ինչու կը յոգնեցնեն անոնք որ պիտի գալ չըլլան :

305. Հ. Յաջորդաւասականին վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Յոլտպաւականը , այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձեւը զոր մենք պոտպաւական կը կոչենք , կը գործածուի սովորաբար

1° երբ ընդհանուր կամ անորոշ բանի մը վրայ է խօսքը : Աչխատիսի ատորադասականները կը պատասխանեն աչխարհաբարին ներկային , զոր օրինակ .

Որ առնէջէ* ականջս լսելոյ՝ լուիցէ . Ով որ լսելու

---

* Ընդհանուր և թեական և կամ հարցական խօսքերու մէջ բայը այսպես պոտպաւական կը դրուի , եթէ գործողութիւնը ներկայ կամ պատնէշ է : Եթէ գործողութիւնն անցեալ է , բայը անկատար կամ կատարեալ և կամ ընդարձակ կը դրուի . զոր օրինակ . Երբ ընկերդ գնէ՞նչ է , « Ջողորմութիւն կամիմ և ոչ զզոհ » , ոչ գատապար-

ականջ ունի՝ թող լսէ : Որ ոչն ըսծնէցէ՝ և կերիցէ մի . Ով որ չէ ըսծնեը՝ պիտի չուտէ : Ծառայ որ ըչխէցէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնէցէ ըստ կամաց նորա՝ արըցէ գան բազում , և որ ոչն ըչխէցէ և արժանի գանի ինչ ըսծնէցէ՝ արըցէ գան սակաւ . Ծառայ մը որ իր տիրոջը կամքը ըչխէ և անոր կամացը համեմատ չընէ՝ շատ ծեծ պիտի ուտէ , և ան որ չէ ըչխեր և ծեծի արժանի բան մը կ'ընէ՝ քիչ ծեծ պիտի ուտէ :

2° Երբ խօսքը ընկան և կամ հոգեկան է : Այսպիսի խօսքերու մէջ ալ ստորադասականը կը պատասխանէ աշխարհաբարին ներկային , ղոր օրինակ .

Ընդ որ ածէցէ* ապտակ յայլ ծնօտ քո , դարձո նմա

տէրք զանմեղն , երբ « ողորմութիւն կ'ուզեմ և ոչ զոհ » խօսքին ի՛նչ ըլլալը գիտնան , անմեղները չեն ողորմուիր : Երբ իմ չբնիւ և խոհեմ ընդ նոսա , մեզ ինչ ոչ գոյ նոցա . Երբ ես իմ ու անոնց հետ խոհ չունի , յանցանք չեն առնուր : Ի՞նչ զայս ամենայն , ասեն ցնա . Այո , Տէր . Իմացա՞ք այս ամենը . անոր ըսին , Այո , Տէր . Երբ այնպես , ապա ապրի . երբ ոչ , ուրեմն կ'ապաստի :

Այս խօսքերուն մէջ , ինչպես կը տեսնուի , բնական և հոգեկան բայերու գործողութիւնը անցու է , այսինքն արդէն եղած է :

Բայց հետեւեալ խօսքերուն , ինչպես նաեւ վերի օրինակներուն մէջ , գործողութիւնն ապառնի է , այսինքն՝ տակաւին պիտի ըլլայ :

Երբ առնէցէ հաւատս քան զհասն մանանխոյ և ասիցէ թթենւոյս այսմիկ , խլեաց և անկաց ի ծովս , հնազանդեսցի ձեզ . Երբ մանանխոյ հատէն ալ քիչ հաւատք առնուի , և պըն ։ Երբ ոչխար ուրուք առնիցէ ի խորխորատ ի շաբաթու , դէր ո՞ւ առնէցէ և յոգնացնէցէ զինս . Երբ մեկուն ոչխարը շաբաթ օր խորխորատ կ'ընայ , չի՞ բռներ , չի՞ վերցուներ զանի :

* Ընդհանուր , թէական և հարցական խօսքեր , ինչպես աշխարհաբարին , նոյնպես գրաբարին մէջ , կրնան դնել ալ բացատրիչ . ուսոի վերի խօսքերն այսպես ալ կ'ըլլան , Երբ որ ածէ ապտակ . Միթէ իմ՞ն ի փշոց խաղող . Բարեացն արարիչ և չարեաց , ո՞ քան զո՞ հարուստ է

և զմիւսն . Եթէ մէկը քու այ ծնօտիդ ապտակ մը կը զարնէ , միւսն ալ դարձուր անոր : Երբ ընէ անդ որդի ողջունի , հանդիցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա . Երբ հոն ողջունի որդի կայ , ձեր ողջոյնն անոր վրայ պիտի հանդչի :

Միթէ իմն ի փշոց խաղող . Փուշերէն խաղող կը հաւաքէ՞ : Բարեացն արարիչ և չարեաց ո՞ քան զո հարուստ էր . Ո՞րն աւելի գօրաւոր է . բարւոյն թէ չարին արարիչը : Զիա՞ ընդունիցեմ ձեր զոր արարն Դաւիթ . կարդացած չե՞ք ինչ ըրաւ Դաւիթ :

3° Երբ խօսքը նմանութեան կամ ենթադրութեան է : Այսպիսի խօսքերու մէջ ստորադասականը կը պատասխանէ աշխարհաբարին անկատարին (առանց կը ի) , ղոր օրինակ .

Նման է ազգս այս մանկտւոյ որ նստիցին ի հրապարակս , կոչեսցեն զընկերս իւրեանց և ասիցեն . Փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք . ողբացաք ձեզ և ոչ կոծեցարուք . Այս ազգը կը նմանի տղոց , որ հրըապարակները նստին , իրենց ընկերներուն կանչէին և ըսէին . Ձեզի փող հարինք և չկաքաւեցիք , ողբացինք և կոծ չըրիք :

Որպէս յորժամ էիք որ ուրուք թշնամի . և թաքուցեալ զթշնամութիւնն գաղտ կոչեցէք ylասել , և չկիրսցէք զհանգամանս ylասակարութեանն , և չուրջ եկեալ յածէցէ հնարս խնդրել . ապա գտեալ ժամանակ յորժամ որ ի բժշկայ թշնամւոյ նորա պատուէր տայցէ յայս ինչ չհսկել և յայն նիչ կերակրոյ չճաշակել որով առողջութեանն կարիցէ հասանել , վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պատուէցէ , և զօգտակարսն նմա ylասակարս թելադրեալ կոչենցուցանիցէ , և պատուէրս հակառակ հրամանաց բժշկին տայցէ , և այնու առնիցէ նմա ylաս .

Ինչպէս երբ մէկը մէկուն թշնամի ըլլալ, և թշնամութիւնը ծածկելով ուզէ գաղտ ձևաս ընել, բայց ձևաս ընելուն եղանակը չգիտնալ ու հնարք վնտռելու պըտտէր. եաքը երբ բժիշկ մը անոր թշնամւոյն պատուէր կուտար այս ինչ բանին չմօտենալ, այս ինչ կերակուրէն չուտել որ կարող ըլլար առողջութեան հասնիլ, ասկէ առիթ առնելով, չուտով բարեկամութիւն կեղծելով բժիշկը պրսուէր, օգտակարներն անոր ձևասակար կրծեցնէր, բժշկին հրամաններուն հակառակ պատուէրները փոր և այնպէս անոր ձևաս ընէր։

2. ԱՆԵՐԵՒՈՅԹ

306. Հ. Աշխարհաբարին աներեւոյթը դրաբարի մէջ ե՞րբ դիմաւոր բայի կը փոխուի։

Պ. Երբ աշխարհաբարի մէջ աներեւոյթ մը խնդիրներ ունի, ինք ալ ուրիշ բայի մը տէր բայի կամ խնդիր է, դրաբար չի շաղկապով դիմաւոր բայի կրնայ փոխուիլ, ըստ օրինակ.

Չի ներող և արդահատող է արարիչն այն ամենեցուն իսկ յայտնի է. փոխանակ ըսելու, Ներող և արդահատող էինել արարչին յայտնի է ամենեցուն. Արարչին ներող և արդահատող ըլլալն ամենուն յայտնի է։

Այլ չի Աստուած մահուան չի պատճառ՝ վկայեցէ ամենարուեստ իմաստունն. փոխանակ ըսելու, Ոչ էինելոյն Աստուծոյ պատճառ մահուան՝ վկայեցէ իմաստունն. Աստուծոյ մահուան պատճառ ոչըլլալն թող վկայէ իմաստունը։

Եւ չի ճշմարիտ է բանս՝ յայտ անտի է չի ... այսինքն, ճշմարիտ էինելն բանիս անտի յայտ է չի ... Այս խօսքին ճշմարիտ ըլլալն անկէ յայտնի է որ ...։ Եւ չի կամեցող բարեաց է Աստուած՝ ուսուցանէ մեզ Տէրը յաւելն. այսինքն, Չէինելն Աստուծոյ կամեցող

բարեաց՝ ուսուցանէ մեզ Տէրն. Աստուծոյ բարիք կամեցող ըլլալը կը սորվինք տիրոջմէն։

Այլ չի դեւ ղդեւ ու հանէ՝ զայն իսկ յայտ արար. այսինքն, Չհանելն եւս դիւի ղդեւ՝ յայտ արար. Դիւին դեւ չհանելն ալ իմացուց։

307. Հ. Ասոր հակառակ, ե՞րբ դիմաւոր բայ մը անեղեւոյթի կը փոխուի։

Պ. Դիմաւոր նախադասութեան մը հետ (Տես թիւ 283) չի կամ ըն շաղկապով կապուած միջանկեալ նախադասութեան բայը կրնայ անեղեւոյթի փոխուիլ. և այն ատեն է որ չի կամ ըն շաղկապը կը թողուի, և ուղղական առը բային (եթէ բայը յայտնի առը բայի ունի) տրականի կը փոխուի (տես և թիւ 179), ըստ օրինակ.

Եւ եղեւ քանալերինէ և ելանել հրէշտակն առաջի երեսաց զաղաւնի. այսինքն, Եւ եղեւ չի քաշեն երկինք և հրէշտակն ուրբ էր երեսաց զաղաւնի, Հակառակէին չէինել յարութիւն. այսինքն, Հակառակէին ըն չէ յարութիւն։ Ոչ տամք թոյլ անցանել չեզ ընդ երկիր մեր. այսինքն, Ոչ տամք թոյլ, չի անցանիցեք դուք ընդ երկիր մեր։ Պատուիրեաց նմա մի ուտել. այսինքն, չի մի ուտիցէ ուտել։ Նոքա ակն ունէին այսքընոյ նմա կամ անկանելոյ և յանկարծակի գտանելոյ. այսինքն, Ակն ունէին թէ այսքընոյ էր նա կամ անկանելոյ և յանկարծակի գտանելոյ։

308. Հ. Ուրիշ ի՞նչ տեսակ խօսքերու դիմաւոր բային անեղեւոյթի կը փոխուի։

Պ. 1° Պարծանս կամ նպարտակ ցուցնող խօսքի մը դիմաւոր բայը պարզ կամ հոլոված անեղեւոյթի կը փոխուի, և այս անեղեւոյթը շատ անգամ,

ա՛ և կամ ա՛ է նախդիրն ալ կ՚առնէ, զոր օրինակ.

Բերին ջուր լուանալ զոտս նոցա. այսինքն, զի լուասցեն զոտս նոցա: Ել Իսահակ զբօանել ի դաշտին. այսինքն, զի զբօնասցի: Ոչ ոք եթաց զդուրս տանն հայել ի ներքս. վասնզի, զի հայեսցի ի ներքս: Գունդս առ գունդս կազմեսցեն հանել զհէնն յաշխարհէն. այսինքն, գունդս առ գունդս կազմեսցեն զի հանցեն զհէնն: Ի լեր եկեալ եմ. այսինքն, եկեալ եմ զի լիցիս: Ոչ աչք են նոցա է պահանել, ոչ ականջք՝ է լսել, ոչ ունչք՝ ա՛ է ՀԹելոյ զօդ, և ոչ մատունք ձեռաց՝ ա՛ է շօշափելոյ. վասնզի, Ոչ աչք են նոցա զի պահցեն, ոչ ականջք՝ զի լսիցեն, ոչ ունչք՝ զի ՀԹիցեն զօդ, և այլն:

2° Ժամանակ ցուցնող խօսքերու դիմաւոր բայը սովորաբար է կամ ընդ նախդրիւ անեղեւոյթի կը վերածուի, բայց անատեն անեղեւոյթը յօդ (ն դիրը) կ՚առնէ, զոր օրինակ.

Ի ձնանիլն Ցիսուսի. վասնզի, էբլա ձնաւ Ցիսուս: Ի պահալ արդարոյն յարդարութենէ. վասնզի, էբլա դարձցէ արդարն յարդարութենէ: Ի Պաւղոսի բողոքելն. վասնզի, էբլա բողոքեաց Պաւղոս: Ի ՀրթռիլՀ ամենայն ժողովրդեանն և ընդ Ցիսուսի ՀրթռիլՀն և կալ յաղօթս. այսինքն, էբլա ՀրթռեցաւՀ ամենայն ժողովուրդն, էբլա մկրտեցաւ և Ցիսուս և եկաց յաղօթս: Ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա. այսինքն, զինչ էրթայր նա, ժողովուրդքն նեղէին զնա:

309. Հ. Դիմաւոր բայ մը և անոր անեղեւոյթը մէկտեղ ի՞նչ կը նշանակեն:

Պ. Դիմաւոր բայ մը և անոր անեղեւոյթը մէկտեղ ապտէն կամ ընդհատով չարկատով կապուած խօսքի զօրութիւն ունին, զոր օրինակ.

Ուանել ուանէին իւղ, այլ ոչ բաւական. այսինքն, ընդհատ ունէին իւղ, այլ ոչ բաւական: Սէրել սէրեն՝ այլ ոչ սերտիւ. այսինքն, ընդհատ սիրեն, այլ ոչ սերտիւ: Որ յասպարիզին ընթանան, ընդունալ ամենեքին ընդունան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն. այսինքն, ընդհատ ամենեքին ընթանան, և այլն: Ուանել ուանէր պարծանս, այլ ոչ առ Աստուած: Աւնուալ առի ձեռս զիշխանութիւնն, բայց ոչ կարէր, և այլն: Աւնել զբաղդ ողորմութիւն, այլ ոչ այնչափ որչափ կինն այրի: Ցանկիւթ ապառաժ տեղին որ, թէպէտ վտել վտիցի՛, անմահն եղեալ ի պտղոյն զրկի:

Ճ. Անցեալ ընդունելութիւն

310. Հ. Անցեալ ընդունելութիւնն ալ կը դերուի՞ դիմաւոր բայի տեղ:

Պ. Անցեալ ընդունելութիւնն ալ, էբէ-, յոբ-, էրի, շաղկապներով կապուած դիմաւոր բայի զօրութիւն կրնայ ունենալ, զոր օրինակ.

Եւ ՀաՀալ (Ցիսուսի) ի կափառնաումի, մատեան առ նա հարիւրապետ մի. այսինքն, էբլա եՀաՀ Ցիսուս, կամ, ի ՀաՀնէն Ցիսուսի ի կափառնաումի, և այլն: Եւ ճանապարհ արբեալ (նորա) յերուսաղէմ, ասէ ոմն ցնա. այսինքն, էբլա ճանապարհ արբ նա յերուսաղէմ, և այլն: Եւ բախեալ (նորա) զդուրս տանն, մատեան աղախին մի ունկն դնել: Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս ի ձայն մեծ ասէ: Եւ հրամայեալ Փեստոսի, ածին զՊաւղոս. այսինքն, էբլա հրամայեաց Փեստոս, կամ, ի հրամայելն Փեստոսի, և այլն: Դորա ինքնին կալեալ բողո առ քաջ արանցն, խորհեցայ յղել, և այլն. այսինքն, էբլա բողո կալաւ առ քաջ արանցն (առ կայսր), կամ, յառնել նորա բողո առ քաջ արանցն, և այլն:

311. Հ. *Ո՞ր բայերուն անցեալ ընդունելութիւնն իբրեւ ածական կրնայ գործածուիլ։*

Պ. *Կրաւորական և չեզոք բայերուն անցեալընդունելութիւնները թէ իբրեւ ածական և թէ ցոյականաբար կրնան գործածուիլ. ուստի կ'ըսուի.*

Կառաց խորտակելոց. Խորտակուած կառքերու։ Ոգւոց ջլկելոց, կոբռնելոց. Փրկուած, կորսուած հոգիներու։ Բանիցն առացելոց. Ըսուած խօսքերուն։ Ձալիան կոտրակեալ։ Դիզուած ալիքները։ Զեռք կապեալ. Ծունկք կքեալ. Գանձի ձածկելոյ յագարակի. Ագարակի մէջ ծածկուած գանձի։ Ուռկանի ձկնելոյ ի ծով. Ծովը նետուած ուռկանի։ Կոյս խօսեցեալ առն. Իբրեւ մարգու նշանուած կոյս մը։ Նեղեալք յայսոց պղծոց բժշկէին. Դեւերէն տանջուածները կը բժշկուէին։ Բժշկել զբեկեալս. Աղատել զբեբեալս. Մի ոմն ի կապելոց անտի. Կապուածներէն մէկը։

Ա.յս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւնները կրաւորական են,

Արանց անկելոց, ծռելոց, եկելոց. Ինկող, մեռնող, եկող մարդոց։ Ո՞վ է մեծ, քաղքո՞ն եթէ սպասաւորն. Ո՞վ է մեծ, նստողը թէ սպասաւորը։ Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա. Իր վրայ եկողներուն կ'ըսէ։ Ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց. Այս երեքէն ո՞րը կը թուի քեզի մերձաւոր եղած աւազակաց ձեռքն ինկողին։ Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. Չեմ ուզեր որ մեռնողներուն համար տգէտ ըլլաք։

Ա.յս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւնները չեզոք են ։*

* *Կրաւորական անցեալներն աշխարհաբար ։-ած ընդունելութեամբ, չեզոք անցեալներն ալ ընդունելութեամբ կը թարգմանուին։*

Բայց ներգործական անցեալ ընդունելութիւնները ոչ իբրեւ ածական, ոչ ալ դոյականաբար կրնան գործածուիլ, զոր օրինակ չըսուիր, Տ՚եսեալ պարգեւն քո, Քու տուած պարգեւդ. Ասացեալ բանն մեր, Մեր ըսած խօսքը. Աւետեալ պատգամաւորք նորա, Անոր ղրկած պատգամաւորները։ Ոչ ալ կրնայ ըսուիլ, Տ՚եսեալն քո, Քու տուածդ. Ասացեալն մեր, Մեր ըսածները. Գնեալն նոցա, Անոնց գնածները ։*

Ա.յսպիսի խօսքեր յարաբերական դերանունամբ և դիմաւոր բայիւ կը բացատրուին, այսպէս. Պարգեւն զոր ետուր. Բանն զոր ասացաք. Պատգամաւորքն զորս առաքեցին. Զոր ետուրն. Զոր ածեմքն. Զոր նոքայն գնեցին։ Կամ կրաւորականի դարձնելով անդեալը. Պարգեւն տուեալ ի քէն. Բանն ասացեալ ի մէնջ. Պատգամաւորքն առաքեալք ի նոցանէ, և այլն։

Ե. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

312. Հ. *Նախադրութիւնները միշտ իրենց խնդրէն առաջ կը դրուին։*

Պ. *Գրեթէ ամէն նախադրութիւն, ինչպէս նախադրութիւն բառին նշանակութենէն յայտնի է. ընդհանրապէս իր խնդրէն առաջ կը դրուի, բայց ի քանի մը հատէն որ միշտ խնդրէն ետքը կը դրուին. այսպէս են*

* *Աշխարհաբարի մէջ անգամ այս կերպով ներգործական անցեալ գործածելը խորթ է և տաճկաբանութիւն է։ Անցեալը կրաւորականի դարձնելու է. ինչպէս գրաբարի համար ըսինք։*

Աղաղաւ. պատճառաւ, վրայով, ելեւն, հոգիընդ-
Հետէ. ի վեր, պէս-
Զաւի. մինչեւ, պէս
Կոյս. դէպ ի, փողբ-

Նոցա պէտրոնեան աղաչեաց ասէ. Անունդ տկարութեանը պատճառաւ կ'ըսէ: Քաղդէացւոց եմասոնեանն աղաչեաց այսչափ ինչ. Քաղդէացւոց իմաստութեանը համար, կամ, վրայով այսչափ: Նոցա աղաչեաց և զսուտս յանդիմանէ: Զմարդարէան ամենայն թուէ է Սամուէլէ հեպէ. Սամուէլէն ի վեր բոլոր մարգարէները կը համրէ: Յայնոսիկ իսկ հեպէ անապակին տան զանձինս. Առաւելնէ ի վեր իրենքզիրենք դիւարբութեան կուտան:

Այսպէս կ'ըսուի նաեւ,

Ի բազում ամաց հեպէ, ի բազմաց հեպէ, ի վաղուց հեպէ. Շաւոնց ի վեր. Յօրէ յայնմանէ հեպէ. Այն օրէն ի վեր: Ի սկզբանէ հեպէ. Սկիզբէն ի վեր: Յայնմ հեպէ. Անկէ ի վեր: Յորմէ հեպէ. Քանի որ:

Ուսովք չէ ի վեր էր. Մինչեւ ուսերը վեր էր: Հասանէր ջուրն մինչովք չէ. Ջուրը մինչեւ մէջքը կը հասնէր: Արեւմէ չէ, կամ, մահու չէ հակառակ կալ. Մինչեւ արիւն թափելը, մինչեւ ցմահ դէմ կենալ:

Դարձաւ ի մեր կոյս. Դէպ ի մեզ դարձաւ: Նաւէաք յաւին կոյս. Դէպ ի եզերքը կը նաւէինք:

313. Հ. Իբրե-, որպե-, -ան նախադրութիւններուն խնդիրն ի՞նչ հոլով կը դրուի:

Պ. Նմանութիւն կամ բաղդատութիւն ցուցնող իբրե-, որպե-, -ան, կամ իբրե- ը, որպե- ը, -ան ը, նախադրութիւններուն խնդիրը հայցական կը դրուի մէջ, երբ նմանելի կամ բաղդատելի բանը հայցական է, ըսր օրինակ.

Ծիրեր ընաս իբրեւ ընդեր. Որպէս ընծան դարդու զարդարեաց չէ. Ծիրեր ընս հայրն քան զծննդեան ընդեր է-ր:

Այս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի բաները, ընաս, չէ, ընս, հայցական են, ուստի և նմանութեան կամ բաղդատութեան նախադրութեանց խնդիրներն ալ հայցական դրուած են:

314. Հ. Եթէ նմանելի կամ բաղդատելի բանն ուղղական է, վերոյիշեալ նախադրութեանց խընդիրն ի՞նչ հոլով կը դրուի:

Պ. Եթէ նմանելի կամ բաղդատելի բանն ուղղական է, իբրե-, որպե-, -ան, և այլն, նախադրութեանց խնդիրները նոյնպէս սովորաբար հայցական կը դրուին, բայց կրնան ուղղական ալ դրուիլ. զոր օրինակ,

Բազում էք դու- քան զմեզ. Դուք քան զմեզ շատ ուղր էք: Իբրեւ զընծան յարձակեցան (նու-) ի վերայ մեր. Իբրեւ թշնամիները յարձակեցան մեր վրայ: Եղերուք (դու-) միամիտք որպէս զաղաւնիս, եւ խրատագէտք՝ իբրեւ զջիս. Իբրեւ աղաւնիները միամիտ եղէք, եւ իբրեւ օձեր՝ խորագէտ:

Այս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի բաները, դու-, նու-, դու-, ուղղական են, բայց նմանութեան կամ բաղդատութեան նախադրութիւններուն խնդիրը, զմեզ, զընծան-, զաղաւնիս, զջիս, հայցական դրուած են ըստ սովորութեան, թէպէտ կրնային ուղղական ըլլալ, այսպէս. Բազում էք դու- քան մե-. Իբրեւ ընծան-

յարձակեցան ի վերայ մեր. եղերուք միամիտ որպէս աղաւնիք, և խորագէտ՝ որպէս օձք:

315. Հ. Եթէ նմանելի կամ բաղդատելի բաներն ուրիշ հոլով են, կամ նախադրութիւն մը ունին, էքթ-, որպէս, ման նախադրութեանց խընդիրներն ի՞նչ կ'ըլլան:

Պ. Եթէ նմանելի կամ բաղդատելի բաներըն ուրիշ հոլով, այսինքն տրական, բացառական կամ դործիական են, և կամ նախադրութեան մը խնդիր են, պէտք է որ էքթ-, որպէս, ման նախադրութեանց խնդիրներն ալ նոյն հոլովը ըլլան և նոյն նախադրութիւնները ունենան. զոր օրինակ,

Ցրտական

Առաջնորդեցեր որպէս խաչին, ժողովրդեան քում. ժողովուրդդ առաջնորդեցիր էքթեր խաչին: Սպասաւորէր նմա էքթեր զօր. Անոր էքթեր հօր սպասաւորութիւն կ'ընէր: Դիւրագոյն լիցի երկին Սոդոմացւոց քան ման այնմիկ. Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմի երկրին քան այն քաղքին: Առաւել ունկն դնէր Նաիպոյն քան զՅերոյն նմանոց. Աւելի մանուկներուն (կընճկրոն) մոխիկ կ'ըլլեր քան խմաստուն ծերուն:

Բացատական

Ցաղթէ էրմէ էքթեր էընձոյ խոստանայը վրէժ խնդրել. Իւր ազդէն էքթեր թշնամիէ վրէժ խնդրել կը խոստանար: Առաւել երկնչէր էնոնէ քան յայլոց. Աւելի անկէ կը վախնար քան ուրիշներէն:

Գործիական

Են որ խոցեն քանի՛ էւրեանց որպէս սրով. Կան որ իրենց խօսքովն էքթեր սրով կը խոցեն: Արեամբ

միով որ խուժադուժ եւս էր տեսանելով քան դմօտն Թանձրութեան. Մարդով մը որ աւելի բարբարոս էր տեսքով քան իր Թանձր մտքովը: Լաւ է նուաճել ոխերով քան բռնութեամբ:

Ալեւայ նախդիրներով

Որպէս է ձովս ալէկոծիմք յաշխարհիս. Աշխարհիս մէջ կ'ալէկոծուինք էքթեր ծովու մէջ: Ինայէր է նոսա էքթեր է մարդկէ. Կը խնայէր անոնց էքթեր մարդոց: Մի խօսիր ընդ ինձ էքթեր ընդ պղայս: Մեզի հետ մի խօսիր էքթեր տղոց հետ: Էքթեր է վերայ ընձոյ ելէք է վերայ էմ. Էքթեր թշնամւոյ վրայ ելաք էմ վրայ: Գան է մարդոյ՝ առաւել յԱստուծոյ երկնչել. Առաւել Աստուծմէ քան մարդէ վախնալ:

Զ. ՄԱԿԲԱՑ

316. Հ. Մակբայներն ի՞նչ տեսակ բառեր են:

Պ. Մակբայներէն ոմանք պարզ բառեր են, ինչպէս, ասդ, անդ, գաղտ, վաղ, ներքն, դէմ, սրեպ, և այլն:

Ոմանք հոլված բառեր են, ինչպէս հրապարակաւ, խոթեւ, հնչեակաւ, կենդանւոյն, հեռի, ներքուստ, և այն:

Ոմանք ալ բաղադրեալ բառեր են, այսինքն երկու բառէ կամ նախադրութեամբ մը շինուած, ինչպէս, պատեհ, արբեսք, դառնգամ, առանձին, յերեսաց, և ընդ վայր, և այլն:

317. Հ. Ուրիշ ի՞նչ բառեր մակբայօրէն կը դործածուին:

Պ. Երբեմն հասարակ ածական մը, ինչպէս, ման, ձանր, խաղաղ, մակբայօրէն կը դործածուի: Այսպէս կ'ըսենք, քաղ դիտել, ծանր խօսիլ, բնա-

կել խաղալ, կալ հանդիպիլ, շնչել ուժգին, ևայլն։

Երբեմն պարզ կամայ նախդրիւ ածական մը վերջը՝ դիրն առնելով մակբայի զօրութիւն կ'ունենայ։ Այսպէս կ'ըսուի, գեղեցիկ բարբառել, վայելուչ յօրինել, հզօրագոյն կռուիլ, և կը նշանակէ, գեղեցիկ, վայելուչ, հզօրագոյն կերպով։ Եւ կամ, յանդիման, յանդէպ, յապահով, յանպզդայն, որ կը նշանակեն անխտրաբար, անչափաբար, ապահովաբար, անզգուշաբար։

Գործնականն ալ շատ անգամ մակբայի զօրութիւն ունի. ուսաի կ'ըսենք, ջլոփութեամբ կռուիլ, իմաստութեամբ գործել, ամէն բանաբար, և կը նշանակեն նոյնպէս, ջոկ, լմաստուն, բանի կերպով։

316. Հ. Հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկները որո՞նք են։

Պ. Հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկներն են բար և պէս։

Բար մասնիկը կը կցուի գոյական անուններու և կամ գոյականաբար առնուած ածականներու վերջը, և կը նշանակէ էրէս, պէս։ Այսպէս կ'ըսուի, թագաւորաբար, իշխանաբար, առիւծաբար, Հայկաբար, իմաստնաբար, առաքինաբար, և կը նշանակէ, էրէս թագաւոր, թագաւորի պէս. էրէս իշխան, իշխանի պէս՝ էրէս Հայկ, Հայկայ պէս. էրէս իմաստուն, առաքինի. իմաստուն, առաքինի մարդու պէս։

Իսկ պէս մասնիկը կը կցուի ածականներու վերջը և կը նշանակէ կերպով։ Այսպէս կ'ըսուի, քաջապէս, դառնապէս, գաղտնապէս, փութապէս, և կը նշանա-

կէ, տալնայնպէս, քաջ կերպով. պատուականապէս, գաղտնի կերպով. ետնով, փութալան կերպով։

ԲԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՄԱԿՐԱՑՆԵՐՈՒ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

317. Հ. Ե՞ր քանի՞ նշանակութիւն ունի։

Պ. Ե՞ր իբրեւ շաղկապ կը նշանակէ՞ ու, իբր մակբայ, կը նշանակէ նախ, ալ, զոր օրինակ.

Օն եկայք Ե մեք, զի ընդ նմա մեռցուք. Հապա, եկէք, մենք ալ (երթանք) որ անոր հետ մեռնինք։ Սրա Ե պիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց. Իս ալ քու վարձուորներէդ մէկն ըլէ։ Ստոյգ Ե սա ընդ նմա էր.Ստուգիւ ան ալ անոր հետ էր։

Ե՞ր, կրկնուելով կը նշանակէ ըն... ըն, զոր օրինակ.

Յիրաւի պատժեցան Ե նա (սատանայ) Ե մարդն զոր յօժարեցոյց նա յանառաւութիւն։ Իրաւամբ պատժուեցան՝ ըն՛ան (սատանան) եւ ըն՛ մարդը զոր սատանան անհնազանդութեան յորդորեց։

318. Հ. Ե՞ւ ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ե՞ւ մակբայը կը նշանակէ 1° Նախ, ալ, զոր օրինակ.

Ցաւել միւս ե՞ւ ծառայ յղել, նոքա եւ զնա ե՞ւ զան հարին... Ուրիշ ծառայ մ'ալ ղրկեց. անոնք ան ալ ծեծեցին։ Ոմն մերկանայ զհանդերձս ընկերին. և՞եթէ ընդդէմ գառնայցէ, յարեւէ ե՞ւ արկանէ։

2° կը նշանակէ ուեւէ, զոր օրինակ.

Քակեցից զշտեմարանս իմ, եւ ե՞ւ մեծամեծս չինեցից. Ոչ ոք արկանէ կապերտ նոր ի վերայ հը-

նացեալ ձորձոյ. ապա թէ ոչ առնու նորն ի հնոյ անտի, և չար ե՜ս պատառումն լինի: (Տես և թիւ 271):

319. Գո՜ղ և Ընչե՜ս մակբայներուն վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Գո՜ղ կը նշանակէ ըզըլայ ըն, և կը գործածուի, երբ գործողութեան կատարուիլը չենք ուզեր ու կը վախնանք թէ կ'ըլլայ, ըսր օրինակ.

Գո՜ղ, մինչ քաղիցէք զորմնն, և զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք. Զըլայ ըն, երբ որոմը կը քաղէք, ցորենն ալ մէկտեղ բըցնէք: Արձակել զդուա նօթիս չկամիմ, գո՜ղ նըթիւեն զճանապարհայն: Ասեն յիմարքն (կուսանք) ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ. Իմաստունքն ասեն. Գո՜ղ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական. այլ երթայք ի վաճառականս և գնեսջիք ձեզ: Ասեն (Հրեայքն) ցՊիղատոս. Հըբամայեա զգուշանալ (առնել պահպանութիւն) դերեզմանին մինչեւ ցերիս աւուրս. գո՜ղ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա: Արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ. գո՜ղ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն: Առեալ զմահկոյկն յօդնականութիւն կապէին ընդ նաւն, երկուցեալք թէ գո՜ղ ի յորձանուտն անկանիցին: Ճնշեմ զմարմինս իմ, զի գո՜ղ որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ:

Թերե՜ս կը նշանակէ պէ՛տ է, և կը գործածուի, երբ գործողութեան ըլլալը կ'ուզենք, և կը յուսանք թէ պիտի ըլլայ, ըսր օրինակ.

Ցետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ. Թերե՜ս ամաչեսցեն յորդւոյ ասեմ իմմէ: Ասէ ցնա այգեգործն. Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ. Ընչե՜ս արասցէ պտուղ: Ապաշաւեա դու ի չարեացդ. Ընչե՜ս թողու-

թիւն լիցի քեզ: Հաստատեաց ժամանակս խնդրել զԱստուած, զի ընչե՜ս գնան և գտանիցեն: Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի ընչե՜ս ապրեցուցից զմանս: Հանդարտութեամբ խրատեա զհակառակողն. Ընչե՜ս տայէ նոցա Աստուած ապաշխարութիւն:

320. Հ. Ո՞ր քանի՞ նշանակութիւն ունի:

Պ. Ո՞ր կամ ը, ձեռական մակբայ է, և բացառական խօսքերու մէջ կը գործածուի, ըսր օրինակ.

Հայեցարուք ի թռչունս երկնից. ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս. Ո՞ր դուր նոցա տեղի յիջեւանին. Եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, հսկէր և լտայր թոյլ ական հատանել ի տան իւրում:

Ո՞ր նաեւ հարցական մակբայ է, և կը նշանակէ ո՞ր ապատեն, ըսր օրինակ.

Ո՞ր երկոտասան ժամ է աւուր. Օրը տասներկու ժամ չունի՞ մի: Ո՞ր զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի: Ո՞ր և սիրտը մեր ճմլէին ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհայն:

321. Հ. Ընչե՜ս և Ընչե՜ս ի՞նչ կը նշանակեն:

Պ. Ընչե՜ս, ժխտական մակբայ է, և կը նըշանակէ, պէ՜տ ը, ըսր օրինակ.

Կին դու, ընչե՜ս է հասեալ ժամանակ իմ. Կնիկ, ժամանակս պէ՜տ հասած չէ: Ընչե՜ս եւս գիտէին զդիրսն. Դե՜ դերքերը չէին գիտեր:

Մինչե՜ս չաղկապ է, և կը նշանակէ քանի մը ատեն, քան մը ընդհատ, ըսր օրինակ.

Մինչե՜ս հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս. Հաւը խօսելէն առաջ, կամ, հաւը չխօսած, իս երեք

անգամ պիտի ուրանաս : Մինչեւ- բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարած, Զրուան ոմն անուն էր : Մինչեւ- ծնեալ էին, և դեռ չ- բարի ինչ կամ չար գործեալ էր, ասացաւ թէ' երէցն կրտսերագոյն ծառայեսցէ :

322. Հ. Զէ+, ի՞նչ կը նշանակէ :

Պ. Զէ+ բացասական բայ է, սահմանական ներկայ եղակի երրորդ դէմքը, և կը նշանակէ «չ ըլլայ :

Ես եմ Աստուած, և չէ+ այլ ոք. Աստուած ես եմ, և ուրիշ մը չկայ : Չէ+ ոք բարի, բայց մի Աստուած. Մէկ Աստուծմէ զատ բարի չկայ : Չէ+ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի. Ծածուկ բան մը չկայ որ չյայտնուի :

323. Հ. Մէ, ինչ տեսակ մակբայ է :

Պ. Մէ, արգելական մակբայ է, և հրամայական խօսքերու մէջ կը գործածուի, զոր օրինակ :

Դասերը երուսաղէմի, դէ լայը ի վերայ իմ : Մէ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն : Ցորժամ առնիցես ողորմութիւն, դէ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո : Արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի դէ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց :

324. Հ. Աբբեօ+ և դէնէ մակբայները ի՛նչ կը նշանակեն :

Պ. Աբբեօ+, տարակուսական մակբայ է և կը գործածուի հարցական խօսքերու մէջ, երբ հարցնողը չէ ճշդեր և կը հարցնէ սորվելու համար, զոր օրինակ.

Ո՞ ոք աբբեօ+ իցէ սա, զի և հովմք հնազանդին

սմա : Դիտիցես աբբեօ+ զոր ընթեռնուցուսդ : Մի աբբեօ+ դու իցես եգիպտացին :

Աբբեօ+ կը նշանակէ նաեւ աբբաբե-, ապուէն, անպատճառ, զոր օրինակ.

Եթէ գիտէիր ահ է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու աբբեօ+ խնդրէիր ի նմանէ. Եթէ գիտնայիր թէ ահ է որ քեզի կ'ըսէ, Ինձի չուր տուր, անպատճառ դուն անկէ կ'ուզէիր : Եթէ յաչխարհէ ասպատ էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտընչէին աբբեօ+, զի մի մատնեցայց Հրէից :

Մէրթ ալ տարակուսական մակբայ է, և կը գործածուի հարցական խօսքերու մէջ, երբ հարցնողը գիտէ ու կը հարցնէ, զոր օրինակ.

Մէրթ օրէնքն մեր դատին զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ : Մէրթ և ես Հրեայ իցեմ, ազգ քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ :

325. Հ. Ո՞ր բառը քանի՞ նշանակութիւն ունի :

Պ. Ո՞ր, տեղական մակբայ է.

Ո՞ր են իցեմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի : Ո՞ր եղիք զնա : Ո՞ր իցէ նա :

Դէպ ի տեղ մը շարժում ցուցնելու համար՝ յո՞ ալ կը գործածուի, զոր օրինակ.

Ցո՞ երթայց. Ցերեսաց քոց յո՞ փախեայց :

Ո՞ր նաեւ չաղկապ է, և դէնէ կը նշանակէ, զոր օրինակ.

Զեն ինչ զարմանք եթէ նոքա (հրեշտակք) մեծոց զրացեաց արարածոց անուամբքս անուանին, ո՞ր և նոցա արարիչն ոչ զարչի զայնպիսի անուանս

զինքեամբ առնուլ. Զարմանք չէ որ անոնք մեր դըրացի արարածներուն անուններովը կ'անուանուին, ինչ կամ ուր անոնց արարիչն ալ անանկ անուններ վրան առնելու չի դարչիր։

Ե. ՇԱՂԿԱՊ

ՔԱՆԻ ՄԸ ԳԼԽԱՒՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

326. Հ. Ե՞, ի՞նչ շաղկապ է։

Պ. Ե՛, բաղխ-ասկան շաղկապ է, և կը գործածուի ընդհանրապէս երկու բառ կամ նախադասութիւն դնելու՝, ըսր օրինակ.

Երկինք և երկիր անցան։ Աղաղակէին և ասէին։

327. Հ. Ե՞ շաղկապն ուրիշ քանի՞ գործածութիւն ունի։

Պ. Ե՞ շաղկապը կը գործածուի նաեւ 1° Ուրէ՞, յորժամ, ընդ, ՝ ՝+ և ուրիշ քանի մը բառերու հետ, և աշխարհաբար ՝ր շաղկապին զօրութիւնն ունի, ըսր օրինակ.

Եղիցի քեզ՝ որպէս և կամիս. Քեզի ըլլայ ինչպէս ՝ր կ'ուզես։ Եկեսցէ՝ յորժամ և պարապեսցէ. Երբ ՝ր պարապ ըլլայ՝ կու գայ։ Զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա. Ինչ ՝ր ուզեն՝ թող ըլլայ անոնց։ Ո ոք և երթայր առ նոսա՝ ընդունէին. Ով ՝ր կ'երթար անոնց՝ կ'ընդունէին։ Եկից՝ յո և երթիցես. Ուր ՝ր երթաս՝ կու գամ։ Ժողովեցին զամենեսեան՝ զորս և գտին. Որոնք ՝ր գտան՝ ժողվեցին։ Որով իւիք և յաղթիցի ոք՝ նորին և ծառայ է։ Մարդ ինչ բանէ ՝ր կը յաղթուի՝ անոր ծառան է։ Ցոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ՝ երթիջիք. Որ և իցէ գործի համար ՝ր ձեզ կանչէ՝ գացէք։

2° Ե՛, կը գործածուի ինչ-նշանակութեամբ, ըսր օրինակ.

Կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղհեհէմ յերկեմենից և ի խոնարհ. Ի լուսնոյ և ի վեր զամենայն ինչ անմահ համարին. Ի քէն և այսր է վքինն։ Ա.յսպէս կ'ըսուի նաեւ. Ի միջոյն և ի խոնարհ, Ի միջոյն և ի վեր. Մէջքէն վար, մէջքէն վեր։ Ցերկինից և այսր. Անտի և այսր. Երկինքէն ասղին. Հոնկէ ասղին։ Ցօրէն ուրբերորդէ և անդր. Ի նմանէ և անդր. Ուրբերորդ օրէն անդին. Անկէ անդին։ (Տես և թիւ 317)։

328. Հ. կա՞, ի՞նչ շաղկապ է։

Պ. կա՞, պրոճկան, այսինքն զատող շաղկապ է, և երկու բառ կամ նախադասութիւն իրարմէ զատելու կը ծառայէ, ըսր օրինակ.

Ցորժամ եղն քո կա՞ էչ անկանիցի ի խորխորատ։ Տուր զոր խնդրեմն կա՞ արձակեա զիս։

329. Հ. Բայց շաղկապը ե՞րբ կը գործածուի։

Պ. Բայց, կը գործածուի, երբ բան մը պատմուելէն ետքը անոր հակառակը մէջ կը բերուի, ըսր օրինակ.

Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար. Դուք ոչ ճանաչէք զնա, բայց ես ճանաչեմ զնա. Եթէ յաշխարհէ աստ էիք, աշխարհ սիրէր արդեօք զիւրսն. Բայց զի չէք յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։

Բայց, կը նշանակէ նաեւ եթէ ու, ինչ, ըսր օրինակ.

Ոչինչ ունիմք ասա, բայց հինգ նկանակ. Հոս հինգ նկանակ ինչ ունինք։ Դաւիթ եկեր զհացն

զառաջաւորութեան, զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։

330. Հ. Աւետ շաղկապը ե՞րբ կը դործածուի։

Պ. Աւետ, կը դործածուի, երբ բան մը իբրեւ սուտ կամ իբրեւ ոչ ճիշտ ժխտուելէն առքը, ճշմարիտը կամբունը մէջ կը բերուի, զոր օրինակ.

Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ։ Հայր, անցցէ յինէն բաժակս, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ։

Աւետ շաղկապը, ու եւ բառերուն հետ դործածուելով, մակբայ է, և, ու, ուրեք, կը նշանակէ, զոր օրինակ.

Ոչ եւս այլ չատ խօսեցայց ընդ ձեզ. Ալ աւելի երկայն չխօսիմ ձեզի հետ։ Եւ այլ ոչ եւս եաես զնա. Եւ ալ անոր երեսը չտեսաւ։

331. Հ. Իսկ շաղկապը ե՞րբ կը դործածուի։

Պ. Իսկ, կը դործածուի երկու հակադրեալ նախադասութիւն կապելու, այսինքն, երբ երկու ներհակ բաներ կը նկարագրուին իրը բաղդատութիւն, զոր օրինակ.

Ունկնդիր լինի խրատու իմաստունն, իսկ անմիտն առօրին յայտնէ զբարկութիւն իւր։

332. Հ. Իսկ բառը ուրիշ ի՞նչ կը նշանակէ։

Պ. Իսկ, կը նշանակէ 1° Աւ, խօսքի սկիզբը, զոր օրինակ.

Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու. Պետրոս ալ ուրացաւ, և այլն։ Իսկ մշակքն

իբրեւ տեսին զորդին, ասեն. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա. Մշակներն ալ երբ որդին տեսան, ըսին, և այլն։

2° Իսկ, անուններու և էական դերանուններու հետ կը նշանակէ նոյն իսկ, բուն իսկ, զոր օրինակ.

Ի տղոյ իսկ առ օրինակ, զի յորժամ դայ (մանուկն) ի չափ հասակի մարդոյ, յայնժամ միտք ի չարիս. Բուն իսկ մարդէն օրինակ առ. երբ տղան չափահաս կ'ըլլայ, անառակն չարութեան կը միտի։ Այլ զի մի ի մէնջ և եթ լսեցէք, դէնդրն իսկ ընթերցարուք. Եւ որպէս զի մենք միայն լսած չըլլաք, բուն իսկ դիրքը կարդացէք։ Այսու յայտ առնեն թէ դատողն իսկ մարմնոյ խափանել կամին. Սակայն կը ցուցընեն թէ բուն իսկ մարմնոյ յարութիւնը կ'ուզեն խափանել։ Նա և ի տէրունական իսկ փոքրոգին իմանալի է, թէ (սատանայ) չէ կանխագէտ. Նոյն իսկ տէրունական (Քրիստոսի) փորձութենէն կընայ հասկըցուիլ թէ սատանան կանխագէտ չէ։

Եթէ որդի ուրուք չիցէ մտավարժ, բաղում անգամ ղծառայ այր առաջի նորա դան հարկանեն, զի ի նա հայեցեալ (որդին) լինիցի մտավարժ. ապա եթէ և այնու եւս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն. Եթէ մէկուն որդին խելօք չէ, ծառան կը ձեծեն անոր առջեւը որ (որդին) անոր նայելով զգաստանայ. իսկ եթէ անով ալ չի խրատուիր, նոյն իսկ անոր տանջանք կուտան։ Ձի պիտոյ է մեզ վկայութիւն, զի ղեղն իսկ լուաք ի բերանոյ դատաւորին. Ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն. քանզի բուն իսկ մենք լսեցինք առաջ բերնէն։

333. Հ. Որ՞ընթ, և, ուրեք, ապա, ի՞նչ տեսակ շաղկապներ են։

Պ. Որովհետե՞*, և, ուրեմն, ապա, կը կոչուին պայմանական շաղկապ։

Որովհետե՞ շաղկապով յառաջ բերուած նախադասութիւնը կոչ է, զոր օրինակ.

Որովհետե՞ արարէք միւսի ի փոքրկանցս յայսցանէ, ինձ արարէք. Որովհետեւ այս պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք։ Որովհետե՞ ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ։

Ուրեմն, ապա կամ ապա ուրեմն շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը հետեւութիւն կամ եզրակացութիւն է, զոր օրինակ.

Եթէ հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ. Եթէ ննջեաց, ապա ապրի։ Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։ Սիմոն, Թագաւորք յումմէ առնուն զհարկն. Նա ասէ, յօտարաց. ասէ ցնա Յիսուս, Ապա ուրեմն ազատ են որդիքն։

334. Հ. Ապա, ուրիշ ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ապա կը նշանակէ նաեւ եթէ, և մակբայ է, զոր օրինակ.

Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր։ Նախ վասն իւրեանց մեղաց մատուցանէին պատարագս և ապա վասն ժողովրդեանն։

335. Թանզի, վասն զի, և, վասն որոյ, ուստի, ի՞նչ շաղկապներ են։

Պ. Թանզի, վասնզի, և, վասն որոյ, ուստի կը կոչուին պատճառական շաղկապ։

---

* Փոխանակ ունի շաղկապն որովհետե՞ գործածել սխալ է։

Թանզի, վասնզի շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը պատճառ է. վասն որոյ, ուստի շաղկապներով յառաջ բերուածը՝ ետքն կամ արդիւնք է, զոր օրինակ.

(Պիղատոս) կամէր արձակել (զՅիսուս), վասնզի գիտէր եթէ առ նախանձու մատնեցին զնա։ Ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք։

(Քրիստոս) խոնարհեցոյց զանձն. վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. Կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազմականին և հաճոյ թուեցաւ Հերովդէ. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ։

336. Հ. Որպե՞ս շաղկապն ի՞նչ կը ցուցնէ։

Պ. Որպե՞ս շաղկապը նպատակ կը ցուցնէ, զոր օրինակ.

Յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկանէր փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպե՞ս զի փառաւորեսցին ի մարդկանէ։

337. Հ. Ջե շաղկապը քանի՞ նշանակութիւն ունի։

Պ. Ջե շաղկապը կը նշանակէ

1° Թանզի, զոր օրինակ.

Դուք ոչ հաւատայք ինձ, զի չէք յոչխարաց անտի իմոց։ Դուք ինծի չէք հաւատար, քանզի իմ ոչխարներէս չէք։

2° կը նշանակէ որպե՞ս զի, զոր օրինակ.

(Դաշարոս) տացէ նոցա վկայութիւն, զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։ Վկայութիւն տայ (իմացնէ) անոնց, որպէս զի անոնք ալ այս տանջանաց տեղը չգան։

3° կը նշանակէ, ը, ըր օրինակ.

Կամիս դէ երթիցուք քաղեցցուք զորոմն. կ'ուզես ը երթանք, որմէ քաղենք:

4° Հարցական մակբայ է և կը նշանակէ ընդ՞ համաբ, ըր օրինակ.

Զի՞ կոչէք զիս, տէր, տէր, և զոր ասեմն ոչ առնէք: Զինչ գործէք, դէ՞ լուծանէք գյաւանակդ:

338. Հ. Իբրե՞, յորժամ, և, ինձ, ինձբե՞, ի՞նչ տեսակ շաղկապներ են:

Պ. Իբրե՞, յորժամ, և, ինձ, ինձբե՞, կը կոչուին ժամանակական շաղկապ:

Իբրե՞, յորժամ, պարզապէս ժամանակ կը ցուցընեն, ըր օրինակ.

Իբրև ել ի լեառն, մատեան առնա աշակերտաքն. Երբ լեառը ելաւ, աշակերտները եկան անոր: Իբրև լուան զայս ի թագաւորէն, գնացին:

Յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկանեը փող առաջի քո:

Մինչ, մինչբե՞, կը ցուցնէ ժամանակի տեւողութիւն, ըր օրինակ.

Աշակերտը նորա գողացան զնա, մինչ մեք ի քուն էաք. Աշակերտները գողցան զանի, մինչ մենք կը քնանայինք. (կամ, տաճկաբանութեամբ մը քնացած աեսնը): Մինչբե՞ նա զայս ածէը գմտաւ, հրեշտակ տեառն երեւեցաւ նմա. Մինչ նա զայս խորհէը (ա-նոր այս բանը խորհած աեսնը), Աստուծոյ հրեշտակը երեւցաւ անոր:

339. Հ. Երե՞ ի՞նչ շաղկապ է:

Պ. Երե՞ կը կոչուի ընդհանուր շաղկապ, և յաւաչ կը բերէ ընդունելի կամ պայման, ըր օրինակ.

Տէր, երե՞ կամիս, կարող ես զիս սրբել: Երե՞ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ:

340. Հ. Երե՞, ուրիշ ի՞նչ տեսակ շաղկապ է:

Պ. Երե՞, ինչպէս նաեւ ըե՞, չե՞, երբ ը կը նշանակեն, նախապատրաստաբար շաղկապ կը կոչուին, և յաւաչ կը բերեն միջանկեալ նախադասութիւն մը որ դէմառուր նախադասութեան մը բային երբեւ տէր բայի կամ հնդիր է, ըր օրինակ.

Գրեալ է ըե՞ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ. Գրեաւած է ը մարդ հացով միայն չապրիր:

Հոս, ըե՞ ը հացե՞ դէպն կեցցէ մարդ միջանկեալ նախադասութիւնը տէր բայի է ցրեալ է ին:

Համարէին երե՞ ի գերեզման երթայ, զի լացցէ անդ. կարծեցին ը գերեզման կերթայ որպէս զի հոն լայ:

Հոս, երե՞ ի գերեզման երթայ միջանկեալ նախադասութիւնը, համաբերն բային սեռի հնդիր է:

Կամիմ դէ կացցէ գա. կ'ուզեմ ը ատիկա կենայ:

Հոս ալ, դէ կացցէ գա, միջանկեալ նախադասութիւնը, սեռի հնդիր է կամին:

341. Հ. Երե՞ կամ ըե՞, ուրիշ ի՞նչ գործածութիւն ունի:

Պ. Թե՞, կը գործածուի նաեւ իբրեւ պարզական շաղկապ փոխանակ կամ, երբ խօսքը հարցական է, ըր օրինակ.

— Ի քէն ասեա զայդ, երե՞ այլք ասացին քեզ. Բեզմէ կըսեա այդ թե՞ ուրիշներն ըսին քեզի: Արժան է հարկս տալ կայսեր, երե՞ ոչ. տացուք, ըե՞ ոչ տացուք:

342. Հ. Մինչ, մինչ-, մինչ չէ, ի՞նչ տեսակ նախադասութիւն մը յառաջ կը բերեն :

Պ. Մինչ, մինչ-, մինչչէ, այնպիսի նախադասութիւն մը յառաջ կը բերեն որ առջի նախադասութեան տատկութիւնը կը ցուցնէ, և կը նշանակեն մինչ- ու, ղոը օրինակ.

Եւ գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ կամ մինչ չէ հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա. ժողովուրդը դարձեալ անոնց հետ կուգայ, այնպէս որ հաց անգամ չեն կրնար ուտել : Հատն մանանխոյ, յորժամ ածիցէ, լինի ծառ, մինչ գալ թռչնոց երկնից և հանգչել յոտս նորա : Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչ զորդին իւր միածին ետ :

Մինչ-էն ետքը բայն ընդհանրապէս անեղ-ոյն կը դրուի :

343. Հ. Մինչ-, ուրիշ ի՞նչ կը նշանակէ :

Պ. Մինչ-, կը նշանակէ նաեւ

1° Մինչ- ու, ու- +է. ղոը օրինակ.

Աստղն ղոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն : Ոչ անցցէ աղգս այս, մինչ այս ամենայն եղիցի. Այս սեբունդը պիտի չանցնի, մինչ որ այս ամէն բան ըլլայ :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

344. Հ. Շարադասութիւնն ի՞նչ է :

Պ. Շարադասութիւնը քերականութեան այն մասն է որ կը խօսի նախադասութեան կազմին և իրարու նկատմամբ ունեցած վրայ :

345. Հ. Նախադասութիւնն ի՞նչ է :

Պ. Նախադասութիւն կ'ըսուի խմբով մը կամ շղթայ մը որ բան մը կը հաստատէ կամ կը ժխտէ. ղոը օրինակ, Աստուած արդար է, Աստուած անեղ է, մեկ մեկ նախադասութիւն են, առաջինը՝ հաստատական, երկրորդը՝ ժխտական :

346. Հ. Նախադասութիւն մը քանի՞ մաս ունի :

Պ. Նախադասութիւն մը, յայտնի կամ լռելեայն, երեք մաս ունի. ենթական, բայ և ստորոգեալ : Ենթական է տէր բային, բայն է իական բայը եմ, ես, է, ստորոգելին այն բառն է ղոր իական բայը կը հաստատէ կամ կը ժխտէ ենթականին վրայ :

Վերի նախադասութեանց մէջ, Աստուած ենթակայ է. արդար, անեղ- բառերը ստորոգելի են. են բայ է որ, առջի նախադասութեան մէջ, արդար ստորոգելին կը հաստատէ Աստուած ենթակային վրայ. երկրորդին մէջ, անեղ- ստորոգելին նոյնպէս Աստուած ենթակային վրայ կը ժխտէ նմանապէս :

347. Հ. Ամէն նախադասութեան մէջ ստորոգեալ կա՞յ :

Պ. Ամէն նախադասութեան մէջ ստորոգեալ կայ , կա՛մ պարզ , երբ բայը եակոն բայն է , ինչպէս վերի օրինակներուն մէջ , և կամ՝ դարձեալ եակոն բային հետ , երբ բայն ածական բայ է , այսինքն բայ եական բայէն ուրիշ մը և եթէ բայ է . զոր օրինակ , սա նախադասութեանց մէջ , Ես խօսիմ , Դու ընթերցանուս , Հայր սիրէ , ստորոգեալին և բայը միացած են , քանզի խօսիմ , ընթերցանուս , սիրէ կը նշանակեն խօսող եմ , ընթերցող ես , սիրող է :

348. Հ. Նախադասութեանց մէջ , բայ յենթակային , բայէն և ստորոգեալէն , ուրիշ բառեր չե՞ն դանուիր :

Պ. Նախադասութեանց մէջ , բայ յենթակային , բայէն և ստորոգեալէն , կրնան դանուիլ ուրիշ բառեր , որ լրացուցիչ կամ յաւելուած կը կոչուին , քանզի նախադասութեան եական մասերուն , այսինքն ենթակային և ստորոգելոյն կամ բային , իմաստը լրացնելու (ամբողջացնելու , որոշելու) կը ծառայեն : Ուստի լրացուցիչ են ածականը , երեւելը (յատկացուցիչ , սեռի և բնութեան նշանդիր) և մակբայը : Զոր օրինակ .

Աստուած ճշմարիտ է արարիչ երկնի և երկրի . Դու խորհես զայդ է պարզ է . Նա տրամեցաւ յոյժ :

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ , ինչպէս յայտնի է , Աստուած ենթակայ է , է՝ բայ , ճշմարիտ՝ ստորոգեալ . ասոնք նախադասութեան էական մասերն են . իսկ ճշմարիտ ածականը և երկնի և երկրի յատկացուցիչը նախադասութեան երկրորդական մասերն են , և լրացուցիչ են , առաջինը՝ ենթակային , երկրորդը՝ ստորոգելոյն :

Երկրորդ նախադասութեան մէջ , Դու ենթակայ է , խորհես բայ և ստորոգելի է . զայդ է պարզ տարբ սեռի և բնութեան նշանդիրները լրացուցիչ են խորհող ստորոգելոյն (քանզի խորհելը խորհող ես ըսել է) :

Երրորդին մէջ , Նա ենթակայ է , պարզ , այսինքն՝ եղեւ պարզող բայ և ստորոգելի է , յոյժ մակբայը լրացուցիչ է պարզող ստորոգելոյն :

349. Հ. Նախադասութիւնները ի՞նչ բանի կը ծառայեն :

Պ. Երկու , երեք , երբեմն աւելի նախադասութիւնները , երբ նոր քին իմաստով մը իրարու հետ կապակցեալ են , խօսք կը կազմեն , զոր օրինակ .

Որ սիրեն զիս՝ || սիրեսցի ի հօրէ իմմէ : եթէ առնիցես ողորմութիւն , || մի գիտասցէ ձախ քո || զինչ գործէ աջ քո : Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն , || մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի , || գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի , || և դատաւորն (մատնիցէ) դահճի :

Ասոնք խօսքեր են . առաջինը կը բաղկանայ՝ երկու , երկրորդը՝ երեք , և երրորդը՝ չորս նախադասութենէ :

350. Հ. Խօսքի մը մէջ գտնուած նախադասութիւնները ինչի՞ն կը ճանչցուին :

Պ. Դէմառոր բայերէն. ուսոի խօսքի մը մէջ որէպէ դիմառոր բայ կայ, այնպէս նախադասութիւն կայ: Ա.յսպէս. նախընթաց երեք խօսքին առաջնոյն մէջ երկու նախադասութիւն կայ. քանզի երկու դէմառոր բայ կայ, ուէր և ուէրեցէ: երկրորդին մէջ նախադասութիւններն երեք են, քանզի դիմառոր բայերը երեք են, առնէցես, ջնջոցէ, ջրթէ: երրորդին մէջ նախադասութիւնը ըզս է, քանզի ըզս դիմառոր բայ կայ, ըէր, էցես, տադնէցէ և ուրիշ տադնէցէ մը լռելեայն:

351. Հ. Խօսք մը կազմող նախադասութիւններն իրարու հետ ի՞նչպէս կը կապուին:

Պ. Խօսք մը կազմող նախադասութիւններըն, իրենց իրարու հետ յարաբերութեան եղանակին* նայելով, յարաբերական դերանունով և կամ շաղկապով մը կը կապուին.

Ասեն ցնա արքն || որ ընդ նմա էին: վատնեաց զինչս իւր, || զի կեայր անառակութեամբ:

Առջի խօսքին մէջ նախադասութիւնները կապուած են ու յարաբերականով. երկրորդին մէջ՝ և շաղկապով:

352. Հ. Նախադասութիւնները քանի՞ տեսակ են:

Պ. Նախադասութիւնները երկու տեսակ

* Եթէ նախադասութեան մը ուրիշ նախադասութեան մը հետ յարաբերութիւնը ենթադր յարաբերութիւն է, ու յարաբերականով կը կապուի անոր հետ. եթէ ընդունուած յարաբերութիւն է. երբ շաղկապով, եթէ դադարած յարաբերութիւն է, դադարի շաղկապով, այլևայլն հանդերձ:

են. ինքնուր և ինքնակալ: Յարաբերականով և կամ շաղկապով մը կապուած նախադասութիւնը ինքնակալ է, և այն որոյ հետ միջանկեալը կը կապուի՝ ինքնուր է: Ուսոի վերի օրինակներուն մէջ, ասէն ցնա արքն, վասնեաց զինչս իւր, դիմառոր նախադասութիւն են. ու ընդ նմա էին, և, զի կեայր անառակութեամբ, միջանկեալ են:

353. Հ. Նախադասութիւն մը յօրինելուն ի՞նչ կ'ըսուի:

Պ. Նախադասութիւն մը յօրինելուն, ինչպէս նաեւ այլ և այլ նախադասութիւններէ խօսք մը կազմելուն, շարադրել կ'ըսուի, և շարադրութեան այն կարգն է որով նախադասութեան մը մէջ բառերը, և խօսքի մը մէջ նախադասութիւնները, կը շարուին:

354. Հ. Շարադրութեան կարգը քանի՞ է:

Պ. Շարադրութեան կարգը երկու է, ուղղակա և ետադարձ:

Ա. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

355. Հ. Բերականական կարգն ի՞նչ է:

Պ. Բերականական կամ վերլուծական կ'ըսուի շարադրութեան կարգը, ուր ինքնուր փաղփարտ առաջ քաշուած են ուղղադրական փաղփարները: Ենթական կամ տէր բային դիմառոր դաղափար է ստորոգելոյն նկատմամբ որ երկրորդական է. նոյնպէս դոյականն՝ ածականին նկատմամբ, խնդրառուն՝ խնդրոյն նկատմամբ, ինչպէս նաեւ դիմա-

ւոր նախադասութիւնը միջանկեալ նախադասութեան նկատմամբ :

356. Հ. Ուրեմն նախադասութեան մը բառերն ի՞նչպէս շարուելու են որ շարադրութիւնը քերականական ըլլայ :

Պ. Որպէս զի շարադրութեան կարգը քերականական ըլլայ , նախադասութեան բառերն հետեւեալ կերպով շարուելու են .

1° Ենթական , այսինքն տէր բային , բայէն և սորոգելիէն առաջ , զոր օրինակ .

Ես եմ հովիւ . Դուս ես վէմ . Նուէս խորհեցան . Այդն էր մեծատուն :

2° Որ և իցէ լրանալի բառ (ենթակայ , սորոգելի , բայ , լրացուցիչ) իւր լրացուցչէն (ածականէն , բացայայտչէն , յատկացուցչէն , խընդրէն և մակբայէն) առաջ . զոր օրինակ .

Այդն այն էր մեծատուն . Այդն , ցուվք , էր արդար . Եղբարքն ցուվնէսս իմին չեքնպոս . Նա էր իշխան երկրին . Եւ նա տրամեցաւ յոյժ . Տեսի գեղ ենեւոյ ընդնոյն . Այդն այն , ցուվք , էր մեծատուն . Դըշխոյն ճգի հաբաւոյ եկն պեսանել գՍողոմն . Դուս խորհիս զայդ է սրտի ւոմ . Հերովդէս սպան զՅակովբոս , զեղբայր Տեառն , սրով . Կապանք յետոյ նորս լուծան . Արք գեղեացն լուան զնասանել նոցս անդր . Կոչեաց զերկոս ի ծոցէյ է-րոյ :

Բոլոր այս նախադասութեանց մէջ շարադրութեան կարգը քերականական կամ վերլուծական է , քանզի ամենուն մէջ ալ լրացուցիչները (ածական , բացայայտիչ , յատկացուցիչ , սեռի և

բնութեան խնդիր , մակբայ) յետոյ դրուած են քան զլրանալիս :

357. Հ. Այս կարգը քերականական կամ վերլուծական ինչո՞ւ համար ըսուած է :

Պ. Շարադրութեան այս կարգը քերականական կամ վերլուծական ըսուած է , վասն զի , երբ նախադասութիւն մը կը լուծենք քերականօրէն , նախ կը յայտնենք ենթական իւր լրացուցիչներովը , ապա բայը և ապա սորոգելին իւր լրացուցիչներովը . նոյնպէս նախ լրացուցիչը կը յիշենք , և ապա անոր լրացուցիչը . զոր օրինակ .

Արք տեղւոյն լուան (եղեն լսող) զհասանել նոցա անդր . Տեղւոյն մարդիկը լսեցին (լսող եղան) այնոնց հոն հասնելը :

Այս նախադասութեան գրաբարին կարգը քերականական կամ վերլուծական է , քանզի կը լուծուի այն կարգով որով շարուած է :

Արք ,	Մարդիկը . ենթակայ կամ տէր բայի : Որ մարդիկը . — Տեղւոյն . Տեղւոյն մարդիկը .
Տեղւոյն ,	Սեռական խնդիր կամ յատկացուցիչ արք ենթակային : Արք գեղւոյն . Տեղւոյն մարդիկը ինչ ըրին . — Եղեն , եղան .
Եղեն ,	Բայ արք ենթակային : Արք գեղւոյն եղեն . Տեղւոյն մարդիկը եղան . — Ի՞նչ . — Լուղ . լսող .
Լուղ ,	Սորոգելի արք ենթակային , Արք գեղւոյն եղեն լուղ . Տեղւոյն մարդիկը եղան լսող . — Ի՞նչ բանը . — Զհասանել . հասնելը .
Զհասանել ,	Սեռի խնդիր լուղ սորոգելւոյն : Արք գեղւոյն լուան զհասանել . Տեղւոյն մարդիկը լսեցին հասնելը . — Որո՞ւն հասնելը . — Նոցա . անոնց .

Նոյ՝ Սեռական խնդիր կամ յատկացուցիչ հոլովն սեռի խնդրոյն։ Աբր՝ տեղոյն ըստ ձեռնադնել Նոյ. Տեղոյն մարդիկը լսեցին անոնց հասնելը. — Ո՞ւր. — Անդր. հոն.

Անդր՝ Մակբայ, որ հոլովն սեռի խնդրոյն մէկ պարագան, այսինքն տեղոյ պարագան, կը ցուցնէ։

358. Հ. Նախադասութիւն մը ինչո՞ւ համար այս կարգով կը լուծուի։

Պ. Վասն զի տրամաբանութեան բնական կարգն այս է, և միտքն այս կերպով կը լուծէ և կ'ըմբռնէ իւր գաղափարները։

359. Հ. Պէ՞տք է որ շարադրութեան կարգը միշտ քերականական ըլլայ։

Պ. Ոչ, կրնայ երբեմն չհետեւիլ։

Բ. ՁԵՒԱԻՈՐ ԿԱՐԳ

360. Հ. Շարադրութեան ձեւաւոր կարգն ի՞նչ է։

Պ. Շարադրութեան կարգը ձեւաւոր կ'ըսուի, երբ Աբրուղութիւն, Ջեղջոյ և Անելագրութիւն կոչուած քերականական ձեւերուն մէկզմէկ է։

1. Արտուղութիւն

361. Հ. Արտուղութիւնն ի՞նչ է։

Պ. Աբրուղութիւն կ'ըսուի, երբ նախադասութեան մասերը քերականական կարգէն տարբեր կը շարուին. զոր օրինակ. երբ բայը կամ ստորոգելին առաջ կը դրուի քան զենթակային, կամ լրացուցիչ մը քան զլրանալի բառը, զոր օրինակ.

Առն ուրուն մեծատան եւուն անդք տոհմականս. Ի միւսանգամ Պաւղոսի յերուսաղէմ ելանել. երկուց արարչաց, զբարւոյ և զչարի, ի միոջէ հօրէ ջծնունդան համբաւէ. Առ ի գիւաւարն և զտուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ. Վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա։

Այս նախադասութեանց մէջ շարադրութեան կարգն սխալ է. քերականական կարգն այս է.

Անդք առն ուրուն մեծատան եւուն տոհմականս. Ցելանելն Պաւղոսի միւսանգամ յերուսաղէմ. Համբաւէ ջծնունդս երկուց արարչաց, բարւոյ և չարի, ի միոջէ հօրէ. և այլն։

362. Հ. Արտուղութիւնը քանի՞ է։

Պ. Արտուղութիւնը երկու է. հարկաւոր և ազատ։

Ա. Հարկաւոր արտուղութիւն

363. Հ. Արտուղութիւնը ե՞րբ հարկաւոր է։

Պ. Արտուղութիւնը հարկաւոր է, երբ կը տեսնուի որ բառ մը քերականական կարգը պահելով խորթութիւն կամ երկդիմութիւն կը պատճառէ. զոր օրինակ.

1° Քերականական կարգով ածականը յետադաս ըլլալով դոյականին՝ անոր հետ կը հոլովի (Տես թիւ 51)։ Բայց խորթութենէ կամ երկդիմութենէ խուսելու համար հարկ է երբեմն ածականը դոյականին նախադաս ընել, զոր օրինակ.

Վասն իմանալոյ սպասաւորին սորա հոգւոյն։
Գառն և սպիտակ խորհանոցն Հերովդի։

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ, եթէ ապրուածնէին ածականը հոգի դարձականէն եառքը դնուելով հոլովի այսպէս, վասն իմանալոյ հոգւոյն որ ապրուածնէինէ, խորթ կ'ինայ։ Երկրորդ նախադասութեան մէջ ալ, եթէ պառն և ապրուիլ ածականները կրճանուած դարձականէն եառքը դրուին, այսպէս, կրճանուած պառն և ապրուիլ հերովդէ, երկդիմութիւն կը ծագի, քանզի կրնայ պառն և ապրուիլ հերովդէ հասկցուիլ։

2° Բերականական կարգով յատկացուցիչը յատկացեալէն եառքը պիտի դրուի. բայց նոյնպէս երկդիմութեան պատճառ կրնայ յատկացեալէն առաջ դրուիլ, զոր օրինակ.

Յովհաննու եղբայրն որ սպանաւ սրով։

Այս նախադասութեան մէջ Յովհաննու յատկացուցիչը իւր յատկացեալէն, եղբայր բառէն, առաջ դրուած է. եթէ եառքը դրուէր այսպէս, եղբայրն Յովհաննու որ սպանաւ սրով, իմաստը երկդիմի կ'ըլլար, և կրնար հասկցուիլ թէ սպաննուածը Յովհաննէսն էր։

Նոյնպէս յարաբերական դերանուն յատկացուցիչը հարկաւոր արտաղրութեամբ միշտ յատկացեալէն առաջ կը դրուի, զոր օրինակ.

Կինն որոյ անուանն պատմի ընդ ամենայն աշխարհ։

Այս նախադասութեան մէջ որոյ յարաբերականը, որ անուան բառին յատկացուցիչն է, անկէ առաջ դրուած է, որպէս զի անմիջապէս իւր յա-

րաբերեալին, կին բառին կից ըլլայ (Տես թիւ 280)· քանզի չի կրնար ըսուիլ, կինն անուան որոյ պատմի։

3° Բերականական օրէնքով տէր բային բային պիտի չդասուի, բայց տէր բային բային զատել հարկ է, երբ տէր բայիէն անմիջապէս եառքը միջանկեալ նախադասութիւն մը կայ, որ անոր մէկ յատկութիւնը կը բացատրէ, զոր օրինակ.

Յակոբոս, զոր սպան Հերովդէս, կոչէր եղբայր տեառն. (Տես և թիւ 280-284)։

4° Հարցական նախադասութեանց մէջ տէր բային բային եառքը կը դրուի, իսկ հարցական բառն իրեն վերաբերեալ մասերով բային առաջ, զոր օրինակ.

Որդի՞ ոի իցէ սա. վասն որո՞յ ծուխն կամիք (պատ) քարկոծ առնել դմա. Զի՞նչ ծուխ գործեալ է ս։

Առաջին նախադասութեան մէջ սա տէր բային բային եառքը դրուած է, որդի՞ ոի ստորոգեալին՝ առաջ. երկրորդ նախադասութեան մէջ պատ տէր բային բային եառքը դրուած է, վասն որո՞յ ծուխն խնդիրն՝ առաջ։ Երրորդ նախադասութեան մէջ ծուխ բային ս սեռական տէր բային (Տես թիւ 178) բային եառքը դրուած է, և զի՞նչ ծուխ սեռի խնդիրն՝ առաջ։

5° Բերականական կարգով մակբայները բային եառքը կը դրուին, բայց, ոչ, ծ, բացասական և արդելական մակբայները (Տես թիւ 163) հայերէնի մէջ սովորաբար բային առաջ կը դրուին, զոր օրինակ.

Ոչ եմ, կամ, վեմ արժանի. Ոչ կամիմ. Մի սիրէք։

364. Հ. Արտաղրութիւնը ե՞րբ ազատ է։

Պ. Արտաղրութիւնն ազատ է, երբ շարագրութեան քերականական կարգը փոխել հարկ չէ, այլ գրողին կամքէն կամ ընտրողութենէն կախում ունի։

365. Հ. Հայերէնի մէջ արտաղրութեան սովորական դէպքերը քանի՞ են։

Պ. Հայերէնի մէջ արտաղրութեան սովորական դէպքերը երե՛ք են։

1° Ենթակայի և բայի արտաղրութիւն. այսինքն՝ բայը ենթակային (տէր բայիին) առաջ դնել. զոր օրինակ.

Էր այդ մեծատուն. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. Աւե Պետրո, երթամ ձուկն որսալ. ասեն. Գամ և ես ընդ քեզ։

2° Ենթակայի և ստորոգելոյ արտաղրութիւն. այսինքն՝ ստորոգելին բայէն առաջ դնել, և ենթական բայէն ետքը. զոր օրինակ.

Մեծապոռն էր այդ. Լաւ էք դուք քան զմեզ. Եբաթոնք են ոտք նոցա. Եբանելի են կանայք ք։

3° Ցատկացուցչի և յատկացելոյ արտաղրութիւն. այսինքն՝ յատկացուցիչը յատկացեալէն առաջ դնել. զոր օրինակ.

Աստուծոյ բարբառ է. Պարբերմամբ ակնդէն յապահովենէ մարդկան եղեւ. եթէ Աստուծոյ կամք գործին այսպիսի չարիք, ընդէր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ Աստուած. Ոչ իշխէ ոք ոչոյէ ոչոյէ ծառայ ի կայսր խրախուսել, և ոչ կայսէր ոք ծառայ ի Սատանայէն խիզախել։

4° Խնդրառուի և խնդրոյ արտաղրութիւն. այսինքն՝ խնդիրը խնդրառուէն առաջ դնել։

Զհոյ մեր հանապազորդ տուր մեզ. Զհիւանէս և զհարսս դու սրսրեր. Զօրէնս ի սէրեցէք. Զպատուէրան ի պահեցէք։ Ցովսեփայ և Դանիէլի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան. այսինքն, Տեսիլք մեծամեծ իրաց յայտնեցան Ցովսեփայ և Դանիէլի. Թուի թէ ի ծովէ ելանէ արեգակն. այսինքն, Թուի թէ արեգակն ելանէ ի ծովէ։ Եւ զդողութենէ նոյն բանք են. այսինքն, Նոյն բանք են և զդողութենէ։ Ի բնակչաց թափուր զերկիրն կացուցանէր. այսինքն, կացուցանէր զերկիրն թափուր ի բնակչաց. Փորձելոյ վասն ասէր. այսինքն, վասն փորձելոյ. Ծովակն որ զնովաւ չուրջ էր. այսինքն, Ծովակն որ էր չուրջ զնովաւ. Քան զաւուրս ինչ յառաջ. փոխանակ, Յառաջ քան զաւուրս ինչ. Այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ. փոխանակ, Այլ ոք իջանէ յառաջագոյն քան զիս. Ի ներքոյ թզենւոյն տեսի զքեզ. այսինքն, Տեսի զքեզ ի ներքոյ թզենւոյն։

366. Հ. Երբ յատկացուցիչը յատկացեալէն առաջ կը դրուի, յատկացելոյն նախդիրն ի՞նչ կ'ըլլայ, եթէ յատկացեալը նախդիր ունի։

Պ. Երբ յատկացուցիչը յատկացեալէն առաջ կը դրուի, յատկացելոյն նախդիրը (եթէ յատկացեալը նախդիր ունի) կրնայ յատկացուցչին վրայ միայն դրուիլ, կամ երկուքին վրայ ալ կրկնուիլ, և կամ յատկացելոյն վրայ միայն ձգուիլ։

Առ ընդրին սուսեր և եհատ զդլուխ նորա. Գիտել զաարեաց փոփոխմունս և զաստեղաց գիրս. Սատանայ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմար-

տութենէն. Սատանայ չերբայեցւոց և չԱսորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի. Յուղղոյն անանալոյ և ի մտաց իսկ անկանի մարդն. Դարձան չիւրեանց տեղիս. Ընդ Ցխտուսի մկրտելն և կալ յաղօթս:

Ա.յս օրինակներուն մէջ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ միայն դրուած է:

Զարժանի վերիժուց շհատուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ. Զմեծին Աստուծոյ Արեամեայ վերհեանն. Զորոյ ես դղրվին հատի. Զօդոյն, որ ցայգ ուռնու ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ չքթեցուցանէ ի բաց ջրամբութիւնն. Ի միւսանգամ Պաւղոսի չերուսաղէմն եղանել:

Ա.յս օրինակներուն մէջ նախդիրը թէ նախադաս յատկացուցչին և թէ յատկացեալին վրայ դրուած է:

Եւ ոչ մեծին Գրիգորի չառաքինութիւնն ուչ եղին. Ա.յլ նոցա որպէս վճռեցին զդենումբ և ոչ վնասէ, և զմիան, եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր, ոչ վնասէր. Նորա վիճաս հաճէք, այլ չիեզերաց զմիաս ոչ կարէք հաճել. Քաղաքի միոյ մեծի դիչխանութիւն հաւատալ. Երկուց արարչաց, զբարւոյ և զչարի, ի միոյէ հօրէ չծնունդսն համբաւէ:

Ազգ՝ որոյ ոչ լուիցես զեզուս. Որոյ չարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա. Որոց ընդ հարսն երդմունս և դաչինս արարեր: Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին. Որոյ հուր յաչացն արձակիցի:

Ա.յս օրինակներուն մէջ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ դրուած չէ:

Ցաչս ելանել բառն ալ այսպէս կը դործածուի, այսինքն՝ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ չի դրուիր, զոր օրինակ.

Շատից յաչաց ելանէին. Աստուծոյ յաչաց ելին. Նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց:

367. Հ. Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէն առաջ կը դրուի, և նախադրութիւնը նախդիր ունի, նախդիրն ի՞նչ կ՚ըլլայ:

Պ. Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէն առաջ կը դրուի, և նախադրութիւնը նախդիր ունի, այս նախդիրը կրնայ երկուքին վրայ ալ կրկնուիլ, և կամ միայն նախադաս խնդրոյն վրայ դրուիլ, զոր օրինակ.

Ի պէսպէս փորձութեանց է մէջ անկանիցիք. Ի ձերում միջի. Զմեր կնի ոչ չրջէը. Զոյր չհետ ելեալ ես. Ի մեր վերայ:

368. Հ. Մակբայներու և չաղկապներու արտուղութեան վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Պ. 1° Երբեմն «ը բայաստական և դ արդելական մակբայը, և, ընդե՞ր, ընդէ՞ր, որո՞ւ, որո՞ւմ, որո՞ւէ, հարցական մակբայները բայէնետքը կը դրուին:

Ողթաթահերձ է, բայց սրճայ «ը, պիղծ իցէ նա ձեզ. Տկարանայ ինչ «ը քեզ. Գրեցաւ իսկ «ը. եթէ գովեսցես զբանն, և առնիցես «ը, մեծամեծ պատիժք են. Ցայտ է թէ բնաւ և էր իսկ «ը Զբրուանն. Նա և առնուին իսկ «ը յանձն. Բնաւ և յիշեմ իսկ «ը. Որ ոչն գործիցէ, և կերիցէ դ. Եւ փըրկէը իսկ ընդե՞ր զայլոց արարածս. Բնաւ իսկ աստ ընդե՞ր կոչիցի. Եւ գոհանային ո՞ւմէ. Կամի զի կանդնեսցէ. և կանդնէ «ո՞ւմէ»:

2° Երբեմն ալ չաղկապներէն ոմանք փոխանակ դրուելու նախադասութեան սկիզբը, մէջտեղը կը դրուին, զոր օրինակ.

Սով եղեւ լինելոյ յերկրի. փոխանակ՝ եթէ սով լինելոյ յերկրի. Իմ եղեւ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա. Զի կամակար մտօք եղեւ յանցանիցեմք. Զայն ընկալեալ՝ ցանկութիւն շահիցն հնարեցաւ. Կոյր կուրի յորժամ առաջնորդէ. Զերմ ինդրեալ էր իբրև ղհուր։

369. Հ. Հրամայել բային վրայ ի՞նչ դիտելիք կայ։

Պ. Երբ ու, ւ, բացատական մակբայը, վասնական դրուելու հրամայել բային անեղեւոյթ խընդրոյն վրայ, հրամայել բային վրայ կը դրուի, այս բայը կը նշանակէ արգելել, եաստ էնդէ, զոր օրինակ.

Զգրաստու թշնամւոյն անկելոյ բեռամբ չհրամայէ՝ զանց առնել. Զուլ ի մոր կաթն չհրամայէ եւիել. Ուտել ի պաղոյ ծառոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ. Վասն հոգւոյ չտայ հոգալ, և վասն մարմնոյ չհրամայեաց տատամսել. Պաւղոս չհրամայեաց զարդարել կանանց. Չհրամայեաց ումեք ի վեր հանել. Փոխանակ ըսելոյ՝ Հրամայէ չառնել զանց, չեփել, չը զարդարել։

370. Հ. Ուրիշ ի՞նչ տեսակ արտաւղութիւն կայ։

Պ. Տեսակ մը արտաւղութիւն ալ կայ, և սա է որ իրարու հետ անմիջապէս կապակցութիւն ունեցող բառերու մէջ տեղ ուրիշ բառեր կը մըտնեն, զոր օրինակ.

1° Նախադասութեան ու խնդրոյն մէջտեղ։

Թշնամի կոչի (սատանայ) վասն զորոյն ի մէջ ցոբենոյն ներմանելոյ. փոխանակ՝ վասն ներմանելոյ զորոյն, և այլն. Վասն ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ. Ցեր զաչխարհն ընդ ձեռամբ նուաճելոյ. Ա- ի զաւերն Բաբելոնի նշանակելոյ։

2° Բացատական մակբային ու բային մէջտեղ, զոր օրինակ.

Մի, զի չեմք ակն, ասացուած թէ չեմք ի մարմնոյ անտի. փոխանակ՝ Մի ասացուք թէ չեմք ի մարմնոյ, այնու զի չեմք ակն. Մի, ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն, նըմանեսջիք դմա. Մի, վասն զի չէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ սկզբան աշխարհիս թէ զիարդ և որպէս էցէ, նըմանեցուած թէ առնըսկիզբն և առանց արարչի էցէ. Զի զ, մթարբն որ զբբօքն չողայցեն, արբել հայելոյ ի յօտակութիւն լուսոյն լինին. Եւ ու, թէ վիշտս ինչ կրիցեն, դէտ։

3° Երկու բառէ չհնուած նախադրութեանց կամ մակբայից մէջտեղ, զոր օրինակ.

Ընդ հողմոյն գնէմ. փոխանակ՝ Ընդդէմ հողմոյն. Գրէ իսկ ընդ ամենայն. փոխանակ՝ Գրեթէ ամենայն։

Ա յսպէս կ'ըսուի նաեւ.

Այլ ինչ ապէ. Այլիմն ապէ։ Ոչ այսչափ միայն, այլ և այլ եւս ապէ. փոխանակ՝ Այլազգ ինչ, Այլազգ իմն, Այլազգ եւս։

4° Երկու բառէ չհնուած ասութիւններու մէջտեղը, զոր օրինակ.

Ապա եթէ զմարտուսոյցն չգոհ ոչ ածիցեն. փոխանակ՝ Ոչ ածիցեն զմոտաւ. Արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս. փոխանակ՝ Արկ ձեռն Հերովդէս, և այլն։

Զի մի, մթարբն որ զբբօքն չողայցեն, արբել հայելոյ ի յօտակութիւն լուսոյն լինին. Աբար Աստուած այդ որդւոյն Իսրայէլի. Ցորժամ առաջնորդն ապէ, կամ ոտամբ կամ ձայնիւ, առնիցէ. Զինչ ինչ յայտ օրհնութիւնքն առնիցեն. Ցայտ ի Ցովսէ վարձատացն է։

5° Լական բայէն և անցեալ ընդունելութենէ բաղադրեալ ժամանակներու մէջ՝ եկած բային ու անցեալին մէջտեղը, զոր օրինակ.

Ես ձնեալ իսկ ի դմին եմ. ելանայ՝ ես ձնեալ եմ իսկ ի դմին. Որ էր, վասն խռովութեան իրիք եղեալ ի քաղաքին և սպանութեան, գտեալ ի բանտ: Մինչչև ձեր ընդրեալ ինչ էջէ. Զեւ էջէ հատու խօսել: Անդ էր նաեւ Ընթելոց զբեռինն:

2. Զեղչում

371. Հ. Զեղչումն ի՞նչ է:

Պ. Զեղչո՞ւմ կ'ըսուի, երբ նախադասութեան մէկ մասը զանց առնուած է, բայց լրեալեան կ'իմացուի, զոր օրինակ.

Հոսաքել լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին (նոյս կենդանի):

Այս խօսքին մէջ վիակադծի մէջ առնուած նոյս և կենդանի բառերը, որ էին բային ենթակայ և ստորոգելի են, զեղչուած են, բայց կ'իմացուին լրեալեան:

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն (տոպանիցէ զքեզ) դահճի:

Այս խօսքին մէջ ալ վիակադծի մէջ առնուած տոպանիցէ բայն իր սեռի խնդրոյով զեղչուած է, բայց երկուքն ալ լրեալեան կ'իմացուին:

Զակէոս խնդրէր տեսանել զՅիսուս, և ոչ կարէր (տեսանել զնա) ի բազմութենէն:

Այս խօսքին մէջ ալ վիակադծի մէջ դրուած մասը, տեսանել զնա, որ կարէր բային խնդիրն է, զեղչուած է, բայց լրեալեան կ'իմացուի:

372. Հ. Հայերէնի մէջ ընդհանրապէս նախադասութեան ո՞ր մասերը կը զեղչուին:

Պ. Հայերէնի մէջ ընդհանրապէս կը զեղչուին.

1° Ենթական կամ տէր բային.
2° Բայը.
3° Խնդիրները:

1. Ենթակայի կամ տէր բային զեղչում

373. Հ. Ո՞ր տէր բայիները կը զեղչուին հասարակօրէն:

Պ. Հասարակօրէն կը զեղչուին բայերուն առաջին և երկրորդ դէմքի տէր բայիները ես, դուս. Դէ, դուք, զոր օրինակ.

Կոչեցի զնոսա. Եղիցիս կոյր. Կամիմք գիտել. Գիտէք զինչ արարի:

Հարկ չէ ըսել, ես կոչեցի, դուս եղիցիս, Դէ կամիմք, դուք գիտէք:

374. Հ. Երրորդ դէմքի դերանուն տէր բայիները, նա, նոքա, ինձն, ինքեանք, ե՞րբ կը զեղչուին:

Պ. Երրորդ դէմքի դերանուն տէր բայիները, նա, նոքա, ինձն, ինքեանք, կը զեղչուին, երբ բային բուն տէր բային յայտնի է. եթէ յայտնի չէ, պէտք է յայտնի ընել զայն դերանուամբ կամ ուրիշ որ և իցէ կերպով. զոր օրինակ.

Այր ոմն տնկեաց այգի և եւթ զնա մշակաց. և ի ժամու աւուրցն առ մշակսն ծառայ, զի ի պտղոյ այգւոյ տացեն նմա. և մշակքն զան հարին զծառայն և արձակեցին ունայն. յաւել միւս եւս ծառայ յղել,

նոքա և զնա եւս դան հարին, անարգեցին և արհամարհեցին ունայն:

Այս խօսքին մէջ, եթ, արհամարհաց, պատճառ, արյակեցին, յաւել, անարգեցին, արհամարհեցին բայերը դերանուն առը բայի չունին, քանզի յայտնի է թէ առաջին երկուքին առը բային այր անն է. երրորդին և չորրորդինը՝ հշդ բառն է. հինգերորդինը՝ դարձեալ այր անն է. վեցերորդին և եօթներորդինը՝ դարձեալ հշդ բառն է:

Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բաժին որանկանի յընչից. և նա բաժանեաց նոցա զկեանսն: Ցետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ ճնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին, և սկսաւ ինքն չքաւորել: Եւ գնացեալ յաճեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին, և առ յղեաց զնա յադարակ իւր արածել խոզս: Ցանկայր նա լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա...: Եւ յարուցեալ ելն առ հայր իւր, և մինչդեռ հեռագոյն էր, եահս զնա հայրն և ընդոստաւ, յարեաւ և ընդոստաւ ընդառաջ, անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա, և ածէք զեղն պարարակ, զնէք, կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորեալ էր և գտաւ. և սկսան ուրախ լինել:

Եւ էր երէց որդի նորա յադարակի. և մինչդեռ գայր և մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց, և կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն, հարցանէր թէ զինչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա թէ եղբայր քո եկն, և սպան հայր քո զեղն պարարակ, զի զողջ խոզքն կ'ուտէին, բայց ոչ ոք կուտար անոր...: Եւ ելաւ զնաց իւր հօրը, և մինչդեռ հեռու էր, տեսաւ զանի հայրն և գթացաւ, ելաւ վազեց դիմացը, անոր վիզն ինկաւ և համբուրեց զնի: Եւ որդին ասաւ անոր. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և այլ եւս արժանի չեմ որդիդ կոչուելու: Իս հայրն ասաւ ծառաներուն. Շուտով հանեցէք առջի պատմուճանը և հագուցէք անոր, և մատանին ձեռքը տուէք, կօշիկներն ալ ոտքը, և բերէք գիրցած եղը, մորթեցէք, ուտենք և ուրախ ըլլանք, վասն զի այս որդիս մեռած էր և ապրեցաւ, կորսուած էր և գտաւ. և սկսան ուրախութիւն ընել:

Իսկ անոր երէց որդին պարտկն էր. և մինչդեռ կու գար և տանը մօտեցաւ, լսեց երգերուն և պարերուն ձայնը, և իրեն կանչելով ծառաներէն մին, կը հարցնէր թէ ինչ

սէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, և եղեն հայր քո զեղն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ երէցն և ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս աղաչէր զնա: Նա պատասխանի ետ և ասէ ցհայրն. Այս քանի՛ ամք են զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբէք ոչ ետուր ինձ զի ուրախութիւն ընդ բարեկամս իմ. յորժամ եկն որդիդ քո այդ որ եկեր ըզկեանս քո, զեղեր դմա զեզն պարարակ: Եւ ասէ ցնա հայրն, Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկն, կորուսեալ էր և գտաւ:

Այս օրինակին մէջ, առաջին և երկրորդ դէմքի բայերուն տէր բայիները զեղչուած են. իսկ երրորդ դէմքի բայերէն նոսր գրով գրուածներուն միայն տէր բայիները զեղչուած են, քանզի յայտնի են:

375. Հ. Ուրիշ ի՞նչ բառեր, տէր բայի ըլլալով, կրնան զեղչուիլ:

Պ. Կրնան զեղչուիլ 1° Ոճ, ած, ամած, ի, անորոշ կամ միջակ անուններըը (Տես թիւ 67), երբ տէր բայի են, զոր օրինակ.

Եկն առ իս յեղբարց իմոց. այսինքն, Եկն առ իս ոճ կամ ին յեղբարց իմոց: Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի. այսինքն, Եկին ընդ մեզ ամած յաշակերտաց անտի: Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ ի գաղանաց և ի սողնոց կամ յայլ անասնոց կամ ի մարդկանէ վնասել կարասցեն. այսինքն, Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ ին ի գաղանաց և ի սողնոց կամ յայլ անասնոց, կամ ի մարդկանէ ած վնասել կարասցեն:

2° Կը զեղչուի երբեմն յարակատարին, դերակատարին և առորդաստական անցեալին, այսինքն՝ էական բայով և անցեալ ընդունելութեամբ չինուած բաղադրեալ ժամանակներուն (Տես թիւ 155), եղակի երրորդ դէմքին տէր բային որ սեռական հոլով է (Տես թիւ 178), զոր օրինակ.

Զգաւթն մի չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. այսինքն, զի ին տուեալ է զնա հեթանոսաց: Եթէ զգործան չէր գործեալ ի նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. այսինքն, Եթէ էր չէր գործեալ ի նոսա զգործն, և այլն: Ընդ մեզ զի՛ էք պղտցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ արարեալ իցէ զինալդ դմա. այսինքն, արարեալ իցէ ին զինալդ դմա: Զինչ ուներս զոր ոչ իցէ առեալ. այսինքն, զոր ոչ իցէ առեալ ած: Մինչչեւ ստեղծեալ էր զերկիր յորովայնի, զիտեմ զերկիր. այսինքն, Մինչչեւ ստեղծեալ էր ին երկիր: Մինչչեւ խօսեցեալ իցէ՝ ուսիր. այսինքն, Մինչչեւ խօսեցեալ իցէ ած՝ ուսիր:

376. Հ. Այս վերջին դէպքին վերաբերեալ ի՞նչ դիտելիք կայ։

Պ. Երբ բաղադրեալ ժամանակը երկուք է, մէկը տէր բային դէմքը կ'առնէ, միւսը երրորդ դէմք կը մնայ զեղչեալ տէր բայիով, զոր օրինակ.

Զառ ի յետոյն ոտացեալ է (էմ), և ի յառաջադէմն նկրթեալ եմ. փոխանակ ըսելու, Զառ ի յետոյն ոտացեալ, և ի յառաջադէմն նկրթեալ եմ։

Եթէ կացեալ եաւ ի պատուիրանիդ քում. տէր, և պահեալ էր (ըը) զօրէնս զոր եդիր. փոխանակ։ Եթէ կացեալ եաւ ի պատուիրանիդ քում, և պահեալ եաւ, և այլն։

Մինչչեւ պեսեալ էր (նոյա) ընա, և մինչչեւ ի նախանձուէն էին հաշեալ։ փոխանակ, Մինչչեւ պեսեալ էին ընա, և մինչչեւ ի նախանձուէն էին հաշեալ։

Մինչչեւ ձնեալ էին, և մինչչեւ բարի ինչ կամ չար ֆորձեալ էր (նոյա). փոխանակ, Մինչչեւ ձնեալ էին, և մինչչեւ բարի ինչ կամ չար ֆորձեալ էին։

Յորժամ զայսպիսի մեծամեծս առեալ էջ (ըը), և սակաւս պահանջիցէ. փոխանակ ըսելու, Զայսպիսի մեծամեծս առեալ էջեւ, և սակաւս պահանջիցէ. Այսպիսի մեծամեծ բաներ առինք, և քիչ բան կը պահանջուի մեզի։

377. Հ. Այսպէս յարակատարի կամ գերակատարի եղակի երրորդ դէմքին զեղչեալ տէր բային ուրիշ բառ ալ կրնա՞յ ըլլալ։

Պ. Այսպէս յարակատարի կամ գերակատարի եղակի երրորդ դէմքին զեղչեալ տէր բային կրնայ ըլլալ անորոշ անուն մը կամ այնպիսի բառ մը որ խօսքին իմաստէն կը հասկցուի, զոր օրինակ.

Զայս ամենայն գրեալ է (առաքեաց կամ սրբոյ) ի գիրս ժամանակաց թագաւորացն։ Տեսին զի թաւալեցուցեալ էր (սրբոյ) զվէմն ի գերեզմանէն։ Զեւ եւս էր արկեալ (Հերովդէ) զՅովհաննէս ի բանտ։ Եդ զնա ի գերեզմանի զոր էր փորեալ (Նորա, Յովսեփու) ի վիմի։ Եդ ի կառածոյ գերեզմանի ուր չէր (Նորա, Յովսեփու) բնաւ զոք եդեալ։

2. *Բայի զեղչում*

378. Հ. Բայը ե՞րբ կը զեղչուի ընդհանրապէս։

Պ. Խօսքի մը մէկ անդամին մէջ յիշուած բայ մը, մինակ և կամիրեն վերաբերեալ խնդիրներով մէկ տեղ, ընդհանրապէս կը զեղչուի նոյն խօսքին միւս անդամին մէջ, զոր օրինակ.

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն՝ դահճի. այսինքն, եւ դատաւորն մատնիցէ զքեզ դահճի։

Լուարուք զի ասացաւ առաջնոցն. Մի երդնուցուս սուտ, այլ ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. այսինքն, ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի երդնուլ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, եւ մի երդնուլ յերկիր, զի, եւայլն։

Թէպէտեւ ամենեքին գայթակղեցին, այլ ես՝ ոչ. այսինքն, այլ ես ոչ գայթակղեցայ։

Զերախտաւորն եւ զբարերարս որ ի նմանէ (Աստուծոյ) կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարդել. բայց դարձեալ եւ ոչ զպաշտօն արարչին՝ արարածոց մատուցանել. այսինքն, բայց դարձեալ եւ ոչ զպաշտօն արարչին հրամայեմք արարածոց մատուցանել։

Զիմըդ պաշտիցեմք զարեգական որ կոչի Ծառայ.

կամ ղլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ ղերկիր՝ ղոր հանապազ բրեմք եւ ցանգ կոխեմք. այսինքն, կամ ղե՞րդ պաշտեցեմ ղլուսին որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ ղե՞րդ պաշտեցեմ ղերկիր ղոր, եւայլն:

Որ առողջ միտս ունին, ոչ ղշարժուն՝ այլ ղշարժիչն պարտին փառաւորել. այսինքն, ոչ ղշարժունն պարտին փառաւորել՝ այլ ղշարժիչն պարտին փառաւորել:

Գովեսցէ ղբեզ ընկերն, եւ մի քո բերան. օտարն՝ եւ մի քո շրթունք. այսինքն, Գովեսցէ ղբեզ ընկերն, եւ մի ջովեսցէ ղեզ քո բերան. ջովեսցէ ղեզ օտարն, եւ մի ջովեսցեն ղեզ քո շրթունք: Նոքա կարօտ են հացի, եւ դու՝ իմաստութեան. այսինքն, եւ դու կարօտ ես իմաստութեան:

Արեգակն խաւարելովն յայտ առնէ թէ՝ Ձեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս զամենայն տիւ լուսաւոր պահէ. այսինքն, Ձեմ ես արժանի պաշտաման, այլ այն է արձանն պաշտաման որ. եւայլն:

379. Հ. Ուրիշ ի՞նչ բայ կը ղեղչուի յաճախ:

Պ. Յաճախ կը ղեղչուի եոկան բայը 1° երբ անցեալ ընդունելութեան մը հետ է, մանաւանդ թէ բային անցելոյն հետ, ղոր օրինակ.

Տուեալ լեցի քեզ թագաւորութիւնն իմն հա զա ամի, եւ Որմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ. այսինքն, կացուցեալ լեայ: Տուեալ քեզ ղՀագար, նաժիշտ իմ. այսինքն, Տուեալ եմ քեզ ղՀագար, եւայլն: Զամենեսին որ անցանիցեն ղօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել. այսինքն, Տուեալ եմ քեզ իշխանութիւն եւայլն: Արքայ, տուր իշխանութիւն, եւ սպանիցէ զվիշապդ. եւ ասէ թագաւորն. Տուեալ քեզ. այսինքն, Տուեալ եմ կամ լեայ քեզ: Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ դի... այսինքն, Պատուիրեալ եմ ձեզ դի, եւայլն: Զի ահա-

սիկ Հողեփեռն յերկիր կործանեալ, եւ գլուխ իւր չէ առնմա. այսինքն, Ցերկիր կործանեալ է, եւայլն: Գնացին արք անօրէնք պատմել թագաւորին, եթէ Ցոլիաթան մեքենայս կազմեալ, շուրջ զբերդսն պատեալ, յառնուլ պատրաստեալ. այսինքն, Ցառնուլ պատրաստեալ է: Եւ արքայ Դաւիթ ծերացեալ եւ անցեալ զաւուրբք, եւ ծածկէին զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր: այսինքն, Ծերացեալ էր և անցեալ զաւուրբք:

2° Լական բայը կը ղեղչուի մանաւանդ ինչ-չե-, չե-, բառերէն եառքը, ղոր օրինակ.

Մինչչեւ լերինք հաստատեալ էին, և մինչչեւ ստեղծեալ ղերկիր և ղամենայն տիեզերս. այսինքն, Մինչչեւ էր ստեղծեալ (Աստուծոյ) ղերկիր, և այլն: Մինչչեւ եկեալ առ Միմեանս՝ (Մարիամ) դուստր յըղացեալ ի Հոգւոյն սրբոյ. այսինքն, Մինչչեւ եկեալ էին ընդ Միմեանս (Ցովսէփ և Մարիամ), և այլն: Զինչ չար քան զօճ կայցէ, և ի նմանէ լինի թերիակէ, և ի սպանող դեղոց, որք ի նենդութենէ մարդկան կազմեցան, չէս հասուցեալ եւ անդէն բուժէ. այսինքն, Չես հասուցեալ էդե. Օձէն դէշ ինչ բան կայ. սակայն թերիակէն (թիրեաք) անկէ կըլլայ, որ հաղիւ թէ կը հասնի, իսկոյն կը բժշկէ. Չես նստեալ, եւ անդէն յօրհնութիւնսն յորդորին. այսինքն, Չես նստեալ էդեն, եւ անդէն, եւայլն: Հաղիւ կը նստին, (կամ կը նստին չեն նստիր,) փառաբանութեան կը չարժին: Չես այդ եղեալ, իւրաքանչիւր ղընկեր կոչեմք. այսինքն, Չես այդ եղեալ էդե եւայլն. Առտու ըլլալուն պէս, իրար կը կանչենք:

3° Լական բայը կը ղեղչուի, երբ յարաբերական դերանուամբ միջանկեալ նախադասութիւն

է, և աչխարհաբար եղէ ընդունելութեան զօրութիւնն ունի, զոր օրինակ.

Լուսան ամենայն թագաւորք որ յայնկոյս Յորդանանու (էին). Յորդանանու անդին եղէ բոլոր թագաւորներըը լսեցին. Աւետն արքն որ ընդ նոսա (էին). Անոնց հետ եղէ մարդիկ ըսին. Ցիշեաց զուխտ իւր որ ընդ Աբրահամու (էր). Որդի Յովսեփայ որ Հեղեայն, որ Մատաթիայն. այսինքն, որ էր (ըզէ) Հեղեայ, որ էր (ըզէ) Մատաթիայ. Մատաթիային որդւոյն Հեղիի որդւոյն Յովսեփայ որդին էր:

380. Հ. Նախադասութեան մը իմաստին ի՞նչ մանաւանդ յատկութիւն տալու համար շատ անգամ բայ մը կը զեղչուի:

Պ. Շատ անգամ բայ մը, մանաւանդ էական բայը, կը զեղչուի՝ նախադասութեան իմաստը հակիրճ և պարզ ընելու համար, և այս մանաւանդ այնպիսի նախադասութեանց մէջ որ ծանուցում կամ մեկնութիւն կամ առակ կամ ոխտ են, վերնագիր են, զոր օրինակ.

Այդ ձեզ օրհնութիւն յաւարէ թշնամեաց. այսինքն, Այդ է ձեզ օրհնութիւն, և այլն: Եկաց քարոզ զօրուն ի բանակին և ասէ, Իւրաքանչիւր ոք ի քաղաք իւր և յերկիր իւր. այսինքն, Իւրաքանչիւր ոք երթիցէ ի քաղաք իւր, եւայլն: Ասէ արքայ, Զինչ է այդ. և ասէ Սիբա, Էշքդ՝ նստելոյ արքային, և հացդ և արմատդ՝ ի կերակուր մանկանցդ. այսինքն, Էշքդ են նստելոյ արքային, հացդ և արմատդ եղիցին ի կերակուր, և այլն: Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այսինքն, Երիցին փառք հօր և որդւոյ, և այլն: Սուր տեառն և Գեդէոնի. Սուր ի վերայ Քաղդէացւոցդ. այսինքն, Երիցի սուր, և այլն: Խաղաղութիւն ամենեցուն. այսինքն, Երիցի խաղաղութիւն ա-

մենեցուն: Սահակայ եպիսկոպոսի Հայոց ողջոյն. Առ Հոռիմեան եղբայր, Առ Սպարատացիս, եղբարս մեր, ողջոյն. այսինքն, Երիցի ողջոյն, եւ այլն: Երանի աղքատաց, վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց, եղիցի ինձ, Անէծք այսպիսի կծծի բանից. այսինքն, Երիցի երանի, վայ, եղուկ. Երիցին անէծք, եւ այլն:

Բոլոր այս խօսքերը ծանուցում կամ մաղթանք են:

Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ տեառն. այսինքն, Սկիզբն իմաստութեան է երկիւղ տեառն: Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր. այսինքն, Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ լինի իբրեւ զքաղաք ամուր:

Այս խօսքերն առակ են:

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի. այսինքն, Այս են գիրք ծննդեան, եւ այլն: Աւետարան ըստ Մատթէոսի. Թուղթ Պաւղոսի առ Հռոմայեցիս. այսինքն, Աւետարանս այս է գրեալ ըստ Մատթէոսի. Այս թուղթ է Պաւղոսի, գրեալ առ Հռոմայեցիս:

Այս խօսքերը տիտղոս կամ վերնագիր են:

Այսպէս կ'ըսուի նաեւ, Ընթերցուած ի ծննդոց, կամ, յԵսայեայ մարգարէէ. Պատմութիւն Հայոց. Գլուխ առաջին, երկրորդ, երրորդ, և այլն. վոխանակ ըսելու, Այս ընթերցուած կամ Ընթերցուածս է ի ծննդոց, կամ, յԵսայեայ մարգարէէ, Այս է պատմութիւն Հայոց. Գլուխս այս է առաջին, երկրորդ, եւայլն:

3. *Խնդիրներու զեղչում*

381. Հ. Դերանուն խնդիր մը ե՞րբ կը զեղչուի:

Պ. երբ միևնոյն հոլով կամ ձեւ դերա-

նուն խնդիր մը քանի մը բայերու կը վերաբերի, անոնցմէ մէկուն քով միայն դրուելով, մնացեալներուն քով կրնայ զեղչուիլ, ըստ օրինակ.

Այր մի անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա, եւ վէրս ի վերայ եդեալ թողին կիսամահ. փոխանակ, մերկացուցին զնա, եւ թողին զնա կիսամահ: Ել ի վերայ նորա եւ նստաւ. փոխանակ, եւ նստաւ ի վերայ նորա:

Բայց երբ բայերը տարբեր հոլով կամ ձեւ խնդիր կ'ուզեն, ամէն բայի իրեն վայելուչ խընդիրը արուելու է, ըստ օրինակ.

Ետես զնա եւ խօսեցաւ ընդ նմա. Ցարեցաւ ի նա եւ ոչ մեկնեցաւ ի նմանէ:

382. Հ. Բացառական խնդիր ունեցող մասնական անուանց վրայ ի՞նչ գիտես:

Պ. Բացառական խնդիր ունեցող մասնական անուն մը, իբրեւ սեռի խնդիր, շատ անգամ կը զեղչուի, ըստ օրինակ.

Գուցէ սատակիցէ ի նոցանէ տէր. այսինքն, զոմանս ի նոցանէ: Առ ընդ քեզ ի ծերոց ժողովրդեանդ. այսինքն, զոմանս ի ծերոց: Ցաղբատաց ժողովրդեանն եթող անդ յերկրին. այսինքն, զոմանս, կամ զմասն ի չաղբատաց: Արբ ի գինւոյն եւ արբեցաւ. այսինքն, Արբ սակաւ ինչ, կամ, մասն ինչ ի գինւոյն: Ի պտղոյ այգւոյն տայցեն նմա. Առ ի պտղոյ նորա եւ եկեր. այսինքն, մասն ինչ ի պտղոյ այգւոյն. պտուղս ինչ ի պտղոյ նորա, եւայլն:

Նոյնպէս առաւել, այլ բայերուն սեռի խնդիրը, երբ անծանօթ անձ է, կը զեղչուի, ըստ օրինակ.

Առաքեաց եւ գլխատեաց զՅովհաննէս ի բան-

տին. այսինքն, Առաքեաց դահիճ եւ գլխատեաց: Առաքեցին ընդ ամենայն գաւառն, եւ ածին առ նա զամենայն հիւանդս. այսինքն, Առաքեցին ոմս ընդ ամենայն գաւառն, եւայլն: Առաքեցին ի բանտն ածել զնոսա. Ցղեցին եւ կոչէին զնոսա. այսինքն, Առաքեցին ոմս, Ցղեցին ոմս, և այլն:

383. Հ. Նախդիր ունեցող յատկացեալներու վրայ ի՞նչ գիտես:

Պ. Նախդիր ունեցող յատկացեալ մը, որ նախադասութեան կամ խօսքին մէջ արդէն յիշուած է, անմիջապէս եաքը եկող ուրիշ յատկացուցչի քով կը զեղչուի, բայց անոր նախդիրը յատկացուցչին վրայ կը դրուի, ըստ օրինակ.

Լուաւ զձայն երգոցն եւ զպարուց. այսինքն, եւ զձայն պարուց: Զվարագոյր զրան խորանին եւ զդրան սրահին. այսինքն, եւ զվարագոյր զրան սրահին: Խոստովան լինէին զվեղս իւրեանց եւ զհարց իւրեանց: Փետէի զվարսս գլխոյ իմոյ եւ զմօրուաց իմոց: Զպատուղ կալոյ քո եւ զհնձանի մի հատանիցես: Բուրեսցէ հոտ նորա իբրեւ զկնդրկի: Զայն նորա իբրեւ զօձի որ ճչիցէ: Զամենայն ճարպ ղարջառոյ եւ զոչխարի եւ զայծեաց մի ուտիցէք: Բաղում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբուին: Գուցէ տեսանիցէ զերեսս ձեր արամադոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց: Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն եւ զփարիսեցւոց: Առնէաք զկամս մարմնոյ եւ զմտաց: Տգէտ են Աստուծոյ արդարութեանն եւ զիւրեանցն (այսինքն՝ զիւրեանց արդարութիւնն) խնդրեն կացուցանել: Զիրաւունս վեկին եւ զորբոյ եւ զայրւոյ: Մի լիցի ապրեալ տուն նորա, այլ ի նորայն (այսինքն՝ ի տան նորա) կացցեն օտարք: Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա

եւ ընդ ամենայն որդւոցն Իսրայելի : Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ ’ի սուրբ մարմինս փոխիցին , կամ ’ի մարդկան կամ ’ի գազանաց եւ ’ի ճճեաց եւ ’ի սողնոց . այսինքն , ի մարմին մարդկան , ի մարմին գազանաց , ի մարմին ճճեաց եւ ի մարմին սողնոց : Լուաւ Գոթողիա զձայն ժողովրդեանն , զընթանալոյն, զդոհանալոյն եւ զօրհնելոյն զաւրքայ :

384. Հ. Խօսքին մէջ արդէն չյիշուած բառ մ’ալ , երբեւ յատկացեալ , կրնա՞յ զեղչուիլ :

Պ. Երբեմն նախադասութեան մէջ կը տեսնուի զեղչեալ յատկացեալ մը որ , թէպէտ անճանաչելի բառ է , սակայն կրնշանակէ , ըստ , վերաբերեալ բաներ , զոր օրինակ .

Կոյսն հոգայ զտեառնն . այսինքն , զէրս տեառն . Կոյսը տիրոջը վերաբերեալ բաները կը հոգայ : Մի ոք զանձին եւ եթ խնդրիցէ . այսինքն , զէրս անձին իւրոյ . Մարդ իրեն վերաբերեալ բաները միայն թող չփնտռէ : Ցորժամ եղէ այր , զտղայութեանն ի բաց խափանիցի . այսինքն , զէրս տղայութեան . Երբ չափահաս եղայ , տղայութեան վերաբերեալ բաները մէկդի նետեցի : Երթայք տուք կայսերն՝ կայսեր , և զԱստուծոյն՝ Աստուծոյ . այսինքն , զէրս կայսերն՝ կայսեր , զէրս Աստուծոյ՝ Աստուծոյ . Գացէք կայսեր վերաբերեալ բաները կայսեր տուէք , Աստուծոյ վերաբերեալ բաներն ալ Աստուծոյ : Զխաւխանանաժոյ նոր եւ զբժշկութեանն տուժեսցի . այսինքն , զէրս խաւխանանաժոյ եւ բժշկութեան նորա . Անոր (վիրաւորեալ մարդուն) խաւխանանաժին (գործէ մնալուն) և բժշկութեանը վերաբերեալ բաները պիտի տուժէ :

385. Հ. Բայ ի տէր բայիէն , բայէն և խընդրէն ուրիշ ի՞նչ բառեր կրնան զեղչուիլ :

Պ. Բայ ի տէր բայիէն , բայէն և խնդրէն կրնան զեղչուիլ

1°. Ստորոգելին .

2°. Դերբայ մը .

3°. Ցուցական և ստացական ածական մը .

4°. Նախադրութիւն մը և շաղկապ մը :

385. Հ. Ստորոգելին ե՞րբ կը զեղչուի :

Պ. Ստորոգելին կը զեղչուի 1° երբ էական բայը տեղ մը ցոյնուելէ, ներկայ ըլլալ կը նշանակէ , զոր օրինակ .

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս . Չէ ասա , այլ յարեաւ . Ո՞ւր իցէ եղբայրն քո . Եւ էր նա ի տան ուրուսն փարիսեցւոյ :

Բոլոր այս նախադասութեանց մէջ լռելեայն կ’իմացուի ծօ (ներկայ) , քնակեալ, բաղկեալ կամ ուրիշ ասոնց նման բառ մը իբրեւ ստորոգելի : Ուստի վերի խօսքերը որպէս թէ են . Էր անդ ծօ այր մի որոյ ձեռն գօսացեալ էր . Հոն (ներկայ) էր մարդ մը որոյ ձեռքը չորցած էր : Ես ընդ ձեզ քնակեալ եմ զամենայն աւուրս . Ես ամէն աւուն ձեզի հետ (ընակած) եմ : Ո՞ւր իցէ քնացեալ եղբայրն քո . Եղբայրդ ո՞ւր (գացած) է : Եւ էր նա քաղկեալ ի տան ուրուսն փարիսեցւոյ . Նա փարիսեցւոյ մը տունն էր (նստած) * :

---

* Այս նախադասութեանց մէջ գտնուած մակբայները և խընդիրները , ասա , անդ , ուր , ընդ ինչ , է դան կը վերաբերին լռելեայն իմացուած ստորոգելոյն , ոչ թէ էական բային . քանզի բուն էական բայը քնդիր չի կրնար ունենալ : Ուստի սա նախադասութեան մէջ, էր նա է դան ուրուսն փարիսեցւոյ , կը լուծուի այսպէս . Նա՝ տէր բայի . էր՝ բայ . Բաղկեալ՝ ստորոգելի զեղչեալ . է դան՝ խնդիր բուն դուրն (ոչ թէ էր ին) :

2°. Երբ էական բայը էր, կայ, կը նշանակէ, նախադասութեան մէջ առարոգելի չի դառնուիր, ղըր օրինակ.

Էր առ մեզ պատանի մի. Մեր քով պատանի մը կայ: Էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր. Հոն մարդ մը կար որոյ ձեռքը չորցած էր: Էին անդ թակոյկք կճեայք վեց. Հոն կիճէ վեց թակոյկներ կային:

Ա.յս նշանակութեամբ՝ է բայն էական բայ չէ, այլ չեղոք բայ է, և առարոգելին իրեն հետ միացած ունի, ուստի և է, էր, էին, այս միօք որպէս թէ են՝ է, էր, էին ըլլալ:

386. հ. Անհերեւոյթ մը ե՞րբ կրնայ զեղչուիլ:

պ. Երբ նախընթաց բայն մը անհերեւոյթ խնդիրը յաջորդ բային ալ խնդիր է, կրնայ զեղչուիլ յաջորդ բային քով, ղըր օրինակ.

Զինչ գործէք ղըր չէ օրէն ի շաբաթու. այսինքն, Զոր չէ օրէն ըռնել: Բազում ինչ ունէի պրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և գեղով. այսինքն, Քարտիսիւ և գեղով (թղթով և մելանով) ըռնել: Զըստէպ յօրանջելն և ձգտել հմուտ բժիշկք ի մթերելոյ մաղասոց սահն. այսինքն, ի մթերելոյ մաղասոց սահն լինել: Անկանէր ի ներքս սուսեր ի ձեռին. այսինքն, ունելով սուսեր ի ձեռին:

Ա.յսպէս կ'ըսուի նաեւ.

Բերան ի բերան խօսել. Սիրտ ի բերան չըլլալ. Ընթանալ սուր ի ձեռին. Ձեռս ի գլուխ ելանել. Բերան ի վայր անկանել. այսինքն, Խօսել ունելով բերան ի բերան. Շրջել ունելով սիրտ ի բերան. Ընթա-

նալ ունելով սուր ի ձեռին. Ելանել ունելով ձեռս ի գլուխ. Անկանել ունելով բերան ի վայր*:

387. հ. Անցեալ ընդունելութիւն մը ե՞րբ լռելեայն կ'իմացուի:

պ. Երբ նախադասութեան մէջ խնդիր մը կայ որուն խնդրառուն ծանօթ չէ, հոն լռելեայն կ'իմացուի անցեալ ընդունելութիւն մը առ որ կը վերաբերի այն խնդիրը, ղըր օրինակ.

Մեռաւ ամաց քսանից. այսինքն, լեալ ամաց քսանից: Ցայն ինչ ապաստան՝ զամենայն ինչ անխըտիր գործեմք. այսինքն, Ցայն ինչ ապաստան լեալ՝ զամենայն ինչ անխտիր գործեմք. Այս բանին ապաւինելով՝ ամենայն ինչ անխտիր կը գործենք: Ինքն երթայր բով, և ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ զգլխով. այսինքն, ունելով ձորձ զգլխով: Մարտնչել ճակատ առ ճակատ. այսինքն, ունելով ճակատ առ ճակատ: Աձել գայլ ի բերան. այսինքն, ունելով գայլ ի բերան:

388. հ. Ո՞ր ածականները կրնան զեղչուիլ:

պ. 1°. Կը զեղչուին շատ անգամ այս, այդ, այն ցուցական ածականները, և գոյականին վերջը կցուած ս, դ, ն գիրերը բաւական կը համարուին: (Տես թիւ 294):

2°. Կը զեղչուին երբեմն առացական ածականները, իմ, ում, մեր, ձեր, իւր, երբ խօսքին մէջ առացիչը յայտնի է, ղըր օրինակ.

* Բերան ի բերան, Սիրտ ի բերան, Սուր ի ձեռին. Ձեռս ի գլուխ. Բերան ի վայր, Լայլն, կրնան նաեւ իրը մակբայ գործածուիլ, ինչպէս են նաեւ սա ոճերը. Հոդ ի ջուր լինել, կախել ջրի մէջ, Տապալել հետ ի վեր, կապել (աղուէսս) չոր ընդ չոր. այլոքն հանդերձ:

Քարամբք եւս կոծէը զանձն. այսինքն, զանձն ե՞ը: Ոչ համարիմ զանձն արժանի. այսինքն, զանձն ե՛ս: Թողաք զհայր և զմայր, զեղբարս և զքոյր. այսինքն, Թողաք զհայր և զմայր Ռէ, զեղբարս Ռէ, և զքոյս Ռէ: Զինչ է այդ զոր ի ձեռին ունիս. այսինքն, Զոր ի ձեռին ե՛ս ունիս: Ամբարձէք զաչս և տեսէք. այսինքն, զաչս ՅԷ:

3° *կը զեղչուի չատ անգամ նաև Ռ թուականն ածականը, զոր օրինակ.*

Արկ վարձս մշակացն աւուրն գահեկան. այսինքն, գահեկան Ռ. Մշակներուն վարձ կարեց օրը մէկ գահեկան: Զհանդերձս նորա արարին չորս մասունս. իւրաքանչիւր դինուորի մասն. այսինքն, մասն Ռ: Առանց կուսոյ ամ չեմ լեալ. այսինքն, Առանց կուսոյ ամ Ռ չեմ լեալ. Տարի մը առանց կուսոյ եղած չեմ: Աւուր դնաց աստի, և աւուր դընաց անտի. այսինքն, Աւուր Ռ՝ դնաց:

389. *Հ. Նախադրութիւն մը ե՞րբ կրնայ զեղչուիլ:*

Պ. Նախադրութիւն մը որ քանի մը խնդիր ունի, առաջին խնդրոյն քով դրուելէն ետքը, կրնայ միւսներուն քով զեղչուիլ, միայն նախադիրը, եթէ նախադրութիւնը նախդիր ունի, կը դրուի բոլոր խնդիրներուն վրայ, զոր օրինակ.

Վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան. այսինքն, և վասն սպանութեան: Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ ի թագաւորութեան. Վէրս ի վերայ վիրաց և ցաւս ի ցաւոց յաւելուին. այսինքն, Ի վերայ թագաւորութեան, ի վերայ ցաւոց: Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորդոց խաչանց արդեօք. ի հարթուցելոցն, ի խափուցե-

լոցն, ի գաղանակուռ եղելոցն. այսինքն, Ի վերայ որդոց խաչանց. ի վերայ հարթուցելոցն. ի վերայ խափուցելոցն. ի վերայ գաղանակուռ եղելոցն: Գթայր ի վերայ նորա, իբրեւ հայր յորդւոյ. այսինքն, Իբրեւ հայր ի վերայ որդւոյ: Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան. այսինքն, զհետ հաւատոյ, զհետ սիրոյ, և այլն:

2° *կը զեղչուի ի նախդիրը, մանաւանդ անեղութեան ի կամ յ նախդիրը, երբ ի նախդրին բառ մը, որ անեղութեան խնդիրն է, անեղութեն առաջ կը դրուի, զոր օրինակ.*

Ետ արքայ զաղջիկն կնութիւն սիրելոյն իւրում. Տայցեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ. Առ զնա կնութիւն. փոխանակ, ի կնութիւն: Զեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց. փոխանակ, ի կաթողիկոսութիւն:

Ի քուն լինել մարդկանն. այսինքն, Ի լինել մարդկանն ի քուն. Ի ճանապարհ անկանել նոցա և մօտ ի քաղաքն լինել. այսինքն, Ճանկանել նոցա ի ճանապարհ և ի լինել մօտ ի քաղաքն. Արգելին զմեզ ի ներքս մտանելոյ. այսինքն, ի մտանելոյ ի ներքս. Եւ այն լինի յոյժ ի տօթի աշխատելոյ կամ կարի ի ցրտոյ ւկելոյ. այսինքն, յաշխատելոյ յոյժ ի տօթի, կամ ի լկելոյ կարի ի ցրտոյ:

Նոյն բանն լսանալու է նաեւ ՚ի նախդրոյն համար, զոր օրինակ.

---

* Ջ. Նախդիրը երբեմն զեղչուած է ի դրով սկսող բառերէն առաջ, ի նախդիրն ալ կամ ե դրով սկսողներէն առաջ. ուսոմն ըսուած է. Մերկացաւ ղէ՞ս իւր, փոխանակ, ղզեստ իւր. Այլ ինչ դործ ոչ ունէին բայց միայն ղրդռիւն և ղջճնելն և ընդ

Ցառաչ քան զերկիր առնել և նախ քան զանդունդս գործել. այսինքն, Ցառաչ քան զառնել զերկիր և նախ քան զգործել զանդունդս: Ցառաչ քան զլերինս հաստատել. այսինքն, Ցառաչ քան զհաստատել զլերինս:

390. Հ. Ո՞ր շաղկապները կրնան զեղչուիլ:

Պ. Զի և եթէ կամ ըն շաղկապները կրնան զեղչուիլ, մանաւանդ երբ շաղկապով կապուելու նախադասութիւնը հարցումի է, զոր օրինակ.

Թոյլ տուր անցից ընդ երկիր քո. այսինքն, Թոյլ տուր զի անցից: Ես գիտեմ, յուշ լիցին նմա չարիքն զոր անցուցաք մեք ընդ նա. այսինքն, Գիտեմ զի յուշ լիցին. և այլն: Գիտասցեն, եթէ ոչ ձիւն և սառնամանիք պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին. այսինքն, Գիտասցեն զի եթէ, և այլն: Մի հոգայք վասն ոգւոց ձերոց զինչ ուտիցէք. այսինքն, ըն զինչ ուտիցէք. Ակնարկէ նմա հարցանել ոմ լիցէ վասն որոյ ասեն. այսինքն, հարցանել ըն ոմ լիցէ: Էր խռովութիւն ի մէջ զինուորացն, զի արդեօք Պետրոսն եղեւ. այսինքն, խռովութիւն էր ի մէջ զինուորացն ըն զի եղեւ, և այլն:

ոսկի ելանել. այսինքն, բայց միայն զարդարելն, և այլն: կատարած նոցա երթայ յոտս գժոխոց. փոխանակ, է յատակս: Հայ արդեանց երկրի քո եղիցի յետ-ոտ և ի պարար. այսինքն, է յագուրդ: Յոտ-ոյն բարբառոյն ի հայերէն դարձուցեալ. այսինքն, է յունական բարբառոյն: Յովնէ-ոյ ժամանակացն մինչեւ ցՍեմ. այսինքն, է Յովսեփայ ժամանակացն. Յոտ-ոտ ի ցորեան փոխել. այսինքն, է յարդ: Հետ աշխարհ ուրեք երթալ. այսինքն, է հեռի աշխարհ: Մարկոս յետ նորա հմուտ ճանապարհն եկն. այսինքն, է համառօտ ճանապարհն:

3. Ածելադրութիւն

391. Հ. Ածելադրութիւնն ի՞նչ է:

Պ. Ածելադրութիւն է, երբ նախադասութեան մէկ մասը, զոր օրինակ, տէր բային կամ խնդիրը, տարբեր բառերով երկու անգամ կրկնուի:

Վէմն զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան:

Այս խօսքին մէջ եղե- բային տէր բային վէմն է. նա դերանունն, իրրև տէր բայի, ածելադր է:

392. Հ. կրկնութիւն ի՞նչ տարբերութիւն ունի ածելադրութենէ:

Պ. Ածելադրութիւնը քերականական ձեւ է, իսկ կրկնութիւնը ճարտասանական ձեւ է, և դէպքն բառը երկու կամ աւելի անգամ դնելով կ'ըլլայ, զոր օրինակ.

Աստուած, Աստուած իմ, ընդէր թողեր զիս: Եմ, եմ և ես մահկանացու: Դու ես, դու ես այրն:

393. Հ. Հայերէնի մէջ ո՞ր բառերն իրրև ածելի կը գործածուին:

Պ. Հայերէնի մէջ իրրև ածելի (ածելադրութեամբ) կը գործածուին,

1° Դերանուններէն ոմանք.

2° Նախադրութիւններէն և նախդիրներէն ոմանք.

3° Մակբայներէն ոմանք:

394. Հ. Ո՞ր դերանուններն իրրև ածելի կը գործածուին:

Պ. Իրրև ածելի կը գործածուի երբեմն

1° երրորդ դէմքի եակն դերանունը նա, նախ՝ իբրև տէր բայի և իբրև խնդիր, զոր օրինակ.

Կինս զոր եռուր ընդ իս՝ ահա ես ինձ ի ծառայ անտի և կերայ. Բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա. Առաջնորդ իշխանն՝ նա նստցի ի դմա ուտել հաց. Ցիսուս Նազովրեցի՝ նա փակեսցէ զեղիս զայս. Ապրքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես՝ նոքա հմայից և դիւթուբեանց անսան. Եւ մնացեալ բանքն Յովակիմայ և ամենայն ինչ զոր արար՝ ոչ աւանիկ գրեալ են նոտս ի գիրս։

ՉՅիսուս զոր դուք սպանէք՝ նա յարոյց Աստուած. Զբաժակն զոր ես ինձ Հայր՝ ոչ ըմպիցեմ նա. Լուսնի չիք էր լոյս առանձինն. Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք էր. Եւ Սաղպաթայ որդւոյ Ոփեբայ ոչ գոյին նորա գտերք. Այո իսկ, յարքայութենէն զոր ասէի՝ անդէ գամ. Եւ ցթագաւորն Յուդայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր՝ այսպէս ասասջիք նա. Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ՝ հանցես ընդ նա ազբ. Եւ էր այր մի յորում այս պիղծ դայր էնմա. Ցորմէ և հեթանոսք մեծաւ զգուշութեամբ խորշեալ պատկառէին էնմանէ. Զօրք որոց ոչ էր նոցա թիւ. Աստուածք նոցա յորս յուսացեալ էիք էնոսա. Ի տեղւոջն յորում դուք կամիք մտանել բնակել անդ. Տունն յոր ես մտից անդր։

Երկրորդ՝ եակն դերանունը նա իբրեւ աւելի կը դործածուի յարաբերեալի մը հետ. և այս դէպքին մէջ յարաբերեալը կը դրուի ուղղական կամ յարաբերականին հոլովը, և իբր աւելի դերուած էական դերանունը կը դրուի յարաբերեալին հոլովը, զոր օրինակ.

Բոլոր յորում իցէ արած՝ հանդերձ նոտս քակեալ լիցի. փոխանակ պարզապէս ըսելու, փակեալ լիցի

հանդերձ բոլորի, յորում իցէ արած։ Ածինայն այր որոյ էր դատ դալ առ արքայ ի դատաստան՝ բարբառէր առ նա Աբիսողոմ և ասէր. փոխանակ ըսելու, Առ ածինայն այր որոյ էր դատ դալ առ արքայ ի դատաստան՝ բարբառէր Աբիսողոմ և ասէր։ Ածինայն ետ կամ խոստ յոր հասանէ պողիպոտն ի մէջ ծովուն՝ ընդուն զոյն առնու. այսինքն, Պողիպոտն առնու զզոյն ածինայն ետի կամ խոստին յոր հասանէ ի մէջ ծովուն։ Զոր որովք հեղձուցանէր փարաւոն զմանկտին՝ նոքիմբ հեղձաւ. այսինքն, Փարաւոն հեղձաւ զոր որովք հեղձուցանէր զմանկտին։ Ծոտայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունան տան լսել նոտա. այսինքն, Ընդ մկանունան տալ լսել ծոտայի որ ընդ ունկն ոչ լսէ. Ականջովը չլսող ծառային՝ կռնակովը լսել կու տան (այսինքն, Ծօսք չհասկցող ծառան ծեծ կ'ուտէ)։ Մալխինդ որ առանձին ի յայտնի ինչ ժամանակի սպանող է՝ նովքիմբ զմաղձս հնացեալս հանել զարիւնն բժիշկք հատանել. այսինքն, Բժիշկք զմաղձս հնացեալս հնարին (կը ջանան) հատանել մալխինդիս՝ որ առանձինն սպանող է։ Ընդոծինի և ոչծալոծինի որ էին յաշդաց օտարաց՝ թլփատեաց ընտա. այսինքն, Թլփատեաց ընդոծինի և ոչծալոծինի որ էին յաշդաց օտարաց։ Ածինայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի էնմանէ. այսինքն, Ածինայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի. Զկնի զոր անարգեցին չինողք՝ նա եղեւ գլուխ անկեան. այսինքն, Կնի զոր անարգեցին չինողք՝ եղեւ գլուխ անկեան։ Զայդ ածինայն զոր տեսանէք՝ եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի. այսինքն, Եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր ածինայնի զոր տեսանէք՝ քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։ Զածինայն զոր ես հայր՝ ոչ կորուսից էնմանէ. այսինքն, Ածի-

նայնէ զոր ես ցիս Հայր՝ ոչ կորուսից : Զքոքածն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոյն վկայեն . այսինքն , Գործոն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ վկայեն : Ի մահիճսդ յոր եղեր՝ ոչ իջցես այդր . այսինքն , Ի մահճացդ յոր եղեր՝ ոչ իջցես :

Երրորդ՝ էական դերանունն իբրև աւելի կը գործածուի երբեմն յարաբերականի մը հետ . և անաւտն յարաբերականն ուղղական կը դրուի , և իբր աւելի դրուած դերանունը յարաբերականին հոլովը կը դրուի , զոր օրինակ .

Տէր ամենակալ , որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան ։ . այսինքն , Տէր ամենակալ , յորոյ երեսաց ահի զօրութեան ամենայն ինչ սարսի և դողայ : Հրամանաւն Աստուծոյ եղեալ ի լեառնն մեռանէր մեծ մարդարէն Մովսէս , որ մինչեւ ցայսօր զգերեզման նորա ոչ ոք գիտել կարաց . այսինքն , Զորոյ զգերեզմանն ոչ ոք գիտել կարաց : Ո՞չ այդ այն Մուշեղ է զէ (որ) զարքայն Պարսկ հրամանաւ դուրս սպանին . այսինքն , Ո՞չ այդ այն Մուշեղ է որոյ հրամանաւ , և այլն :

2° Ցուցական դերանունն այն իբրև աւելի կը գործածուի նախ՝ եզակի և յոքնակի անուններու և աներեւոյթի հետ , զոր օրինակ .

Ամուրքդ զոր չինէք՝ այդ ձեզ իսկ լիցին . Իսկ հանդերձիկն որ զնոքօք արկեալ (է)՝ այն ցեցակեր , մեցոտեալ , վխրեալ մաշեալ կորուսեալ ապականի : Արծնելն և նկարելն՝ այն ի զարդարիչ անդր հայի . Նորոգել ի փառենէ մեղաց՝ այն Քրիստոսի ուղղութիւնքն էին , և անդրէն ի նոյն չդառնալ՝ այն նոցա փութոյն էր գործ :

Երկրորդ՝ այն , իբր աւելի , կը դրուի տէր բայի աներեւոյթի մը ստորոգելւոյն հետ , եթէ ստորոգելին բայէն առաջ է , զոր օրինակ .

Նա և այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է չնորհն . փոխանակ պարզապէս ըսելու , Նաեւ իմաստութիւն է ճանաչելն թէ յումմէ է չնորհն . Շնորհքը որմէ ըլլալը ճանչնալն ալ իմաստութիւն է : Արարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել , և ոչ միայն արդս և զարդս և կերպարանս . Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է՝ զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց զրոց յանդիմանել . Երեցունց աւետարանչաց այն իմն փոյթ եղեւ՝ վասն տեսչութեանն պարապիլ . Այն իսկ գործ է աղի՝ կակծեցուցանել և մորմոքեցուցանել զլոյծս . Աղին ներգործութիւնն է լոյծ բաները կակծեցնել :

Երրորդ՝ այն չատ անգամ իբրև աւելի կը գործածուի ամբողջ նախադասութեան մը հետ որ աներեւոյթ տէր բայիի զօրութիւն ունի , զոր օրինակ .

Եթէ որչափ միւս արգելու Աստուած ի մարդկանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է . Աստուծոյ մարդոցմէ որչափ միւս արգելելը քիչ մարդ գիտէ : Զի նեղող և արգահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է . Եթէ չիսկսիցին ինչ այնպիսի բանս՝ այն նոցա աղնուականութեանն է համար . Եւ զի խընդիրք ամենայն գործոց լինելոց են՝ ըստ վերագոյն յայտ արար :

395. *Հ . Ո՞ր նախադրութիւնն իբրև աւելի կը գործածուի :*

Պ . Վասն նախադրութիւնը երբեմն է , Ըն շաղկապներու հետ իբրև աւելի կը գործածուի , զոր օրինակ .

Շրջեցուցեալ զնոսա անդ զամս քառասուն , վասն զի մոռացուսցէ նոցա զսովորութիւն դիւցապաշտ քարապաշտութեանցն . վասն զի մի ընդ խոտանս գը-

տանիցիմք. Վասն զի արժանի արասցէ զսա մտանել ընդ նեղ դուռն՝ զՏէր աղաչեսցուք. Վասն թէ զիարդ է որդի Դաւթի Քրիստոս. Վասն թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն *:

396. Հ. Ո՞ր նախադիրները իբրև աւելորդ կը կրկնուին:

Պ. Իբրև աւելորդ կը կրկնուին. 1° Ցատկացեալին նախադիրը յատկացուցչին վրայ, թէ և յատկացուցիչն յետադաս է, զոր օրինակ.

Զհանդերձս սրբութեան զՀարոնի քահանայի. Հարկանէր զԴարեհ սրբայ զՊարսից և զՊարթեւաց. Ածել ի վերայ մեր զարիւն զառնն զայնորիկ. Զառաջին քինու վրէժն զամենեցունց ընդ այն հանէին. Առցես զառաջին պտուղս ձերկրին քոյ. Գրեաց զբանս ուխտի զտասն պատգամացն. Պահեցեն զամենայն ինչ զսեղանոյն. Մի մերձենայցէք ինչ ի դոցա. Ոչ ինչ ի մեր հայեցեալ:

Այս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ եթէ յատկացուցիչը յատկացեալէն զատուած է ուրիշ միջանկեալ բառերով, զոր օրինակ.

Զմանկունսն զտեառնոյն կախեցին զմարցն. Տացեն ի բաց զգեօղս և զտեղիս զոր ունին շէրէից: Մատուցին զթիւն արքայի Վկորուսեղոյն. Զլեզուն հրամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել. Զգլուխն հատանել Վնիկանովրայ. Զչափ առցուք զՀեղութեան նորա. Իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին. Զդէմ ունել զայնորիկ որ գայցէ ի վերայ նորա. Ոչ

* Կրնայ ըսուիլ թէ այս տեսակ խօսքերու մէջ -ը կամ -ուն դերանունը լրելեայն կ'իմացուի, որպէս թէ ըլլար. վասն -ուն զի մտացուսցէ. վասն -ուն զի մի ընդ խոտանս գտանիցիմք. և այլն:

կարէին զդէմ ունել զիմաստութեան և զՀոգւոյն որով խօսէր. Հարկ է զմահ ի մէջ բերել վկտակագրին:

2° Բացայայտելոյն նախադիրը բացայայտչին վրայ:

ԶԱդդա՝ զդուստր Եղոնայ. զԱբիմելէք որդի Աբիտովրայ՝ զքահանայ. Ընտրեցին զնիկողայոս՝ զեկեղն Անտիոքացի. Հանցեն զճարպն՝ զթաղանթ քաղցքին. Շրջել զեղբարք իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի. Էի ի Շաւէ՝ ի մայր քաղաքացն Աբիրայ. Ի Մովսիսէ՝ յառնէն Աստուծոյ. Ասէ Ծուդա ցԻսրայէլ՝ ցհայր իւր. Յեղիազար՝ յորդւոյն Ա.Հարոնի զքահանայ. Առ Շմաւոն քահանայապետ՝ առ բարեկամ Թագաւորաց. Հայեաց ընդ ծառայ իմ ընդ Ցոբ. Ցուսացեալ իցես ի ցուպն եղեգնեայ ջախջախեալ՝ յԵգիպտոս:

(Տես նաեւ թիւ 243):

3° Գոյականին նախադիրն ածականին վրայ, թէ յետադաս ըլլայ ածականը և թէ նախադաս. մանաւանդ եթէ ածականները մէկէ աւելի են, զոր օրինակ.

Ա. *Յետադաս ածականի վրայ*

Եւ առցես զկոյն ձերկրորդ. Հեղին զարիւն զարդար. Զտասանորդսն ցամենայն բերին. Կոչեաց զՍիմոն գոմն. Դարձցիս յայր յայլ. Դումարէին յերկրին ի հեռաւոր. Ասէ ցարան ցյարուցեալս ի վերայ նոքա. Ընդ քաղաքն ընդ ամենայն այսր անդր ընթանային. Զզօրն զայն ղևեծ. Զժողովուրդդ զայդ դէպ. Զառնս զայս զբարձր. Թաղեցին զնա յայրի անդ ի կրկնում. Ցերկրին յայնմիկ ի պղծում. Գտի զոչխարս իմ կորուսեալ. Զժողովուրդս քո զայս գմեծ. Զորդի իւր ձերէց. Զորդին իւր զանդրանիկ. Ցաւուր միում յերեւելոյ. Ի տնկոյ իմեքէ ի մահաբերէ. Ե-

թէ հանիցէք զամենայն ակն ձեր զաչոյ. կորեցէք զմանուկն ըստնդեաց վկենդանի յերկուս. Բուռն ե-
հար զՀանդերձէն իւրմէ դնորոյ. Զազգ մի գանդէտ և զարդար կորուսանիցես. Զամենայն ոչխար զխայտա-
խարիւ և զգորշ. Զիմրդ առնիցեմ զբանդ զայդ դէպ և գմեծ. Զեօթն հասկն զընտիրս և զատոքս. Զժողո-
վուրդն մեծ զբազում և զյաղթանդամ. Զամենայն փայտ զաղնիւ հարին. Զսուրն սուրբ և գմեծ և զհզօր. Զկուռան զարծաթապատս և զոսկիապատս. Տայ մեզ գանձրեւ վկանուխ և գանադան. Զգործ գմի և զնոյն վճարեցաք. Զազգսն մեծամեծս և զբազումս. Զայր զուարթ և գառատ. Զեօթանասուն արամբքն զծերուկ. Ցերկիրն մեծ և յանչափ. Ցուսմունս պէսպէս և յօ-
տարաճայնս. Ցազգ մեծ և 'ի հզօր և 'ի բազում. Ցա-
մին հարիւրորդի յիսներորդի յառաջնում. Ցերկրիս յայսմիկ 'ի լայն և յընդարձակ և 'ի պարարտ. Շրջե-
ցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահա-
գին. Ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս:

Նախադրի այս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ, երբ գոյականին ու ածականներուն մէջ տեղ ուրիշ բառ մը, ղոր օրինակ՝ յատկացուցիչ մը կը մտնէ, ինչպէս.

Գործեսցէ զվանդակս նորա զպղնձիս. Սրածէր ըզխաչինս Լաբանու զմնացեալս. Արար գիւղն օծութեան զսուրբ. Ողջացոյց զսեղան տեառն վկործանեալ. Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր. Ոչ լռես 'ի թիւրելոյ զճանապարհս տեառն զուղիղս. Բերել զդիրս կախարդանացն զծանրագինս և այրել. Զդրունսն տաճին զարտաքինսն պարսպացն. Հայր իմ տայ ձեզ զՀացն յերկնից զճշմարիտ. Զօրէնսն կատարիցէք զարքունականս. Ի ճանապարհս հօր իւրոյ չառաջինս. Ի ծառայից տեառն իմոյ 'ի յեռնոց. Ի սաղմոսին գրեալ է

յերկրորդում. Զմարգարէսն ամօթոյ չէորեքհարիւր և չիսուն. Զեօթն երինջս գեղեցիկս տեսլեամբ և ընտիրս:

Բ. Նախադաս ածականի վրայ

Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին գմեղսդ. Առ նա զաճիւնախառն վկրակն. Զմերոցի տեղիս՝ դժնեայ վայրսն հրամայէին նոցա. Զմեծապատիւ զբեղաչուք ոսկիակուռ զաթոռն. Զերկոսին զորդիս իմ. Զեօթանեսին զորդիսն իմ. Ցերկոսեան 'ի սրահս տանն. Եւ տես զայնչափ զբսան և զինն ազգաց զոգիս տանջեալս 'ի գեհենի. Ի տերունական իսկ 'ի փորձանացն իմանալի է. Զյանդուգն զբուռն արքայն սաստիկ զփարաւոն. Ոչ հալէին չառնակերպ դղիւրահալ չազգ անուշակ կերակրոյն. Զնոյն զհոգեւոր վկերակուրն կերան. Ի նմանավիշտ յերկիր անկայ. Ցայնչափ 'ի բազում 'ի նախրաց փիլիստիայիցն աստուածոց. Ցիւրոց 'ի բարւոք արարածոցն. Ի քարեղէն չարծաթագործ պղնձագործ 'ի պատկերաց այտ. Ցանբաւ և յանկոխ և յանջուր և չանպատուղ երկրին. Ի պղծոց և 'ի նորաճայն բանից. Ի հարիւրորդի յիսներորդի չառաջնում ամի:

Ա յսպէս կ'ըսուի.

Զնոյն ըմի. Զնոյն և ըմի. Զմի և զնոյն. Ի մի և 'ի նոյն միտս. Ընդ նոյն եւեթ ընդ մի հետ գնալ:

397. Հ. Ածական ածականին վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Պ. Երբ ածական ածականը նախադաս է, նախադիրը գոյականին վրայ ալ կրնայ կրկնուիլ, ղոր օրինակ.

Զամենայն չերկիրս ղայս. Զամենայն զկահ նորա. Զամենայն զդունդն. Զամենայն զինչս իւր. Զամենայն զպատգամս տեառն. Ցամենայն 'ի կեանս

քո. Ցամենայն ՚ի թագաւորութեան նորա. Ցամենայն իսկ ՚ի թուղթան, և այլն։

398. Հ. Ո՞ր մակբայներն իբրև աւելի կը դործածուին։

Պ. 1° Իբրև պղէս, ըստ բառերին առջի՝ պղէս, պնդէս, նոյնպէս՝ աւելի կը դրուին ազդուութեան համար, զոր օրինակ.

Ոչխար հուր ՚ի այրէ զանտառս, պղէս բոց ՚ի կիզու զլերինս՝ պղէս հալածեացես զնոսա. Իբրև զկաւդ ՚ի ձեռս բրտիդ՝ պղէս էք ՚ի ձեռս իմ. Իբրև զծիծառն՝ պնդէս ճչեցի, և իբրև զաղաւնի՝ պնդէս ճիչեցի. Ոչխէս զեղջայր և զընկեր՝ պնդէս հաճոյ լինէի. պղէս սգաւոր և տրտում՝ պնդէս խոնարհ առնէի. Օրն տեառն իբրև զգող գիշերի՝ պնդէս հասանէ. Պնդէս աներկիւղս առնէ զմարդիկ՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. Ըստ բազմութեան իւրեանց՝ նոյնպէս և մեզան ինձ. Ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպէս և զանուն իրացն դնել. Ըստ տկարութեան ընդունելեացն՝ նոյնպէս և զօրէնսն ՚ի ժամանակին կարգեաց։

Այս վերջիններըը հայերէն աշխարհաբար կը թարգմանուին այսպէս.

Իրենց բազմութեանը համեմատ ինձի դէմ մեղանչեցին. Դէպքերուն համեմատ կամ նայելով՝ իրերուն անուն դնել. Ընդունողներուն տկարութեանը նայելով օրէնքները ժամանակին դրաւ։

2° Եա՛ ոչ կամ ոչ մակբայը նոյնպէս ազդուութեան համար աւելի կը դրուի, զոր օրինակ.

Գ. *Բախտոսեան*

399. Հ. Բաց ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն ուրիշ ի՞նչ քերականական ձեւ կայ։

Պ. Բաց ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն, այսինքն, բաց յարատեւութենէ, զեղչումէ և աւելադրութենէ, բանաւորութիւն կոչուած մը բոլոր ձեւ մ՚ալ կայ, ուր երկու բառ իրարու հետ կը համաձայնին ոչ ըստ քերականութեան՝ այլ ըստ խնամոտին, Այսպէս.

1° Բայը յոքնակի կը դրուի լսելեայն խմացուած բառի մը նայելով, զոր օրինակ.

Զօրաժողով լինին արքայն Ասորւոց և Իսրայելացւոց. փոխանակ՝ Արքայն Ասորւոց և արքայն Իսրայելացւոց. Ի բերանոյ նորա ելանեն հրաման մահու և կենաց. այսինքն՝ Հրաման մահու և հրաման կենաց. Ջուր աղի և անոյշ զամանս ջրուորացն ընդ. այսինքն՝ Ջուր աղի և ջուր անոյշ. Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, և երկնաւորն՝ այլևս ժամանակի պահեալ են. այսինքն՝ Եւ երկնաւոր նշանն պահեալ են, և այլն։

2° Իական բայը յոքնակի կը դրուի՝ ստորոգեալին յոքնակի ըլլալուն համար։

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, և ցաւ են ծընանելեաց նորա. Ալէտ՝ իմաստութիւն մարդոյ են. Մտաց բոլորեան են աղանդն, և ոչ ճշմարտութիւն. Զեն օրեն աշխարհի մերում տալ նախ զկրտսերն քան զերեց. Փառ են առն խոտորել ՚ի հայհոյութեանց. Ոչ վայրապար ինչ էր էն զփարէս յիշել։

3° Հաւաքական անուններու բայը կամ ածականը կամ դերանունը յոքնակի կը դրուի։

Ամենայն Իսրայել զկնի երիոյէն նոցա վառեալ և հալածեալ. Դարձաւ ամենայն ժողովուրդն ՚ի բանակն առ Յեսու ՚ի Մակեդայ ոլջանդամ. Ամենայն պատերն Իսրայելի հակառակեալ և խորտակեալ են. Արարին զՔանաանացին հնազանդս, բայց սատակելով ոչ սատակեցին

ընոա. Եւ եղեւ Մովսէս Դաւթի ի ձոռայս պատարագաբերս. Տեսեալ ղՀառնդն Հայոց լւեալ և պարտաեալ. եթէ եղիցի ժողովուրդն իբրեւ զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնացեն ի նոցանէ. Նման են տանկոյս որ նոքիցն ի հրապարակս. Զուեաց ամենայն ժողովուրդն ըստ բանակս իւրեանց. Կողոպտեաց ամենայն ժողովուրդն զգինդս ոսկիս յականջաց կանանց իւրեանց. Զի նա վրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց. Իբրեւ ընդեաւ որոց ոչ իցէ հովիւ:

Ա՛ղնայն բառին եղակին ալ, իբրեւ հաւաքական, նոյն համաձայնութիւնը կ՚ունենայ:

Ա՛ղնայնէ որոց իցեն թեւք և թեւի՝ ըզնա ուտիցեք: Ցա՛ղնայնէ՝ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն:

4° Եղակի թուական անուններուն վերաբերութիւն ունեցող ածական կամ բայ յոքնակի կը դրուի:

Տա՛ն այր բորոտ որ ի կայնի ի հեռաստանէ. Եւ ի-պասան այր տգէտ և տառապեալ որ ի նա յարեալ էին:

ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Հ. Կէտադրութիւն ի՞նչ է:

Պ. Կէտադրութիւն կը կոչուի խօսքին մէջ բառեր և խմբատներ կէտ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը:

2. Հ. Կէտադրութեան գլխաւոր նշանները որո՞նք են:

Պ. Կէտադրութեան գլխաւոր նշանները հետեւեալներն են, բութ (՝), ստորակէտ (,), ջլակէտ (.), վերջակէտ (:):

3. Հ. Ա՛յս նշանները ե՞րբ կը գործածուին:

Պ. Ա՛յս նշանները կը գործածուին 1° Նախադասութեան մը նոյնատեսակ մասերը և 2° Պարբերութեան մը մասերը իրարմէ զատելու համար:

4. Հ. Նախադասութիւն ի՞նչ է:

Պ. Նախադասութիւն այն է որ դիմաւոր բայ մը ունի. և նախադրութեան մասերն են պէր բայն, առարկեալն, բայը, լրացուցիչները, հակիրճ ու ածականները: Երբ նախադասութեան մը մէջ այս մասերը մէկէ աւելի են, այսինքն՝ երբ նախադասութիւն մը դէպի բային վերաբերեալ քանի մը տէր բայի, դէպի տէր բայիին վերաբերեալ քանի մը բայ կամ առարկելի, դէպի խնդրառուին վերաբերեալ քանի մը խնդիր կամ մակբայ, դէպի գոյականին վերաբերեալ քանի մը ածական ունի, այն մասերը նախադասութեան մասերը կը կոչուին:

(Տես և թիւ 344—351):

5. Հ. Պարբերութիւն ի՞նչ է.

Պ. Պարբերութիւն կ՚ըսուի երկայն խօսք մը որ կ՚բաղկանայ երկու գլխաւոր նախադասութիւններէ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին: Եւ պարբերութեան մը անդամները՝ կա՛մ իրարմէ կախում ունեցող են կա՛մ իրարու հակադրեալ, և կամ մին միւսոյն իրը ի պատճառէ կամ ի փաստէ հետեւութեան* է, զոր օրինակ:

Եթէ մեզի մեր տկարութեանը վրայ գաղափար

* Պատճառէ յետոյ հետեւութեան վրայ. տես Տրամաբանութիւն Գաբրագաշեան էջ 250:

տուղ բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն, բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

Մեր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է. ապա անոր զթութեանը կրնանք պաղատիլ։

Այս երեք խօսքն ալ մէյմէկ պարբերութիւն են. առաջինին անդամները կախում կը ցուցընեն. երկրորդին անդամներն իրարու հակադրեալ են. իսկ երրորդին անդամներուն մէկը (հետեւորդ անդամը) միւսին (նախորդին) իբր՝ ի վաստակ հետեւանքն է։

6. Հ. Ո՞ր խօսքը պարբերութիւն չէ։

Պ. Պարբերութիւն չէ երկայն խօսք մը ուր նախադասութիւններն իրարմէ կախում չունին, ոչ իրարու հակադրեալ են, ոչ ալ մէկը միւսին հետեւութիւնն է. այլ միայն իրարու քով շարուելով ընդհանուր իմաստ մը կը բացատրեն, զոր օրինակ սա հետեւեալը.

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ եբաղ է, վտանգը մինակ երեւոյթ մի է, զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են։

7. Հ. Պարբերութիւնը ե՞րբ պարզ կը կոչուի։

Պ. Պարբերութիւնը պարզ է, երբ անդամներուն երկուքն ալ մէյմէկ նախադասութիւն են. ինչպէս վերի երեք պարբերութիւնները։

8. Հ. Պարբերութիւնը ե՞րբ բաղադրեալ է։

Պ. Պարբերութիւնը բաղադրեալ է, երբ անդամներուն մէկը կամ երկուքն ալ երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան, զոր օրինակ.

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ եւ ճշմարտութեան մեծ զօրութեանը վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կըլլար՝ այլ և առանձնական չարհերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը՝ ունեցած կ'ըլլային։

Նախադասութեան մասերուն հաւասար կէտադրութեան կանոն

9. Հ. Նախադասութեան ո՞ր մասերը ստորակէտով կը զատուին։

Պ. Ստորակէտով կը զատուին

1° Նախադասութեան նոյնաբեռակ մասերը, եթէ և, կամ, բայց, այլ շաղկապներուն մէկովը կապուած չեն, զոր օրինակ.

Աշխարհիս վրայ ընդ, եռանդ, ջերմ, ցօրտ, պինդ, լոյծ, փխրելի բաներ խառն կը գտնուին։ Տիւրացիք արեւելագիրք, հմբէրդղ, ալեպացւոց, հաւթաբ, ուխտաւորք և ընայող են։ Նեղութիւնը, բռնութիւնը, սիրտնեղութիւնը, դառնութիւնը, պարկեշտներն այն երկրին մէջ իրենց անազորոյն ձայնը երբէք լսել չեն տար։ Ամբաւ երկրագունդն իր մակերեւութին վրայ մեզի կ'ընծայեցնէ լեռները, յորեր, գետերը, ծովը, ճահիճները, անձաւները, վիհեր, հրաբուխները։ Նա գեղջկաց տուներուն այցելութիւն կ'ընէր. անոնց վիճակին, ընտանեցոյզ, ջանկերտուն, ընտոյն, հողերուն, կարգաւորութիւնը, գոմերին, պարտէզն և ուրիշ շատ բաներու կը տեղեկանար։ Այս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ

հոգին կ'ըմբռնէ, կը խորհի, կը տրակոծի, կը հաստատ, կ'ինտոսիրէ, կը ճանչայ, կը կոչ, կը խորհրդածէ: Եթէ կ'ուզուի որ տղայք միշտ համբակ չմնան՝ այլ վարժ ըլլան, հայրերն ու վարժապետները զանոնք խիստ կանուխ չընդհմանան, ուղղած, կշտամբած, ուղուած, սուտ, հրահանգած ու համոզած ըլլալու են: Դերագոյն ու կատարեալ կառավարութիւնը՝ կառավարիչները կառավարելու մէջ կը կայանայ. պէտք է զանոնք դիտել, փորձել, ուսուցանել, ուղղել, տալ-վերցնել, կշռել, պահել ու դէպ ի բան տանել:

Ոմանք այս դէպքերուն մէջ բռնի կը գործածեն.

2° Նախադասութեան մէջ իրը բացայայտիչ եղող բառերը երկու սորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Աչխարհիս ամենէն մեծ պետութեան, Հռոմէացոց պետութեան, վրայ Աստուծոյ դատաստանները մեզի թաքուն չեն:

3° Նախադրութեամբ խնդիրները, երբ երկայնակ են և նախադասութեան իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող երկու մասերուն, զոր օրինակ՝ տէր բայէին ու բայէն, կամ բայէն ու խնդրոյն, մէջտեղ դրուած են, նոյնպէս երկու սորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Անոր նաւը, երկաթ սրեն հովերուն խաղալէն ըլլալն եպէը, ալեաց մէջ թաղուեցաւ: Տիւրացիք, էրենց քահանային պատճառաւ, զայրացուցած էին Սեսոստրիս մեծ թագաւորը որ Եգիպտոս կը թագաւորէր ու բազմաթիւ թագաւորութեանց տիրած էր . . . : Սե-

սոստրիս, անոնց ամբարտաւանութիւնը կրծանելու համար, միաքը դրած էր բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթել:

4° Բացատրաբանութեամբ ըսուած անուն մը, այսինքն կոչական մը, կամ ձայնարկութիւն մը, նախադասութեան յայորդ մասէն սորակէտով մը կը զատուի. և եթէ նախադասութեան մէջտեղն է, երկու սորակէտի մէջ կ'առնուի.

Ով Թագաւոր, ահա թշնամիներուդ դէմ քու վրէժխնդիրներդ: Արժան է, որդեակ, որ քեզի յայտնեմ:

5° Կ'ըսեմ, ըսաւ, պատասխանեց, կրկնեց, և սոնց նման ուրիշի մը խօսքը յառաջ բերող բայերը երկու սորակէտի մէջ կ'առնուին, եթէ յառաջ բերուած խօսքին մէջտեղն են. իսկ եթէ խօսքին սկիզբն են, անկէ միջակէտով կը զատուին, և անսահման յառաջ բերուած խօսքը գլխագրով կը սկսի.

Ով է հայրդ զոր կը փնտռես, ըսաւ Դիոգենին. Ողիսեւս կը կոչուի, ըսաւ Տելեմաք: Կամ, Դիոգենին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռես. Տելեմաք պատասխան տուաւ. Հայրս Ողիսեւս կը կոչուի:

6° Պարբերութիւն չեզող խօսքերու մէջ իրարանչիւր նախադասութիւն, մանաւանդ եթէ երկայն է, նախընթացէն սորակէտով մը կը զատուի.

Աստղաբաշխութիւնը լուսնի անուն է, կեանքը սակ է բաղ է, փառքը մինակ երեւոյթ մի է, զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են:

Երբ սասանկ բազմաթիւ նախադասութիւններ նախընթաց նախադասութեան բացատրութիւն կամ իբր թուական մասանց են, այն նախընթաց նախադասութիւնը միւսներէն միջակէտով մը կը բաժնուի, զոր օրինակ.

Երբ Քաղաւորաց սիրտը մարդոց ձեռքին մէջն է, բաբէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միտքանի. չողոքորթութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատուածները զանոնք կը դրաւեն, դէշ օրինակները զանոնք կը քարչեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կը ցրուէ:

10. Հ. Բութ՝ ե՞րբ կը գործածուի:

Պ. Բութ կը գործածուի խօսքին մէջ

1° Հոն ուր բառ մը ձեղչուած է, զոր օրինակ.

Փրանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով, պտղով, արմատներով և որսով միայն կ'ապրէին: Արեւը, լուսինը, լուսաւորները և գետերն անոնց աստուածներն էին. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. Դրուիդ կոչուած քուրմերն՝ անոնց աստեղաբաշխները, բժիշկները և դատաւորները. փայտակերտ, կաւագործ հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ անոնց առաւտուրն էր փոխանակութիւն:

2° Բութով կը զատուի նախադասութեան մը այն մասը որ նախադասութեան սկիզբը դրուած է, և դիմաւոր բայ չունենալով, ամբողջ նախադասութիւն չէ, այլ խնդիր է այն նախադասութեան. զոր օրինակ.

Շաբաթակ վարձման և անօթութեան վրայ ապրելէ յետոյ ըսուած՝ որոշեցի Սիկիլիա երթալ: Գոչեցին այնչափ անձինք դժուարութիւնները պեռնելով՝ հասկցանք

որ մեր բոլոր չանքերը վայրապար պիտի ըլլային: Պապային ըսը հօր անունը լսածին պէս՝ սկսաւ չերմ արտասուք թափել: Հէնցմէ առանկ պեսպեսի մը հանդիսաւոր ըլլալէ ետքը՝ սկսանք կրեակ կղզւոյն լեռները նշմարել:

3° Երբ առը բային կամ սաորոգելին իր յարակից մասերովը երկայնակեակ է, այն մասը յաջորդ խօսքին բութով մը կը զատուի՝ որ չնչառութեան հանգիստ տրուի, զոր օրինակ.

Իրենց նախնի սովորութիւնները պահելը հոյակապ ազնիւ բնաւորութիւն մի հետքն ալ՝ այն աւանդութեանց համար յատուկ տօներ սահմանելն էր. սովորութեանց բուսական նշանակութիւնը՝ ժողովրդեան մտքին մէջ կը տպաւորուէր:

4° Յարաբերական դերանուամբ սկսեալ միջանկեալ նախադասութեանց վերջը բութ կը դրուի, և այնպէս նախադասութեան ճիւղորդը կը շարունակուի, զոր օրինակ.

Աստուծոյ մեծագործութեանը գահն է բնութիւնը. այն մարդը՝ որ անոր տեսութեան ետևը կ'ամբառնայ:

Ոմանք բութը յարաբերեալին վրայ կը դնեն, ու յարաբերականով կազմուած նախադասութիւնը խօսքին յաջորդ մասէն առաջակէտով կը զատեն, այսպէս.

Շնչին՝ որ նմանօրինակ նուաստութեամբ ըսուած և կապկութիւն է, տակաւին խօսողութեան գրեթէ հաւասար ձիրք մը բնութենէն ընդունած է: Կարմիր ծովը՝ որ վաղուընէ վերէն ներուելոյ և ծփպոսի տանէն կը բացուի, երեքհարիւր յիսուն մղոն երկայնութիւն և քառասուն մղոն լայնութիւն ունի:

Պարբերութեան անդամներուն հաւասար կէտադրութեան կանոն

11. Հ. Պարզ պարբերութեան մը անդամները ի՞նչ կէտով կը բաժնուին։

Պ. 1° Պարզ պարբերութեան մը անդամները, եթէ անոնց մէկը միւսէն կախում կը ցուցնէ, իրարմէ ստորակէտով կը բաժնուին.

Մինչ Մեծար ու Հաղայել կը խօսէին, ոսկեփայլ և կապուտակագոյն թելերովծածկուած թլփինները նշմարեցինք։ Պարտաւորութիւն մը որչափ աւելի մեծ և տաժանելի է, նոյնչափ անոր հիմը ղգալի և գօրաւոր ըլլալու է։ Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք, դէթ մեր օրէնքն հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու մեզի օգնեցէք։ Անձնասիրութեան աչխարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք, տակաւին չատ անծանօթ երկիրներ կը մնան։

2° Եթէ անդամները իրարու հակադրեալ են, կամ եթէ անոնց մէկը միւսին լրը՝ ի պատճառէ կամ՝ ի փաստէ հետեւութիւն է, իրարմէ միջակէտով կը զատուին, ղոր օրինակ.

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց և այնպէս երջանիկ հարուստները չատ քիչ կը գտնուին։ — Աստուած անսահման կատարեալ և անհուն բարի է. հետեւաբար ոչ կրնայ խաբուիլ ոչ ալ մեզ կը խաբէ։ — Մեր թագաւորը բարեսիրտ, և մարդասէր է. ապա անոր գըթութեանը կրնանք պաղատիլ։

12. Հ. Բաղադրեալ պարբերութեան անդամները ի՞նչ կէտով կը բաժնուին։

Պ. Բաղադրեալ, այսինքն՝ երկրորդական անդամներէ բաղկացեալ պարբերութեան մը մէջ, 1° Եթէ պարբերութեան գլխաւոր անդամներուն մէկը միւսէն կախում ունի, երկրորդական անդամները իրարմէ բութով կը զատուին, իսկ գլխաւոր անդամները՝ ստորակէտով, ղոր օրինակ.

Ինչ նիւթի վրայ որ կը ճառէն՝ ինչ խորհուրդ որ անոնց մտացը մէջ կը ծնանի՝ ինչ զգացումներ որ անոնց հոգին կը զբաւեն, այս ամէնը բոլոր պարագաներովն եղածին պէս կը բացատրեն։ Եթէ բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագիտութիւնը և առհասարակ բոլոր գիտութիւնք, աւելի կամ նուազ տարբերութեամբ, իրենց կատարելութեանը կը դիմեն՝ մինչդեռ բարոյականը հազիւ որոյէն ելած կը թուի, պատճառը սա է որ մարդիկ, ընկերութիւն ձեւանալով իրենք իրենց օրէնք և բարոյական տալու ստիպուած ըլլալնուն համար փորձառութեամբ բարոյականի սկզբունքներուն հասու չեղած, բարոյականի դրութիւն մը չինելու պարտաւորեցան։

2° Եթէ բաղադրեալ պարբերութեան գլխաւոր անդամներն իրարու հակադրեալ են, կամ մէկը միւսին հետեւութիւնն է, այն ատեն երկրորդական անդամներն իրարմէ ստորակէտով կը զատուին, իսկ գլխաւոր անդամները՝ միջակէտով, ղոր օրինակ.

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն դժտեալ չի կրնար մնալ, վերջապէս կը հաշտուի. բայց իր դգայմանցն ու կարծեացը հակառակ դգացում ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար

կ'աշխատի, ասանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին։

13. Հ. Քանի մը պարբերութենէ բաղկացեալ խօսքի մը մէջ պարբերութիւնները ի՞նչպէս կը բաժնուին։

Պ. Երբ խօսքի մը մէջ քանի մը պարբերութիւն կայ, եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները իրարմէ առատակէտով բաժնուած են, երկրորդ պարբերութեան ու առաջնոյն մէջտեղը միջակէտ կը դրուի. իսկ եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները միջակէտով բաժնուած են, յաջորդ պարբերութեան ու նախընթացին մէջտեղը վերջակէտ կը դրուի։ Այսպէս է հետեւեալ օրինակը.

Եթէ մեր նպատակները կամ դիտաւորութիւնները ուղիղ և մաքուր են, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. և եթէ չյաջողինք, չյաջողութեամբ ոչ թէ պատժուած՝ այլ ղրկուած կ'ըլլանք։ Բայց երբ մեր նպատակները թիւր և չար են՝ և յուսացուած յաջողութիւնը մեզ կը փախչի, ղրկող և պատժուած ենք միանգամայն. ղրկող ենք, քանզի մեր նպատակն անիրաւ է. պատժուած ենք, քանզի չյաջողութիւնը որ մաքուր և ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առ առաւելն տրտմութիւն մը կը բերէ՝ չարին և անիրաւին նաեւ յուսահատութիւն է։

14. Հ. Վերջակէտով գոցուած խօսք մը ի՞նչ կը կոչուի։

Պ. Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի՝ լրացեալ կամ ամբողջ խօսք կը կոչուի։

15. Հ. Գրութեան մը մէջ նոր տողով սկսուած մասերն ի՞նչ կը կոչուին։

Պ. Գրութեան մը չարունակութեանը մէջ այն մասերը որ նոր տողով (ալինէա) կ'սկսին, պարագրաֆ (փարակրաֆ) կը կոչուին։ Տողաբաժին մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուստի և տողաբաժնի մը մէջ որչափ վերջակէտով լրացած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ։

16. Հ. Խօսքին ո՛ր մասերն ամենաւին կէտանշանով չեն բաժնուիր։

Պ. Ամենաւին կէտանշանով չեն բաժնուիր

1° Երկու նոյնատեսակ բառեր որոնք ու, և, կամ, բայց և ուրիշ ասոնց նման չաղկապներով կապուած են ու յարակից մասեր չունին, զոր օրինակ.

Պատիժն ու մոլութիւնն անբաժին են։ Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ վրկութիւնը քու կորստանելդ կամ վրկութենէդ կախում ունի։ Մարդուս կիրքերն անոր ջնաւոտակար բայց սիրելի թշնամիներն են։

2° Կրկնուած չաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր, զոր օրինակ.

Ամէն տեղ ծաղկած կը տեսնենք ըն Պոմոնային պտուղները ըն Փլորային ընծաները։ Մի թողուր ու ագահութեան ու հպարտութեան զբեղ քարշ ածել։

3° Ոչ, ըն չաղկապներով սկսող խօսք մը որ նախընթաց բային խնդիրը է, զոր օրինակ.

Չենք ուզեր ոչ մէկը մեղ յանդիմանէ՝ քանզի ուղղուիլ չենք ուզեր։ Շողոքորթութենէ կը խոր-

ուինք, քանզի կը կարծենք ըե ուրիչներն այնչափ կույր են որ մեր մոլութիւնները չեն տեսներ։

17. Հ. Պարոյկն ի՞նչ է։

Պ. Պրոյնը (˚) հարցական նշան է և կը դրուի այն բառին վրայ, որուն վրայ կը զարնուի հարցման մէջ։

18. Հ. Երկարն ի՞նչ է։

Պ. Եբնարը (´) զարմացական նշան է և հոգւոյն մէկ կիրքը նշանակող բառերու վրայ կը դրուի։

19. Հ. Կախումն ի՞նչ է։

Պ. Կախումը երեք կէտ է (. . .) և կը գործածուի խօսքին պակաս կամ կիսատառ մնացած ըլլալը ցուցնելու համար։

20. Հ. Գիծն ի՞նչ է։

Պ. Գիծը (—) կը գործածուի նախ, հարցման ու պատասխանուոյ մէջտեղ, երբ կ'ըսէ, ըսաւ, պատասխան տուաւ, կրկնեց բառերը գործածուած չեն. երկրորդ, փակագծի տեղ։

21. Հ. Ջակերան ի՞նչ է։

Պ. Ջակերը (») երկու տորակէտ է, և խօսքի մը կամ ըլլալը ցուցնելու համար կը գործածուի։

22. Հ. Փակագիծ ի՞նչ է։

Պ. Փակագիծը երիու կիսաբոլորակ է () և բուն խօսքէն կը զատէ մէկ կամ քանի մը բառ կամ նաեւ ամբողջ նախադասութիւն մը որ խօսքին մարմինէն դուրս են, բայց անոր յաւելուածն։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Հայերէն Քերականութիւն 1
Մասն առաջին. Բառադիտութիւն 2
Գլ. Ա. Անուն 2
Տասաերկու կանոնաւոր հոլովմունք 8
Զարտուղի հոլովմունք 20
Անուանց հոլովիչներուն վրայ դիտելիք 22
Գլ. Բ. Ածական 31
Թուական ածականք 33
Թուականներուն տեղը 40
Անորոշ ածականք 42
Անորոշ ածականաց տեղը 45
Գլ. Գ. Դերանուն 46
Գլ. Դ. Նախադրութիւն կամ նախդիր 55
Գլ. Ե. Բայ 58
Զորս լծորդութեանց բայերուն կանոնաւոր ձեւը
Ա. Լծորդութիւն 63
Անցողական բայեր 71
Բ. Լծորդութիւն 74
Գ. Լծորդութիւն 80
Դ. Լծորդութիւն 86
Զորս լծորդութեանց ներգործական բայերուն կրբաւորական ձեւը 92
Զորս լծորդութեանց անկանոն բայերը 98
Ներգործական անկանոն բայերուն կրաւորականը 112
Դերբայներուն վրայ դիտելիք 117
Գլ. Զ. Մակբայ 119
Գլ. Է. Շաղկապ 127
Գլ. Ը. Միջարկութիւն 129
Մասն երկրորդ. Համաձայնութիւն 130
Գլ. Ա. Տէր բայի եւ Բայ 131

Պարզ տէր բայի 131
Բաղադրեալ տէր բայի 132
Դիտողութիւն 134
Տէր բային հոլովը 134
Գլ. Բ. Խնդիր և Խնդրառու 136
1. Գոյականներուն խնդիրը 137
2. Ածականներուն խնդիրը 139
3. Նախադրութեանց խնդիրները 142
4. Բայերուն խնդիրները 156
1. Սեռի խնդիր 157
2. Բնութեան խնդիր 158
Բայերուն տէր բայիներուն և խնդիրներուն վրայ դիտելիք 165
Գլ. Գ. Ստորոգելի և ստորոգեալ 166
Գլ. Դ. Բացայայտիչ և բացայայտեալ 171
Գլ. Ե. Կոչական 173
Ուրիշ մասանց բանի վրայ մասնաւոր դիտելիք
Ա. Գոյական անուն. Ձօդի գործածութիւնը . . 174
Բ. Ածական անուն. Ածականներուն աստիճանը 181
Գ. Դերանուն. 1. Ցուցական դերանուն . . . 186
2. Ստացական դերանուն 187
3. Յարաբերական դերանուն. Ո՛ր բառին գործածութիւնը 188
Գործածութիւն ա, ը, ն, դիրերուն 199
4. Անորոշ դերանուն. Ինչ բառին վրայ դիտելիք 202
Եմ բային վրայ դիտելիք 205
Դ. Բայ. 1. Բայերուն ժամանակներուն վրայ դիտելիք 208
2. Անեղեւոյթ 214
3. Անցեալ ընդունելութիւն 217
Ե. Նախադրութիւն 219
Զ. Մակբայ 223

Քանի մը գործածական մակբայներու վրայ դիտելիք 225
Է. Շաղկապ. Քանի մը գլխաւոր շաղկապներու վրայ դիտելիք 230
Մասն երրորդ. Շարադասութիւն 239
Ա. Բերականական կարգ 243
Բ. Ձեւաւոր կարգ 246
1. Արտաղրութիւն 246
Ա. Հարկաւոր արտաղրութիւն 247
Բ. Ազատ արտաղրութիւն 250
2. Ձեղչում 256
1. Ենթակայի կամ տէր բայիի ձեղչում . . . 257
2. Բայի ձեղչում 263
3. Խնդիրներու ձեղչում 267
3. Աւելաղրութիւն 277
4. Բակաղութիւն 286
Կէտադրութիւն 288
Նախադասութեան մասերուն համար կէտադրութեան կանոն 291
Պարբերութեան անդամներուն կէտադրութեան կանոն 296
Ցանկ գլխոց 301



2013 2524

ՀՀ Ազգային գրադարան
NL0060437

ՑԱՆԿ ԳՐՈՑ

Ի ԳՐԱՏԱՆ ՅՈՎՍԵՓԱՑ ԳԱՎԱՖԵԱՆ

(Հոս. մինչեւ 20 դրր. հաշուռնդրժ.)

	Դ.	Փ.
Ա.յլնաբան . Հ.ի գարան եւ Ընթերցարան		10
Աշխատութիւն Քաղ. Բնա. Գարագաշեան	5.	20
Աշխատութ. Ռուսմ. Բնա. Քաղ. Գ.ղարագաշ		
Աշխատութ. « « « Ս. Մ.ի.ալ		
Գրագիտութիւն առնիւն Ե. Մուրատ.ան		
Գեղագրութ.ի Նուրհան Հայ. Գ.ղ. Շ.ղ		
Գեղագրութիւն Ծոսկուայի տրու		
Երգարան նոր համ. Գնաց Հայաստանի		
Ընթերցարան գրա.ասիարակ. Գարագաշ.		
Ընթերցան.ան գրա.ասիարակ. Գ. Փափազ		
Ընթերցան.ան գրա.ասիարակ Ե. Գազանճեան		10
Ընթերցարան Ա. Ե. Գ. մաս		
Հաշուպարզ ընդհանուր նախնական Տ.ղղ.	—	45
Հեգեան	1	20
Մանր ուսումնք Քրիստոնէական Գ. Մարկոս.	2	
Նոր ընծայք գրաբառ լեզուի Գարագեան	4	
Պատմ. Սրբազան Ա. Փափազեան	5	
Պարտք Տղայոց	1	
Պատմ. Սրբազան Ա. Գարագաշ.	1	
Սկզբունք դաստիարակութեան Ա. հար.	2	
Բազգամ Շէքսպէլի	7	
Փոքրիկ բարեուղար կամ Աստուածրեմի	6	
Վերականգնիչ գործնական արդ.ղ.	6	
ընդարձակ «	3	
«	2	
Վեր.ղ.		
Վերա.ղ. Գազրի-		
երէն	20	
Վերականգնիչ շ. .ղ.ղէն		
« .ղ. Հայ.	7	
« «	4	20
Վերականգնիչ բազմապատիկ ար. .ղ.ղենարան	—	50
Վերծիւն կամ Ա.ղենարա. .ղն տղոյ		7